



Համայնքների
ֆինանսիստների միավորում



ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(2014թ.)

Գիրք 7

Խմբագրությունը՝ ՏՆՏ. ԳԻՏ. ԹԵԿՆԱԾՈՒ
ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ

«ՎՃՆ ԱՌՅՆ»
2015

Սույն գիրքը հրատարակվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ՀՏԴ 352.075(479.25)
ԳՄԴ 67.401 (53)
S 300

S 300 **Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2014թ.)**,
Գիրք 7/խմբ. Դավիթ Թումանյանի - Եր., 2015, 200 էջ:

Գիրքը պարունակում է Հայաստանի տեղական ինքնակառավարման վիճակի մշտադիտարկման 2014 թվականի զեկույցը:

Գիրքը նախատեսված է ապակենտրոնացման և տեղական ինքնակառավարման բնագավառներում քաղաքականություն մշակողների ու որոշումներ ընդունող պաշտոնյաների, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, այդ բնագավառներով հետաքրքրվող հասարակության լայն խավերի համար:

ՀՏԴ 352.075(479.25)
ԳՄԴ 67.401 (53)

© Համայնքների ֆինանսիստների միավորում
© Դավիթ Թումանյան

ISBN 978-9939-70-140-0

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 7

ՁԵԿՈՒՅՑ

Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2014թ.)..... 9

1. Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրավական և ծրագրային գնահատումը 10

1.1 Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրավական գնահատումը 10

1.2 Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ծրագրային գնահատումը 12

1.3 Արտաքին պարտավորությունների կատարումը 17

2. Վարչատարածքային բարեփոխումները և միջհամայնքային համագործակցությունը..... 19

2.1 Վարչատարածքային բարեփոխումները 19

2.2 Սիջհամայնքային համագործակցությունը 22

3. ՏԻՄ-երի ձևավորումը, իրավասությունները, լիազորությունները և գործունեությունը, քաղաքացիական հասարակության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը 23

3.1 ՏԻՄ-երի ձևավորումը, իրավասությունները, լիազորությունները և գործունեությունը 23

3.2 Քաղաքացիական հասարակության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը 32

4. Համայնքների սեփականությունը, զարգացման ծրագրերը և ֆինանսական անկախությունը..... 37

4.1 Համայնքների սեփականությունը 37

4.2 Համայնքների զարգացման ծրագրերը և բյուջետավարումը 41

4.3 Համայնքի բյուջեի եկամուտները..... 42

4.4 Պարտքի կառավարումը..... 48

4.5 Ֆինանսական հաշվետվողականությունը 48

5. ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքի ֆինանսական միջոցների համապատասխանությունը 49

6. Համայնքի խնդիրներին վարչական կառուցվածքների, մարդկային և տեղեկատվական ռեսուրսների համապատասխանությունը, միջազգային աջակցությունը 66

6.1 ՏԻՄ-երի և համայնքների աշխատակազմերի ընդհանուր կարողությունները 66

6.2 Համայնքային ծառայությունը 71

6.3. Համայնքային ծառայողների վերապատրաստումը 73

6.4 Սիջազգային աջակցությունը 74

7. Համայնքային ծառայությունների մատուցումը 79

7.1 Համայնքների կողմից մատուցվող հանրային ծառայությունները 79

7.2 Համայնքային ծառայությունների կառավարում 93

Եզրակացություններ և առաջարկություններ 95

Գրականություն 100

Հաղավումների ցանկ

- ԱԱՊԿ-** առողջության պահպանման կենտրոն
ԱԶԲ- Ասիական զարգացման բանկ
ԱԻՄ- Ազգային ինքնորոշում միավորում
ԱՄՆ- Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՆ ՄԶԳ- Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԲԹ- բնակչության թիվը
ԲՀԿ- Բարգավաճ Հայաստան կուսակցություն
ԵԽ- Եվրոպայի խորհուրդ
ԵԽ ՏԻԵԽ- Եվրոպայի խորհրդի Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիա
ԵՀՀ- Եվրասիա համագործակցություն հիմնադրամ
ԵՀԲ- Եվրոպական հարևանության քաղաքականություն
ԵՄ- Եվրոպական միություն
ԵՄԱ- Երևանի մամուլի ակումբ
ՁԼՄ- զանգվածային լրատվության միջոցներ
ԺԱԿ- Ժողովրդավարություն և աշխատանք կուսակցություն
ԿԿԹԿ- կոշտ կենցաղային թափոնների կառավարում
ՀԶԶԾ- համայնքի զարգացման քառամյա ծրագիր
ՀԿ- հասարակական կազմակերպություն
ՀԿԿ- Հայաստանի կոմունիստական կուսակցություն
ՀԿՏՀ- համայնքային կառավարման տեղեկատվական համակարգեր
ՀՀ- Հայաստանի Հանրապետություն
ՀՀԿ- Հայաստանի Հանրապետական կուսակցություն
ՀՀՄ- Հայաստանի համայնքների միություն
ՀՅԴ- Հայ յեղափոխական դաշակցություն
ՀՆԱ- համախառն ներքին արդյունք
ՀՈԱԿ- համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՀՊԹ- համայնքային պաշտոնների թիվը
ՀՌԿԿ- Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն
ՀՄՆՀ- Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ
ՀՖՄ- Համայնքների ֆինանսիստների միավորում

ՄԱԿ- Միավորված ազգերի կազմակերպություն
ՏԱ- տեխնիկական աջակցություն
ՏՁԾ- տարածքային զարգացման ծրագիր
ՏԻՄ- տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏԻ- տեղական ինքնակառավարում
ՏԿԱԻՆ- Տարածքային կառավարման և արտակարգ
իրավիճակների նախարարություն
ՏՀԶՎԿ- Տեղեկատվական համակարգերի զարգացման և
վերապատրաստման կենտրոն
ՏՀՏ- տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ
ՓԾԹ- փաստացի ծառայողների թիվը
ՓՄՁ- փոքր և միջին ձեռնարկություններ
ՓԲԸ- փակ բաժնետիրական ընկերություն
ՔԶՆՊ- քաղաքային զարգացման/ներդրումային պլաններ
ՔՀԿ- քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՕԵԿ- Օրինաց երկիր կուսակցություն



ԱՌԱՋԱԲԱՆ

Այս գիրքը նվիրված է Հայաստանում տեղական ինքնակառավարման 2014 թվականի բարեփոխումների գնահատմանը, որը կատարվել է Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) փորձագետների մշակած մեթոդաբանության հիման վրա: Բարեփոխումների գնահատման համար հիմք են ընդունվել ՀՀ կառավարության ծրագրերի՝ տեղական ինքնակառավարմանը վերաբերող դրույթների կատարումը, տեղական ինքնակառավարման համակարգի վիճակը բնութագրող ցուցանիշները, ՏԻՄ-երի կատարած աշխատանքները և միջազգային կազմակերպություններում Հայաստանի ստանձնած՝ տեղական ինքնակառավարմանը վերաբերող պարտավորությունների կատարումը:

ՀՖՄ-ն մասնակցում և հետևում է Հայաստանում տեղական ինքնակառավարման բարեփոխումների ընթացքին այդ համակարգի ներդրման սկզբից՝ 1996 թվականից: Անցած տարիների ընթացքում ՀՖՄ-ն հրատարակել է վեց գիրք, որոնցում տրվել է բարեփոխումների ընթացքի գնահատականը, ինչպես նաև՝ արվել են բարեփոխումների շարունակմանը վերաբերող բազմաթիվ առաջարկություններ: Առաջին՝ «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում. Քաղաքականության տարբերակներ և ուղիներ» (տնտ. գիտ. թեկնածու Դ. Ս. Թումանյանի խմբագրությամբ) գիրքը հրատարակվել է 2004-ին: Այդ հրատարակությունում տեղ են գտել 1996-ից մինչև 2004 թվականն ընկած ժամանակահատվածում տեղական ինքնակառավարման բարեփոխումների ընթացքը լուսաբանող հոդվածներ:

Երկրորդը՝ «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2004–2006 թթ.)», գիրք 2 (տնտ. գիտ. թեկնածու Դ. Ս. Թումանյանի խմբագրությամբ) վերնագրով հրատարակվել է 2008-ին: Սա վերաբերում է 2004-2006 թթ. տեղական ինքնակառավարման բարեփոխումների գնահատականին:

Երրորդը՝ «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2007 և 2008թթ.)», գիրք 3 (տնտ. գիտ. թեկնածու Դ. Ս. Թումանյանի խմբագրությամբ) վերնագրով հրատարակվել է 2009-ին: 2007 թվականից սկսած ՀՖՄ-ն տեղական ինքնակառավարման բարեփոխումների գնահատումը կատարում և հանրությանն է ներկայացնում զեկույցների ձևով: Դրանք կազմված են նույն ձևաչափով և պարունակում են բարեփոխումների գնահատականներն ըստ տեղական ինքնակառավարման առանձին բնագավառների. վարչատարածքային բաժանում և միջհամայնքային համագործակցություն,

համայնքային սեփականություն, ֆինանսներ, ՏԻՄ-երի ընտրություններ և գործունեություն, տեղական ժողովրդավարություն, վարչական կառուցվածքներ և համայնքային ծառայությունների մատուցում:

Չորրորդը՝ «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2009 և 2010թթ.)», գիրք 4 (տնտ. գիտ. թեկնածու Դ. Ս. Թումանյանի խմբագրությամբ) վերնագրով հրատարակվել է 2011-ին:

Հինգերորդը՝ «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2011թ.)», գիրք 5 (տնտ. գիտ. թեկնածու Դ. Ս. Թումանյանի խմբագրությամբ) վերնագրով հրատարակվել է 2012-ին:

Վեցերորդը՝ «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2012թ. և 2013թ.)», գիրք 6 (տնտ. գիտ. թեկնածու Դ. Ս. Թումանյանի խմբագրությամբ) վերնագրով հրատարակվել է 2015-ին:

Այս գիրքը Հայաստանում տեղական ինքնակառավարման բարեփոխումների վերաբերյալ ՀՖՄ-ի յոթերորդ հրատարակությունն է:

Գրքում, բացի Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումների ընթացքի լուսաբանումից, տեղ են գտել նաև այդ ոլորտում առկա հիմնախնդիրները և արվել են դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ:

ՁԵԿՈՒՅՉ

Տեղական ինքնակառավարումը Հայաստանում
(2014թ.)

Ձեկույցը պատրաստել են ՀՖՄ-ի փորձագիտական խմբի անդամներ
Դավիթ Թումանյանը, Վահրամ Շահբազյանը,
Զնարիկ Այվազովան (Արարյանը), Լևոն Թումանյանը,
Վահե Սարգսյանը և Գրիշա Գապոյանը

1. Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրավական և ծրագրային գնահատումը

1.1 Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրավական գնահատումը

Սահմանադրական դրույթների օրենսդրական արձագանքումը

Մինչև 2014 թվականի սկիզբը 2005 թվականի սահմանադրական փոփոխություններով նախատեսված որոշ դրույթներին համապատասխան օրենսդրական փոփոխություններ չէին կատարվել կամ կատարվել էին մասնակիորեն: Դրանց թվում էին՝

- ա) Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով սահմանում է տեղական հարկեր (հոդված 107):
- բ) Համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման կարգը սահմանվում է օրենքով (հոդված 107):
- գ) Համայնքների միավորման կամ բաժանման սկզբունքները, կարգը, ինչպես նաև նոր ձևավորված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամկետները սահմանվում են օրենքով (հոդված 110):
- դ) Օրենքով սահմանված կարգով կարող են ստեղծվել միջհամայնքային միավորումներ (հոդված 110):

2014 թվականին էլ համայնքների ավագանիներին հնարավորություն չի տրվել սահմանել տեղական հարկեր: Ըստ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ 2011-ին տեղական հարկեր էին սահմանված գույքահարկը, հողի հարկը և հյուրանոցային հարկը: «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքները գործում են վաղուց, և դրանցով են սահմանված այդ հարկերի դրույքաչափերը, չնայած դրանք անվանվել են տեղական հարկեր, իսկ համաձայն Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի՝ դրանց «...դրույքաչափերը տեղական ինքնակառավարման մարմիններն իրավասու են սահմանել օրենքով նախատեսված շրջանակներում»¹: Այս առումով, վերը նշված օրենքների որոշ դրույթներ հակասում են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիային, քանի որ տեղական հարկ անվանված գույքահարկի և հողի հարկի դրույքաչափերի սահմանման իրավունքը չի տրվել ՏԻՄ-երին: Համայնքի ավագանուն է տրվել միայն հյուրանոցային հարկի դրույքաչափի սահմանման իրավունքը, սակայն 2013-ի ընթացքում էլ չընդունվեց «Հյուրանոցային հարկի մասին» ՀՀ օրենքը², որը հնարավորություն

¹ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, հոդված 9.3:

² Դեռևս 2009-ի տարեվերջին ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը ՀՀ կառավարություն էր ներկայացրել ՀՖՄ-ի մշակված «Հյուրանոցային հարկի մասին» ՀՀ օրենքի նախագիծը: 2010-ին ՀՀ կառավարությունը դա ետ էր ուղարկել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն՝ շահագրգիռ կողմերի հետ լրացուցիչ քննարկելու համար: Քննարկումների արդյունքում, չնչին փոփոխություններով, ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը նախագիծը տարվա վերջին կրկին ներկայացրել էր ՀՀ կառավարություն, սակայն օրինագծին ընթացք չի տրվել:

կտար համայնքների ավագանիներին՝ գործնականում իրացնել այդ իրավունքը:

Համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման կարգերն՝ այդ թվում, պարտադիր և պատվիրակված լիազորությունների մասով, օրենքով սահմանելու հետ կապված՝ 2014-ին զարգացումներ չեն գրանցվել:

2014թ. որևէ էական քայլ չարվեց համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման ուղղությամբ: Չընդունվեց նաև օրենք կամ գործող օրենքներում չկատարվեցին լրացումներ համայնքների միավորման կամ բաժանման սկզբունքների և կարգի վերաբերյալ: Չընդունվեց նաև միջհամայնքային միավորումների մասին օրինագիծը:

Այսպիսով, սահմանադրական փոփոխություններով նախատեսված օրենսդրական փոփոխությունների իրականացման աշխատանքները 2014-ին, նախորդ տարվա նման, գրեթե չեն շարունակվել և արդյունքներ չեն արձանագրվել:

2014-ին չի ընդունվել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով (հոդված 59) և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով (հոդված 30) նախատեսված համայնքային արժեթղթերի մասին օրենքը:

Տեղական ինքնակառավարմանը վերաբերող օրենքների փոփոխությունները և լրացումները

2014 թվականին տեղական ինքնակառավարմանը վերաբերող նոր օրենքներ չեն ընդունվել³, գործող օրենքներում կատարվել են մի շարք փոփոխություններ ու լրացումներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ և լրացումներ՝ Ազգային ժողովի կողմից ընդունված երկու օրենքներով: 2014թ. հունիսի 21-ին ընդունված օրենքով փոփոխություններ և լրացումներ կատարվեցին համայնքի ղեկավարի գյուղատնտեսության և անասնաբուժության ու բուսասանիտարիայի բնագավառներում ունեցած լիազորություններում (տես՝ բաժին 3.1), իսկ ղեկտեմբերի 17-ին ընդունված օրենքով վերասահմանվեցին համայնքի ղեկավարի լիազորությունները աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառում (տես՝ բաժին 3.1):

«Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ են կատարվել ղեկտեմբերի 17-ին ընդունված օրենքով (տես՝ բաժին 3.1-ը), որով հնարավորություն է ստեղծվել համայնքների միավորման հետ կապված տեղական հանրաքվեների անցկացումը: Դա փաստորեն համայնքների միավորման գործընթացին վերաբերող առաջին իրավական ակտն է:

Երկու փոփոխություն է կատարվել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքում (տես՝ բաժին 4.1-ը):

Լրացումներ և փոփոխություններ են կատարվել «Հայաստանի Հանրապետութ-

³ Տեղական ինքնակառավարմանը վերաբերող մի քանի դրույթներ են պարունակում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (տես՝ բաժին 3.1-ը) և «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ նոր օրենքները (տես՝ բաժին 4-ը):

յան վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում (տես՝ 2-րդ բաժինը):

Լրացում և փոփոխություններ են կատարվել «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում (տես՝ բաժին 3.1-ը):

ՀՀ տարածքային կառավարման նախարարության նախաձեռնությամբ լրացում է կատարվել «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի հրամանագրում. մարզխորհուրդների դերակատարումը բարձրացնելու նպատակով ավելացվել է նոր գլուխ՝ վերջիններիս գործառույթների նկարագրման վերաբերյալ: Այդ լրացումներով մարզխորհրդին վերապահվել է ուղերձներ ընդունելու իրավասություն, սահմանվել են մարզխորհրդի նիստերի անցկացման հաճախականությունը, թափանցիկությունն ու հրապարակայնությունը, ընդլայնվել են մարզխորհրդի նիստի քննարկմանը ներկայացվող հարցերի շրջանակները, մասնավորապես՝ նախատեսելով պարտադիր քննարկման առարկա դարձնել մարզի կարճաժամկետ և երկարաժամկետ բյուջետային հայտերը, մարզի զարգացման ծրագրերը և այլն:

1.2 Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ծրագրային գնահատումը

2014-ին շարունակել է գործել 2013թ. մայիսի 23-ին ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած ՀՀ կառավարության ծրագիրը (տես՝ «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում», 2013թ., գիրք 6), որի տեղական ինքնակառավարմանը նվիրված բաժնում տեղ գտած նախորդ ծրագրից չիրականացված որոշ դրույթներ՝ մասնավորապես, միջհամայնքային միավորումների ձևավորումը և համայնքների խոշորացումը, ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների տեսականու ավելացումը, ինչպես նաև նոր դրույթները (օրինակ, շարունակել ապակենտրոնացման գործընթացը, բարձրացնել համայնքների ֆինանսական հնարավորությունները, համայնքներում ներդնել առևտրային բանկերից և այլ ֆինանսական կառույցներից փոխառության ներգրավման արդյունավետ մեխանիզմներ, իրականացնել տեղական մակարդակում որոշումների ընդունմանը և հանրային կառավարմանը քաղաքացիների մասնակցության խթանումն ապահովող միջոցառումներ և այլն) այդպես էլ չիրականացվեցին:

2014թ. մայիսի 22-ին ՀՀ Ազգային ժողովի հավանությանն է արժանացել ՀՀ նոր կառավարության ծրագիրը (ներդիր 1), որի համար ուղեմիջ են հանդիսացել Եվրոպայի խորհրդի տարածքային և տեղական իշխանությունների կոնգրեսի «Տեղական ժողովրդավարությունը Հայաստանում» 2014թ. գեկույցից բխող դրույթները: Ծրագիրը նաև ներառում է նախորդ ծրագրից չիրականացված մի շարք դրույթներ: Մակայն մինչև տարվա վերջ այդ ծրագրից իրականացվել է միայն համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերի մշակումը:

ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի N 442 – Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը (ներդիր 2)

և նույն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի «Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 1207-Ն որոշումը: Այդ ծրագրում անդրադարձ է կատարվել Կայուն զարգացման ծրագրին (որը փաստորեն չի կատարվել – Դ.Թ.) և ընդամենը նշվել են այն պատճառները, որոնք առաջացրել են դրա վերանայման անհրաժեշտությունը: Նոր ծրագիրը լայնորեն անդրադարձել է տեղական ինքնակառավարմանը: Բացի նրանից, որ ծրագրում տեղ են գտել ՀՀ կառավարության նախորդ և գործող ծրագրերի չկատարված դրույթներ, ավելացվել են նաև մի շարք նոր դրույթներ՝ մասնավորապես, համայնքների խոշորացման արդյունքում համամասնական ընտրական համակարգի աստիճանական ներմուծումը, փոփոխությունների փաթեթի նախապատրաստումը՝ ՀՀ Սահմանադրության տեղական ինքնակառավարման առնչվող 7-րդ գլխի վերանայման համար, Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի ՀՀ-ի կողմից դեռևս չստորագրված դրույթների ստորագրման գործընթացի նախաձեռնումը և այլն: Մնում է հետևողականորեն կատարել այդ ծրագիրը, որը կնպաստի տեղական ինքնակառավարման զարգացմանը:

Ներդիր 1. Հատված ՀՀ կառավարության 2014-ին ընդունված ծրագրից (2.5.2. Տեղական ինքնակառավարումը)

- ա) բարձրացնել համայնքների ֆինանսական հնարավորությունները՝ ապահովելով նրանց բյուջեների մուտքերի կայունությունը, այդ թվում՝ ընդունել տեղական տուրքերի և վճարների հայեցակարգը, մշակել և ընդունել հայեցակարգի կիրարկման անհրաժեշտ իրավական ակտերը, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի շեմի հետևողական բարձրացմամբ պայմանավորված՝ համայնքներին տրամադրել համապատասխան ֆինանսական օժանդակություն.
- բ) շարունակել ապակենտրոնացման գործընթացը, ավելացնել ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների տեսականին՝ միաժամանակ համայնքներում բարձրացնելով դրանց որակը.
- գ) իրականացնել համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերը.
- դ) համայնքների խոշորացման գործընթացին զուգընթաց՝ վերանայել տեղական ինքնակառավարման բնագավառի օրենսդրությունը, մշակել .Տեղական ինքնակառավարման մասին ե ՀՀ նոր օրենք.
- ե) ապահովել համայնքի ղեկավարի կողմից ընդունվող որոշումների ու գործունեության նկատմամբ արդյունավետ վերահսկողության մեխանիզմներ.
- զ) բարձրացնել ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունը.
- է) շարունակել ավագանու ինստիտուտի կատարելագործմանն ու դերի բարձրացմանն ուղղված քայլերը, ավագանու ձևավորման գործընթացում ավելացնել քաղաքական բաղադրիչը.
- ը) մշակել ֆինանսական համահարթեցման նոր համակարգի ներդրման օրենսդրական հիմքերը՝ սահմանելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրամադրվող դոտացիաների առավել արդյունավետ մեխանիզմ, որի արդյունքում տրամադրվող դոտացիաները կդառնան ավելի հասցեական.
- թ) նախաձեռնել տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի ՀՀ-ի կողմից վերապահումով ստորագրված դրույթների ամբողջական կիրառման գործընթացը.
- ժ) շարունակել միջազգային կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության միջև համագործակցությունը՝ տեղական ինքնակառավարման ոլորտի հետագա զարգացմանն ուղղված գործողությունները.
- ի) խրախուսել կանանց ակտիվ մասնակցությունը ՏԻՄ-երում.
- յ) իրականացնել տեղական մակարդակում որոշումների ընդունմանը և հանրային կառավարմանը քաղաքացիների մասնակցության խթանումն ապահովող միջոցառումներ.
- խ) խթանել տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման նպատակով ՏԻՄ-երի կարողությունների զարգացումը, համայնքներում տեղեկատվական հասարակության ձևավորումը:

Տեղական ինքնակառավարման ոլորտի զարգացման համար դասասխանատու տեսական մարմինների գործունեության գնահատումը

Տեղական ինքնակառավարման ոլորտի բարեփոխումների ու զարգացման համար պատասխանատու պետական մարմիններն են՝ ՀՀ Ազգային ժողովը և կառավարությունը:

ՀՀ Ազգային ժողովի Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովը 2014 թվականին շարունակել է նախորդ տարիներին որդեգրած աշխատանքները, այն է՝ կազմակերպել օրենքների նախագծերի լուծման, գումարել նիստեր և Ազգային ժողովի լիազույնար նիստերի օրակարգերում ընդգրկելու համար հավանություն տալ տեղական ինքնակառավարմանը վերաբերող օրինագծերի: Հանձնաժողովը, նախորդ տարիների նման, բավարարվել է ՀՀ կառավարության ներկայացրած օրինագծերի քննարկումների կազմակերպմամբ ու դրանց ընթացք տալով և նախաձեռնություն չի ցուցաբերել տեղական ինքնակառավարման վերաբերյալ օրինագծերի մշակման ուղղությամբ:

Ներդիր 1. Հատված ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրից

- 1) ՏԻ ոլորտում համաչափորեն կիրառել միջազգային փորձը, այդ թվում՝ ԵԽ ՏԻԵԽ-ն, իշխանության ապակենտրոնացման փորձը՝ դրանց վերլուծության, տեղայնացման և ներդրման միջոցով:
- 2) Համաչափորեն լուծել ՏԻ համակարգի զարգացման և իշխանության ապակենտրոնացման գերակա խնդիրները՝ վարչական և հարկաբյուջետային (ֆիսկալ) ապակենտրոնացումը, ՏԻՄ-երի հզորացումն ու տեղական ժողովրդավարության զարգացումը՝ օրենսդրության կատարելագործման և ինստիտուցիոնալ, այդ թվում՝ վարչատարածքային բարեփոխումների ու իրավական նորմերի հետևողական կիրարկման միջոցով:
- 3) Չգալիորեն բարձրացնել ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը, հստակեցնել համայնքի քառամյա զարգացման ծրագրի կատարման, համայնքի ղեկավարի հաշվետվությունը կազմելու, ավագանու քննարկմանն ու հաստատմանը ներկայացնելու և հրապարակելու օրենսդրական պարտադիր պահանջի կատարման վերաբերյալ ներքին և արտաքին վերահսկողության ընթացակարգերը:
- 4) Իրականացնել տեղական մակարդակում որոշումների ընդունմանը և հանրային կառավարմանը քաղաքացիների մասնակցության խթանումն ապահովող միջոցառումներ: ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության բարձրացման նպատակով կներդրվեն համայնքի անդամների և համայնքային քաղաքացիական հասարակության ինստիտուտների իրազեկման, նրանց հետ խորհրդակցությունների և հետադարձ կապի մեխանիզմները, ինչպես նաև կկայանա հանրային վերահսկողության ինստիտուտը:
- 5) Բարձրացնել համայնքների ֆինանսական անկախությունը և ինքնուրույնությունը՝ ապահովելով նրանց բյուջեների մուտքերի կայունությունը և բազմազանությունը:
- 6) Ապահովել ՏԻՄ-երի պարտադիր եւ պետության կողմից պատվիրակված լիազորությունների և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների համապատասխանությունը:
- 7) Ներդնել ֆինանսական համահարթեցման նոր համակարգ՝ սահմանելով ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրամադրվող դուտագիաների առավել արդյունավետ մեխանիզմ:
- 8) Բարձրացնել համայնքների ֆինանսական կառավարման օրինակաչափությունը, արդյունավետությունը, թափանցիկությունը, հրապարակայնությունը և հաշվետվողականությունը:
- 9) Բնակչությանը մրցակցային սկզբունքով կոմունալ ծառայություններ մատուցելու և դրանց որակը բարձրացնելու նպատակով համապատասխան պիլոտային ծրագրերի մշակումն ու իրականացումը:

- 10) Համայնքների խոշորացման արդյունքում համամասնական ընտրական համակարգի աստիճանական ներմուծումը:
- 11) Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման նպատակով ՏԻՄ-երի կարողությունների զարգացումը, համայնքներում տեղեկատվական հասարակության ձևավորումը և էլեկտրոնային մասնակցությանն խթանումը, համայնքներում ՏՀՏ ներդրման գործում պետական, մասնավոր և միջազգային ռեսուրսների ներգրավումը, համայնքներում ՏՀՏ ներդրման օրենսդրական, նորմատիվ մեթոդական կարգավորումը:
- 12) Համայնքներում գնումների իրականացման գործընթացի կատարելագործում, վերահսկելիության պարզեցում:
- 13) Համայնքի ղեկավարի կողմից ընդունվող որոշումների ու գործունեության նկատմամբ արդյունավետ վերահսկողության մեխանիզմի ապահովում:
- 14) Ծարուհանկել ԵԽ-ի և ՀՀ-ի միջև համագործակցությունը՝ ՏԻ ոլորտի հետագա զարգացմանն ուղղված գործողությունների ծրագրի շրջանակներում, որի իրականացմանը մեծապես կնպաստի Դանիայի կառավարության կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը» ծրագիրը:
- 15) Նախապատրաստել փոփոխությունների փաթեթ՝ ՀՀ Սահմանադրության տեղական ինքնակառավարմանն առնչվող 7-րդ գլխի վերանայման համար:
- 16) Նախաձեռնել Տեղական ինքնակառավարման Եվրոպական Խարտիայի ՀՀ-ի կողմից դեռևս չստորագրված դրույթների ստորագրման գործընթացը:
- 17) Ձեռնարկել միջոցներ՝ սուբսիդիարության սկզբունքի առավել արդյունավետ իրականացման և տեղական իշխանությունների կողմից իրենց պատասխանատվությամբ և բնակչության շահերից ելնելով հանրային հարցերի զգալի մասի կարգավորման և կառավարման լիազորությունների փոխանցման նպատակով:
- 18) Մեծացնել համայնքի ավագանիների կարողությունները իրենց լիազորություններին վերաբերող բոլոր հարցերում, որպեսզի զարգանան համայնքների արդյունավետ վարչական կարողությունները և ամրապնդվի նրանց դերը գործադիր իշխանության հետ հարաբերություններում:
- 19) Հստակեցնել ՏԻ շրջանակներում գտնվող խնդիրների ու գործառույթների բնույթը և ամրապնդել տեղական իշխանությունների դիրքը՝ վերջիններիս վերապահելով կարևորագույն տեղական նշանակության խնդիրների կարգավորման իրավասությունը:
- 20) Ջարգացնել կենտրոնական և տեղական իշխանությունների, տեղական իշխանությունների ազգային ասոցիացիաների հետ պաշտոնական խորհրդատվական մեխանիզմները:
- 21) Համայնքների ինքնուրույնության աստիճանը բարձրացնելու նպատակով՝ կատարելագործել ՏԻՄ-երի կողմից տեղական հարկերի սահմանման մեխանիզմները:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը՝ տեղական ինքնակառավարման ոլորտի պետական լիազորված մարմինը, 2014 թվականին աշխատանքներ է տարել մշակված օրենքների նախագծերի քննարկումներ կազմակերպելու, լրանշակելու և սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացնելու ուղղությամբ (տես նաև սույն զեկույցի 1.1 բաժինը):

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը 2014 թվականին շարունակել է համայնքների վարչական հսկողության ինստիտուտի զարգացումը: Հսկողության արդյունքների հիման վրա շարունակվել են կազմվել եռամսյակային հաշվետվություններ, որոնք տեղադրվել են նախարարության ինտերնետային կայքում:

2014թ. ընթացքում ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը բոլոր մարզերում՝ թվով 320 համայնքներում⁴, կատարել է ուսումնասիրություններ համայնքների բյուջեների կազմման, հողի հարկի և գույքահարկի բազաների վարման,

⁴ <http://www.mta.gov.am/files/docs/942.pdf>:

հարկատուների հետ տարվող աշխատանքների ուսումնասիրման նպատակով:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը շարունակել է աշխատանքները համայնքների խոշորացման ուղղությամբ՝ մշակվել է համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերի փաթեթը, կատարվել են հանրային իրազեկման աշխատանքներ խոշորացվող համայնքներում, կազմակերպվել են քննարկումներ մարզային և համայնքային պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը շարունակել է աշխատանքները համայնքային ծառայության ինստիտուտի զարգացման ուղղությամբ, մասնավորապես, կատարվել են ուսումնասիրություններ, որոնց հիման վրա հայտնաբերված թերությունները ներկայացվել են համայնքների ղեկավարներին դրանք վերացնելու համար:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը 2014թ. նոյեմբերի 7-8-ը Ջերմուկ քաղաքում կազմակերպել է գյուղական համայնքների 4-րդ համաժողովը: Համաժողովին մասնակցել են պետական կառավարման մարմինների, համայնքների հետ աշխատող տարբեր միջազգային և տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ: Համաժողովի ընթացքում ներկայացվել են զեկուցումներ, քննարկվել են տեղական ինքնակառավարմանը վերաբերող բազմաթիվ հարցեր:

Տարվա ընթացքում ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը շարունակել է արդյունավետ համագործակցությունը միջազգային և տեղական կազմակերպությունների հետ:

Շարունակվել է նախարարության հրապարակային և թափանցիկ աշխատանքի բարելավումը: Տարվա ընթացքում ավելի են ուժեղացել նախարարություն – համայնքներ գործնական կապերը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին 2014թ. նոյեմբերի 17-ի ՀՀ օրենքով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՆՀ-602-Ն հրամանագրի համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը վերակազմակերպվել է՝ միացվելով ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը, իսկ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը վերանվանվել է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության: Ի՞նչ կտա այդ փոփոխությունը, պարզ կլինի հետագա տարիներին:

1.3. Արժանատի տարազանությունների կասարումը

Հայաստանը, որպես Եվրոպայի խորհրդի անդամ երկիր, որոշ պարտավորություններ ունի այդ կազմակերպության առջև՝ այդ թվում նաև տեղական ինքնակառավարման հարցերում: Պարտավորությունները վերաբերում են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքները (խարտիան Հայաստանի օրենսդրության մաս է կազմում 2002թ. մայիսի 1-ից) և Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի հանձնարարականները Հայաստանի օրենսդրությունում ներառելուն և դրանց համապատասխան մեխանիզմները փաստացի կիրարկելուն: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքների գործնական կիրարկման մասով Հայաստանում 2014-ին առաջընթաց չի արձանագրվել:

2013-ին Հայաստանը միացել է նաև Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրությանը: Նույն տարվա հունիսին ընդունվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքը, որը վերաբերում էր տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցությանը: Սակայն 2014-ին գործնականում գրեթե չապահովվեց օրենսդրական դրույթների կիրարկումը:

2014-ին շարունակում էր գործել 2011թ. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1138-րդ հանդիպմանը հավանության արժանացած Եվրոպայի խորհուրդ - Հայաստանի կառավարություն 2012-2014թթ. գործողությունների ծրագիրը, որի դրույթներից մեկը տեղական ինքնակառավարման բարեփոխումներին աջակցությունն է:

2014-ի մարտի 26-ին Եվրոպայի խորհրդի տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը ընդունեց «Տեղական ժողովրդավարությունը Հայաստանում» զեկույցը և հանձնարարական N351-ը, որում նշված են տեղական ինքնակառավարման ոլորտում առկա բազմաթիվ թերություններ և առաջարկություններ են արվել դրանք վերացնելու համար (դրանք հիմնականում համընկնում են ՀՖՄ-ի զեկույցներում տեղ գտած թերություններին և առաջարկություններին – Գ.Թ.):

Հայաստանը, ընդգրկված լինելով Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) և Արևելյան գործընկերության մեջ, որոշ պարտավորություններ ունի նաև Եվրամիության հանդեպ: Եվրամիություն-Հայաստան ԵՀՔ գործողությունների ծրագրում որոշ դրույթներ են ամրագրված նաև տեղական ինքնակառավարման վերաբերյալ, որոնք Հայաստանի պարտավորություններն են՝ այդ ծրագրի իրականացման համատեքստում:

Նշված ծրագրի իրականացմանն են ուղղված ՀՀ Նախագահի 2014թ. ապրիլի 23-ի ՆԿ- 53-Ա կարգադրությամբ սահմանված ԵՀՔ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2014-2015թթ. միջոցառումների ցանկը՝ ըստ տարիների (աղյուսակ 1): 2014-ի համար նախատեսված է մասնակցություն Արևելյան

գործընկերության շրջանակներում իրականացվող միջոցառումներին: Այդ առումով կարևոր հարթակ է Արևելյան գործընկերության տարածքային և տեղական իշխանությունների կոնֆերանսը (CORLEAP), որն ընդգրկում է Արևելյան գործընկերության վեց երկրների (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ուկրաինա,

Բելառուս, Մոլդովա) և Եվրամիության երկրների ներկայացուցիչներ: Կոնֆերանսի նպատակն է այդ երկրների տարածքային և տեղական իշխանությունների միջև համագործակցության զարգացումը և այդ իշխանությունների կարողությունների հզորացումը:

Աղյուսակ 1. ԵՀԶ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2014-2015 թվականների տեղական ինքնակառավարման զարգացմանն ուղղված միջոցառումների ցանկ

Հ/հ	Գերակա խնդիրները	Ակնկալվող արդյունքը	Իրականացման ենթակա միջոցառումները		Պատասխանատու մարմինը
			2014թ.	2015թ.	
19.	Տեղական ինքնակառավարման ոլորտում բարեփոխումների իրականացում՝ եվրոպական լավագույն փորձի կիրառմամբ	ՏԻՄ-երի կարողությունների զարգացում	Մասնակցություն Արևելյան գործընկերության տեղական ու տարածաշրջանային իշխանությունների հարթակի շրջանակներում իրականացվող միջոցառումներին:	Տեղական իշխանությունների մակարդակում ինտեգրացիայի զարգացում:	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն

2. Վարչասարածրային բարեփոխումները և միջհամայնֆային համագործակցությունը

2.1 Վարչասարածրային բարեփոխումները

ՀՀ վարչատարածքային բաժանման համակարգում 2014թ. էական փոփոխություններ չեն կատարվել: 19.05.2014թ. ընդունվել է «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որում որոշ համայնքների սահմանների ճշգրտումներ են կատարվել և տրվել են դրանց նկարագրությունները⁵: Տարվա ընթացքում շարունակել են գործել 915 համայնքներ, որոնցից 49-ը՝ քաղաքային, 866-ը՝ գյուղական:

Հայաստանի մշտական բնակչությունը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 3010.6 հազ մարդ⁶, որը 6.5 հազարով պակաս է նախորդ տարվա համեմատությամբ: Մեկ համայնքին ընկնող բնակչության միջին թիվը կազմել է 3290 մարդ՝ նախորդ տարվա համեմատ 7-ով պակաս, իսկ առանց Երևան համայնքի՝ 2122 մարդ՝ նախորդ տարվա համեմատ 10-ով պակաս: Հայաստանի մեկ համայնքին ընկնող միջին տարածքը մնացել է նույնը՝ 31.1 կմ², իսկ առանց Երևան համայնքի՝ 30,9 կմ²:

Հայաստանի համայնքների բնակչության թվաքանակը 2014թ. ընթացքում էական փոփոխությունների չի ենթարկվել: Համայնքների 49%-ը ունի մինչև 1000 բնակիչ, 43%-ը՝ 1001-5000, 5%-ը՝ 5001-10000 և 3% է միայն որ ունի 10001-ից ավելի բնակիչ: ՀՀ բնակչության 35.6%-ը բնակվում է Երևան համայնքում, որի բնակչությունը նախորդ տարվա համեմատ ավելացել է 3.2 հազարով, կազմելով՝ 1071.5 հազ. մարդ: Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգը շարունակում է մնալ խիստ մասնատված և վերջինների թվում Եվրոպայի խորհրդի անդամ երկրների շարքում:

Դեռևս չսահմանված են մնում քաղաքների և գյուղերի տարանջատման չափորոշիչները:

2014թ. ընթացքում էական փոփոխությունների չեն ենթարկվել նաև նախադպրոցական, կրթական, երաժշտական, արվեստի, բուհերի, միջին մասնագիտական, արհեստագործական, առողջապահական, մարզական, սննդի անվտանգության, անասնաբուժական և արտակարգ իրավիճակների կազմակերպությունների թիվը և տեղաբաշխումը ըստ մարզերի:

Վարչատարածքային բարեփոխումները Հայաստանի տեղական ինքնակառավարման զարգացման համար մնում են առաջնահերթ, և 2014թ. ընթացքում ՀՀ կառավարության անմիջական օժանդակությամբ շարունակվել են աշխատանքները համայնքների խոշորացման ուղղությամբ: Համաձայն կառավարության

⁵ Մասնավորապես ճշգրտվել են՝ Արագածոտնի մարզի Ապարան քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագրությունը (Հոդված 14.64.), օրենքի բաղկացուցիչ մաս կազմող 15.35-րդ հավելվածի «Լճական-Կարճաղբյուր», 15.44-րդ հավելվածի «Ծովագյուղ-Կալավան», 15.50-րդ հավելվածի «Կալավան-Ծովագյուղ», և 15.51-րդ հավելվածի «Կարճաղբյուր-Լճական» սահմանագծերի նկարագրերը (Հոդված 6.), Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքային համայնքի սահմանների նկարագրությունը (Հոդված 15.83, հավելված 15.83):

⁶ www.armstat.am:

19.05.2014թ. N511-Ա որոշման, հավանություն է տրվել կառավարության ծրագրին և ներկայացվել ՀՀ Ազգային ժողով, որտեղ նշված է.

- Իրականացնել համայնքների խոշորացման պիլոտային ծրագիրը.

- Համայնքների խոշորացման գործընթացին զուգընթաց՝ վերանայել տեղական ինքնակառավարման բնագավառի օրենսդրությունը, մշակել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ նոր օրենք:

Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի կայացմանը զուգընթաց, որպես առանցքային հիմնախնդիր, մշտապես ընդգծվում է ՀՀ վարչատարածքային կառուցվածքը, ավելի կոնկրետ՝ նրա մասնատվածության բարձր աստիճանը: Ըստ այդ կառուցվածքի, ձևավորված վարչատարածքային միավորների գերակշիռ մասը փոքրաթիվ բնակչությամբ գյուղական համայնքներ են, որոնք բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունները կամ իրականացնում են ցածր մակարդակով, կամ ընդհանրապես չեն իրականացնում: Այդ համայնքներում պետության կողմից հատկացվող ֆինանսական միջոցները հիմնականում ուղղվում են վարչական ծախսերին՝ ծառայությունների մատուցման վրա էական ազդեցություն չթողնելով, իսկ ներդրումային ծրագրերի իրականացումը դժվարանում է աշխատակազմի սահմանափակ կարողությունների պատճառով:

Կրկին անգամ արձանագրվել է, որ գործող վարչատարածքային բաժանումը էական խոչնդոտ է հանդիսանում համայնքների կարողությունների ամրապնդման, իշխանության հետագա ապակենտրոնացման, սահմանափակ ֆինանսական միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման և տեղական ինքնակառավարման համակարգի բնականոն զարգացման համար:

Ստեղծված իրավիճակում անհրաժեշտություն է առաջացել համայնքների խոշորացման միջոցով օպտիմալացնել ՀՀ վարչատարածքային բաժանման համակարգը, որպես ուղենիշ ունենալով ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 10-ին ընդունված «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման» հայեցակարգը: Հայեցակարգային դրույթների շարքում կարևորագույն նշանակություն ունեն համայնքների խոշորացման սկզբունքները և չափորոշիչները, որոնք լուրջ նախապայման են խոշորացման միավորի (փնջի կամ սխեմայի) ձևավորման ժամանակ սուբյեկտիվ մոտեցումներից խուսափելու և խոշորացման գործընթացը առավել կառավարելի կազմակերպելու համար:

Ակնհայտ է, որ խոշորացման միավորի ձևավորման համար հայեցակարգային մոտեցումներին զուգահեռ՝ պակաս նշանակություն չունեն նաև այնպիսի գործոնները, որոնք նպաստավոր պայմաններ են ստեղծում արդեն խոշորացված համայնքի սոցիալ-տնտեսական հետագա զարգացման համար: Նման գործոններից են՝ խոշորացման փնջում քաղաքային համայնքի առկայությունը, բնակավայրերի համատեղ զարգացման հեռանկար ունենալը, մեկ միասնական ապրանքանիշից (քրենդից) օգտվելու հնարավորությունը, պետական և համայնքային նշանակության հողատարածքները ըստ համայնքների հնարավորինս հավասարաչափ բաշխելը և այլն:

Որպես Հայաստանում վարչատարածքային բաժանման օպտիմալացման ար-

դիական գործիք, առկա առաջարկությունները հավանության է արժանացել համայնքների խոշորացումն ըստ փնջերի, որը պետք է իրականացվի 14 համայնքներ ընդգրկող պիլոտային ծրագրի շրջանակներում (աղյուսակ 2):

Արդյունքում, վերը նշված ծրագրի իրականացման դեպքում, ներկայումս գործող 83 համայնքների փոխարեն կձևավորվեն 14 համայնքներ:

Աղյուսակ 2. Համայնքների խոշորացման պիլոտային ծրագրում ընդգրկված համայնքները⁷

Խոշորացվող փնջի / համայնքի / անվանումը	Խոշորացվող փնջում ընդգրկված համայնքները
1. Բյուրեղավան	Բյուրեղավան, Արզնի, Նուռնուս
2. Դիլիջան	Դիլիջան, Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Աղավնավանք, Խաչարձան, Հովք
3. Գորիս	Գորիս, Ակներ, Վերինջեն, Քարահունջ
4. Ջաջուռ	Ջաջուռ, Ջաջուռավան, Լեռնուտ, Մեծ Սարիար, Կրաշեն
5. Ջերմուկ	Ջերմուկ, Կեչուտ, Գնդեվազ
6. Սեղրի	Սեղրի, Ագարակ, Ալվանք, Գուղեմնիս, Լեհվազ, Լիճք, Կարճևան, Կուրիս, Նոնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանաձոր, Տաշտուն
7. Պենգաշեն	Պենգաշեն, լեռնակերտ, Հայրենյաց, Հայկասար, Տուֆաշեն
8. Սարչապետ	Սարչապետ, Պետրովկա, Նորաշեն, Ապավեն, Արծնի
9. Սառնակունք	Սառնակունք, Գորայք, Ծղուկ, Սպանդարյան
10. Տաթև	Խոտ, Հալիձոր, Հարժիս, Շինուհայր, Սվարանց, Տաթև, Տանձատասի, Քաշունի
11. Թումանյան	Թումանյան, Մարց, Քարինջ, Լորուտ, Շամուտ, Աթան, Անիձոր
12. Ուրցածոր	Ուրցածոր, Շաղափ, Լանջանիստ, Լուսաշող
13. Վայք	Վայք, Արին, Ագատեկ, Ջեղեա, Փոռ
14. Ջառիթափ	Ջառիթափ, Արտավան, Սարավան, Խնձորուտ, Նոր Ազնաբերդ, Բարձրունի, Սերս, Մարտիրոս, Գոմք

Բերված առաջարկությունների հիման վրա հաշվարկվել են համայնքների խոշորացման տնտեսական արդյունավետությունը, հնարավոր ծախսերը և օգուտները: Մշակվել են խոշորացվող համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման խնդիրները, ինչպես նաև համայնքների խոշորացման իրականացման համար անհրաժեշտ օրենսդրական բարեփոխումները, խոշորացման գործընթացի փուլերը և ժամանակացույցը:

⁷ Աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

2.2 Միջհամայնքային համագործակցություն

2014թ. ընթացքում միջհամայնքային համագործակցության ասպարեզում առաջընթաց չի գրանցվել: Տարվա ընթացքում միջհամայնքային միավորումներ չեն ստեղծվել, հիմնականում պայմանավորված իրավական դաշտի անկատարությամբ: ՀՀ կառավարությունը հիմնական աշխատանքները շարունակել է համայնքների խոշորացման ուղղությամբ, անտեսելով «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման» հայեցակարգի երկրորդ մասը՝ այն է, միջհամայնքային միավորումների ձևավորումը:

2014թ.-ի ընթացքում նոր համայնքների միություններ չեն գրանցվել և չեն լուծարվել, 2015թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված էին մնում 25 համայնքների միություններ, որոնց կազմում ընդգրկված էին 495 համայնքներ (աղյուսակ 3): Նրանց համագործակցության շրջանակները մնացել են նույնը և ինչպես նախորդ տարիներին դրանք ակտիվությամբ առանձնապես աչքի չեն ընկել:

Միջհամայնքային համագործակցությունը հիմնականում մնում է համայնքների կողմից ստեղծված կառույցների և նրանց միջև ուղղակի կնքվող պայմանագրերի միջոցով գույքահարկի և հողի հարկի բազաների վարման և հավաքագրման իրականացումը, որոնց թիվը 2014թ. ընթացքում չի փոխվել և 2015թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 68: Չի փոխվել նաև դրանց կողմից սպասարկվող համայնքների թիվը՝ 427:

Աղյուսակ 3. ՀՀ-ում գործող համայնքների միությունները ըստ մարզերի և նրանցում ընդգրկված համայնքների թիվը

Մարզերը	Համայնքների միությունները	Համայնքների միություններում ընդգրկված համայնքների թիվը
Ք. Երևան	Հայաստանի համայնքների միություն	40
Արագածոտն	Ապարան, Մուշ	33
Արարատ	Վեդի, Արարատ, Հայանիստ, Արարատի	67
Արմավիր		-
Գեղարքունիք	Մարտունու, Սևան, Գեղամա, Վարդենիսի	61
Լոռի	Գուգարք, Թումանյան, Ստեփանավանի, Տաշիր	91
Կոտայք	-	-
Շիրակ	Ախուրյանի	8
Սյունիք	Մեղրու, Միսիանի, Գորիսի, Կապանի	108
Վայոց Ձոր	Վայոց Ձորի	27
Տավուշ	Նոյեմբերյանի, Դիլիջանի, Բերդի, Իջևանի	60
Ընդամենը	25	495

2014թ. ընթացքում շարունակվել է տեղական ինքնակառավարման զարգացմանն ուղղված համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ:

Միջսահմանային համագործակցությունը դեռևս թույլ է զարգացած՝ փակ են մնում Ադրբեջանի և Թուրքիայի հետ սահմանները, իսկ Իրանի հետ համագործակցության օրինակներ առայժմ չկան: Եվրոպական հարևանության քաղաքականության և Արևելյան գործընկերության շրջանակներում շարունակվել են հայ-վրացական սահմանամերձ տարածաշրջաններում տարածքային զարգացման ծրագրերի իրականացման աշխատանքները էկոլոգիական, փոքր և միջին բիզնեսի խորախուսման և տուրիզմի զարգացման ուղղություններով:

2014թ. ընթացքում միջհամայնքային համագործակցության առանձնակի զարգացումներ չեն եղել, իսկ գործող համայնքների միությունները շարունակում են մնալ պասիվ ՏԻՄ-երի շահերի պաշտպանության հարցում:

3. ՏԻՄ-երի ձևավորումը, իրավասությունները, լիազորությունները և գործունեությունը, ֆաղափացիական հասարակության մասնակցությունը սեղական ինֆնակառավարմանը

3.1 ՏԻՄ-երի ձևավորումը, իրավասությունները, լիազորությունները և գործունեությունը

2014թ. ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անցկացման ձևը և թեկնածուների առաջադրման կարգը չեն փոփոխվել:

2014-ին Հայաստանի մարզերում անց են կացվել համայնքի ղեկավարի 123 և ավագանու 88 ընտրություններ (աղյուսակ 4): Համայնքի ղեկավարի ընտրություններն անց են կացվել հիմնականում գյուղական համայնքներում և Գորիս, Չարենցավան, Ջերմուկ քաղաքային համայնքներում: Համայնքի ավագանու ընտրություններն անց են կացվել միայն գյուղական համայնքներում: 52 համայնքներում 2014թ. ընթացքում անց են կացվել թե համայնքի ղեկավարի, և թե ավագանու ընտրություններ:

Աղյուսակ 4. 2014-ին կայացած ՏԻՄ-երի ընտրությունների թիվն ըստ մարզերի⁸

Հ/հ	Մարզ	Համայնքի ղեկավարի ընտրություններ			Համայնքի ավագանու ընտրություններ		
		Ընդամենը	Քաղաքային համայնքներ	Գյուղական համայնքներ	Ընդամենը	Քաղաքային համայնքներ	Գյուղական համայնքներ
1	Արագածոտն	12	-	12	4	-	4
2	Արարատ	13	-	13	10	-	10
3	Արմավիր	11	-	11	6	-	6
4	Գեղարքունիք	21	-	21	21	-	21
5	Լոռի	16	-	16	13	-	13
6	Կոտայք	8	1	7	6	-	6
7	Շիրակ	11	-	11	8	-	8
8	Սյունիք	13	1	12	8	-	8
9	Վայոց Ձոր	11	1	10	7	-	7
10	Տավուշ	7	-	7	5	-	5
	Ընդամենը	123	3	120	88	-	88

2014-ին մարզերում համայնքի ղեկավարի ընտրությունները հիմնականում անց են կացվել ցածր մրցակցության պայմաններում: Առաջադրված թեկնածուների առավելագույն թիվը եղել է 4՝ ընդամենը 1 համայնքում: 7 համայնքներում մրցակցել են 3 թեկնածուներ, 60 համայնքներում՝ 2 թեկնածուներ, իսկ 55 համայնքներում, կարելի է ասել, բացակայել է մրցակցային միջավայրը, քանի որ այս համայնքներում քվեարկվել է ընդամենը 1 թեկնածու:

2014թ. տարեվերջի դրությամբ ՀՀ մարզերում համայնքների ղեկավարների կուսակցական պատկանելիությունն ունի հետևյալ պատկերը: Հայաստանի Հանրապետական կուսակցության ներկայացուցիչները կազմում են 71.7%, Բարգավաճ Հայաստան կուսակցության ներկայացուցիչները՝ 8.3%, անկուսակցականները՝ 14.4%: Մնացյալ 5.6%-ը բաշխվել է Հայ Յեղափոխական դաշնակցության, Օրինաց Երկիր կուսակցության, Հայաստանի Կոմունիստական կուսակցության, Ժողովրդավարություն և Աշխատանք կուսակցության և Ազգային Ինքնորոշում միավորման միջև (աղյուսակ 5):

2014թ. մայիսի 19-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով սահմանվել է, որ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի, այդ թվում՝ Երևանի ավագանու անդամի թեկնածու չեն կարող առաջադրվել քննչական կոմիտեի և հատուկ քննչական ծառայության ծառայողները:

⁸ Աղբյուրը՝ www.elections.am

Աղյուսակ 5. Համայնքների ղեկավարների կուսակցական պատկանելությունը ⁹ (2014 թ. տարեվերջի դրությամբ)

Հ/հ	Մարզ	Կուսակցություն							
		Հայաստանի Հանրապետական Կուսակցություն (ՀՀԿ)	Բարգավաճ Հայաստան Կուսակցություն (ԲՀԿ)	Հայ Ցեղափոխական Դաշնակցություն (ՀՅԴ)	Օրինաց Երկիր Կուսակցություն (ՕԵԿ)	Հայաստանի Կոմունիստական Կուսակցություն (ՀԿԿ)	Ժողովրդավարություն և Աշխատանք Կուսակցություն (ԺԱԿ)	Ազգային Ինքնորոշում Միավորում (ԱԻՄ)	Անկուսակցական
1	Արագածոտն	88	4	6	2	-	-	-	14
2	Արարատ	69	8	4	-	-	-	-	16
3	Արմավիր	85	1	4	-	-	-	-	7
4	Գեղարքունիք	63	8	1	-	1	2	-	17
5	Լոռի	73	1	3	-	1	-	-	35
6	Կոտայք	29	37	-	-	-	-	-	1
7	Շիրակ	71	7	10	8	-	-	-	23
8	Սյունիք	92	4	3	-	-	-	-	10
9	Վայոց Ձոր	34	3	-	-	-	-	-	7
10	Տավուշ	51	3	4	1	-	-	1	2
	Ընդամենը	655	76	35	11	2	2	1	132

2014թ. ՀՀ կառավարության որոշումներով վաղաժամկետ դադարեցվել են 9 համայնքների ղեկավարների (որոնցից 1-ը քաղաքային, 8-ը գյուղական) և 5 համայնքների ավագանու (բոլորը գյուղական) լիազորություններ: 4 համայնքների, այդ թվում քաղաքային համայնքի, ղեկավարների լիազորությունները դադարեցվել են նրանց հրաժարական տալու և 5-ինը՝ նրանց մահվան պատճառներով: 4 համայնքների ավագանիների լիազորությունները դադարեցվել են՝ ավագանու անդամների կողմից ավագանու միստի իրավազորությունը չապահովվելու պատճառով 6 ամիս անընդմեջ նիստեր չկայանալու հիմքով: Մեկ համայնքում ավագանու լիազորությունները դադարեցվել են՝ ավագանու անդամի լիազորությունների դադար-

⁹ Աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

¹⁰ Այդ համայնքներն են՝ Վայք, Ջամշու, Արագած, Հանքավան, Ալվար, Անտառաշեն, Բլազդդարնոյե, Յաղդան, Այգուտ:

¹¹ Այդ համայնքներն են՝ Գետահովիտ, Բաղրամյան, Անտառաշեն, Քասախ, Յաղդան:

րեցման հետևանքով համայնքի ավագանու հետագա նիստերի անցկացումը անհնարին դառնալու պատճառով:

2014-ին, ինչպես և նախորդ տարիներին, չի գրանցվել համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու որևէ դեպք:

ՏԻՄ-երի իրավասությունները և լիազորությունները

2014թ. համայնքների՝ այդ թվում Երևանի ավագանիների և ղեկավարների իրավասություններում փոփոխություններ չեն կատարվել:

2014թ. հունիսի 21-ին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքով վերաշարադրվել է գյուղատնտեսության բնագավառում համայնքի ղեկավարի գործունեությունը սահմանող հոդվածը, ինչի արդյունքում հանվել են համայնքի ղեկավարի՝ պետության կողմից պատվիրակված 2 լիազորությունները.

- ✓ կազմակերպում է համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախտերի դեմ պայքարի աշխատանքները,
- ✓ կազմակերպում է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումները, կենդանիների հիվանդությունների կանխման և ագրարային այլ կանոնների պահպանման աշխատանքները:

Բացի այդ, նույն բնագավառում ավելացվել է մեկ նոր կամավոր լիազորություն.

✓ կազմակերպում է ագրարային կանոնների պահպանման աշխատանքները: Նույն օրենքով համայնքների ղեկավարներին փոխանցվել են 1 պարտադիր և 5 պետության կողմից պատվիրակված լիազորություններ նոր բնագավառում, այն է՝ անասնաբուժություն և բուսասանիտարիա: Նշյալ բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունը.

- ✓ կատարված անասնահամաճարակային միջոցառումների, հայտնաբերված վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում լիազոր մարմնին:

Նշյալ՝ անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է պետության կողմից պատվիրակված հետևյալ լիազորությունները.

- ✓ աջակցում է անասնահակահամաճարակային տարեկան միջոցառումների պետական ծրագրի իրականացման աշխատանքներին.
- ✓ անասնահամաճարակային իրավիճակից ելնելով՝ ըստ վարակման ռիսկի, սահմանազատում է արոտավայրերը և ջրելատեղերը՝ անհրաժեշտության դեպքում սահմանափակելով կամ արգելելով դրանց օգտագործումը.
- ✓ աջակցում է անասնաբուժական ծառայության աշխատանքներին, կենդանիների հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման, բուժման և վերացման միջոցառումներին, կենդանիների դիակների, խոտանման ենթակա

կենդանական ծագման մթերքի և հումքի մեկուսացման, վնասագերծման և ոչնչացման, տարածքների ախտահանման, օրգանական ծագման կենդանական թափոնների տեղադրման, պահման և այդ տարածքներ կենդանիների մուտքի արգելման, անասնաբուժական հսկողությամբ կենդանիների կենտրոնացված սպանդի, կենդանական ծագման հումքի և մթերքի հավաքման, պահեստավորման աշխատանքներին.

- ✓ աջակցում է համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքներին.
- ✓ աջակցում է գյուղատնտեսական կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման, ինչպես նաև սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ կենդանիների անձնագրերի, կենդանիների հաշվառման և անասնաբուժական միջոցառումների գրանցամատյանների վարման աշխատանքներին:

Ըստ էության, համայնքի ղեկավարի՝ պետության կողմից պատվիրակված երկու լիազորությունները, որոնք հանվել են գյուղատնտեսության բնագավառից, որոշակի փոփոխություններով տեղափոխվել են անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառ:

2014թ. դեկտեմբերի 17-ին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքով վերաշարադրվել է աշխատանքի և սոցիալական պաշտպանության (նախկինում՝ ծառայության) բնագավառում համայնքի ղեկավարի՝ պետության կողմից պատվիրակված լիազորությունը հետևյալ խմբագրությամբ.

- ✓ համայնքի տարածքում կազմակերպում է սոցիալական աջակցության (ծառայությունների) տրամադրումը և տեղական ինքնակառավարման մարմինների՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների գործունեությունը (նախկինում՝ համայնքի տարածքում կազմակերպում է սոցիալական օգնության ծառայության գործունեությունը):

2014թ. հունիսի 21-ին ընդունված «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքով գյուղատնտեսության բնագավառում քաղաքապետի՝ պետության կողմից պատվիրակված լիազորությունները վերաշարադրվել են որպես անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառի պատվիրակված լիազորություններ հետևյալ խմբագրությամբ.

- ✓ աջակցում է անասնահակահամաճարակային տարեկան միջոցառումների պետական ծրագրի իրականացման աշխատանքներին.
- ✓ աջակցում է անասնաբուժական ծառայության աշխատանքներին, կենդանիների հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման, բուժման և վերացման միջոցառումներին, կենդանիների դիակների, խոտանման ենթակա կենդանական ծագման մթերքի և հումքի մեկուսացման, վնասագերծման և ոչնչացման, տարածքների ախտահանման, օրգանական ծագման կենդանական թափոնների տեղադրման, պահման և այդ տարածքներ կենդանիների

րի մուտքի արգելման, անասնաբուժական հսկողությամբ կենդանիների կենտրոնացված սպանդի, կենդանական ծագման հումքի և մթերքի հավաքման, պահեստավորման աշխատանքներին.

- ✓ աջակցում է համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքներին.
- ✓ աջակցում է գյուղատնտեսական կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման, ինչպես նաև սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ կենդանիների անձնագրերի, կենդանիների հաշվառման և անասնաբուժական միջոցառումների գրանցամատյանների վարման աշխատանքներին:

2014թ. դեկտեմբերի 17-ին ընդունված «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքով աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառներում վարչական շրջանի ղեկավարի 3-րդ լիազորությունը վերաշարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

- ✓ վարչական շրջանի տարածքում կազմակերպում է սոցիալական աջակցության (ծառայությունների) տրամադրումը և տեղական ինքնակառավարման մարմինների՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների գործունեությունը (նախկինում՝ վարչական շրջանի տարածքում կազմակերպում է սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների գործունեությունը, իրականացնում է սոցիալական աջակցության տրամադրման և նպաստների նշանակման աշխատանքներ):

Ամփոփ կերպով կարելի է նշել, որ 2014 թվականի տարեվերջի դրությամբ համայնքի ղեկավարներին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով վարապահված պարտադիր լիազորությունների թիվը կազմել է 67, պատվիրակված լիազորություններինը՝ 23, իսկ կամավոր լիազորություններինը՝ 24 (աղյուսակ 6):

2014թ. ընթացքում համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների իրականացման նոր կարգեր չեն ընդունվել:

2014թ. հունիսի 21-ին ընդունվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի ազդակիր համայնքի տարածքային կառավարման մարմինները և համայնքի ղեկավարը՝ հիմնադրութային փաստաթղթերի և նախատեսվող գործունեության և դրանց ազդեցության գնահատումների գործընթացների իրականացման մասին՝ լուծման էրից առնվազն 7 աշխատանքային օր առաջ իրականացնում են հանրության ծանուցում: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հանրային ծանուցման, քննարկումների և լուծման կազմակերպումը և անցկացումը, դրանց վերաբերյալ առարկությունների և առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի No 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով:

Աղյուսակ 6. ՏԻՄ-երի լիազորությունների քանակական տվյալներն ըստ առանձին տեսակների և բնագավառների (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)

Հ/հ	Բնագավառ	Պարտադիր լիազորություններ		Պատվիրակված լիազորություններ		Կամավոր լիազորություններ	
		ՀՀ այլ ՏԻՄ-եր	Երևանի ՏԻՄ-եր	ՀՀ այլ ՏԻՄ-եր	Երևանի ՏԻՄ-եր	ՀՀ այլ ՏԻՄ-եր	Երևանի ՏԻՄ-եր
1	Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն	8	0	8	0	0	0
2	Բնակիչների մասնակցություն տեղական ինքնակառավարմանը	4	0	0	0	0	0
3	Ֆինանսներ	8	7	0	0	0	0
4	Հասարակական կարգի պահպանություն	0	4	2	0	0	0
5	Պաշտպանության կազմակերպում	3	3	0	0	3	3
6	Քաղաքաշինություն և կոմունալ տնտնեսություն	20	14	0	1	5	0
7	Հողօգտագործում	5	1	3	4	2	0
8	Տրանսպորտ (և ճանապարհաշինություն)*	4	4	1	2	1	0
9	Առևտուր և ծառայություններ (սպասարկում)*	9	2	0	0	0	0

*) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում բերված ՏԻՄ-երի լիազորությունների բնագավառների անվանումները տարբերվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում բերված բնագավառների անվանումներից: Այն դեպքում, երբ այդ անվանումները շատ չեն տարբերվում, տարբերությունները նշվել են փակագծերում: Հակառակ դեպքում դրանք ձևակերպվել են որպես առանձին բնագավառներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում բնակչության մասնակցության հետ կապված փոփոխություններ կատարելուց հետո օրենսդրական պահանջ է դարձել, որ համայնքների ավագանիներն ընդունեն և գործնականում կիրառվեն բնակչության մասնակցությունն ապահովող 3 կարգեր: Այդ կարգերը դեռևս քիչ համայնքներում են ընդունվել և կիրառվում: Օրինակ, ԱՄՆ ՄՁԳ աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» ծրագրի մեջ ընդգրկված 35 պիլոտային համայնքներից 2014թ. տարեվերջի դրությամբ՝

- ✓ «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության» կարգն ընդունել են 18 համայնքներ (դիտարկված համայնքների 51.4%-ը),

10	Կրթություն, մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ	1	2	1	1	5	3
11	Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ	1	3	0	4	3	3
12	Աշխատանք և սոցիալական պաշտպանություն (սոցիալական պաշտպանություն)*	0	1	1	1	2	1
13	Գյուղատնտեսություն	2	0	0	0	3	0
14	Անասնաբուժություն և բուժսանիտարիա	1	0	5	4	0	0
15	Բնության և շրջակա միջավայրի պահպանություն (բնապահպանություն)*	1	4	2	2	0	1
16	Ավագանու հետ հարաբերություններ*	0	10	0	0	0	0
17	Գործադիր իշխանության հանրապետական մարմինների և դրանց Երևանի տարածքային ծառայությունների հետ հարաբերություններ*	0	5	0	0	0	0
18	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներ*	0	2	0	0	0	0
19	Էլեկտրոնային հաղորդակցություն, էլեկտրամատակարարում, ջրամատակարարում, գազամատակարարում*	0	2	0	0	0	0
ԸՆդամներ		67	64	23	19	24	11

✓ «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման» կարգն ընդունել են 7 համայնքներ (դիտարկված համայնքների 20.0%-ը),

✓ «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության» կարգն ընդունել են 12 համայնքներ (դիտարկված համայնքների 34.3%-ը):

Դիտարկված 35 համայնքներից «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության» կարգն ընդունած գրեթե բոլոր համայնքները ձևավորել են այդ մարմինները:

Համայնքի ավագանու կանոնակարգերի առկայության մասին տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով դիտարկվել են 2015թ. օգոստոսի 1-ի դրությամբ պաշտոնական ինտերնետային կայքեր ունեցող համայնքների ցանկից 150 համայնքներ, այդ թվում՝ 34-ը քաղաքային և 116-ը գյուղական: Դիտարկված համայնքներից ավագանու կանոնակարգ ունեն 77-ը (դիտարկված համայնքների 51%-ը), այդ թվում՝ 26-ը քաղաքային (դիտարկված քաղաքային համայնքների 76%-ը) և 51-ը գյուղական (դիտարկված գյուղական համայնքների 44%-ը):

Որոշումների կայացումը համայնքներում

2014թ. հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում համայնքների կողմից մարզպետարաններ են ներկայացվել ընդհանուր թվով 17430 որոշումներ (հավելված 1): Այդ որոշումների շուրջ 5.0%-ում (867 որոշումներ) հայտնաբերվել են անհամապատասխանություններ օրենքների և իրավական ակտերի հետ: Մարզպետարանների կողմից վերադարձված որոշումների 90.7%-ը համայնքների կողմից համապատասխանեցվել է օրենքներին և իրավական ակտերին և սահմանված ժամկետներում ներկայացվել մարզպետարաններ: 2014թ. հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում ավագանու որոշումները մարզպետարան չեն ներկայացրել Արարատի, Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերի 46 համայնքներ: Ավագանու որոշումներն անվավեր ճանաչելու նպատակով մարզպետների կողմից ներկայացրած դատական հայցերի թիվը կազմել է 22՝ բոլորն էլ Գեղարքունիքի մարզում:

2014-ին ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրավական հսկողություն է իրականացվել Երևանի ավագանու կողմից ընդունված 232 որոշումների նկատմամբ¹²: Որոշումների ընդունման հարցում համայնքների ավագանիները դեռևս շարունակում են մնալ պասիվ:

2014-ին մի փոքր ավելացել է համայնքների ավագանու աշխատանքները կազմակերպելու համար առանձնացված աշխատասենյակներ ունեցող համայնքների թիվը՝ տարբեր եռամսյակներում կազմելով 688-ից 726: Մարզային կտրվածքով դիտարկելիս կարելի է նկատել, որ ինչպես և նախորդ տարի, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերի բոլոր համայնքներում առկա են այդպիսի աշխատասենյակներ: Իսկ Արագածոտնի և Տավուշի մարզերում 2014թ. 4-րդ եռամսյակի տվյալներով ավագանու գործունեության համար առանձնացված աշխատասենյակ ունեցող համայնքների տեսակարար կշիռն ամենացածրն է եղել՝ 43%: 4-րդ եռամսյակի տվյալներով մնան աշխատասենյակներ չունեցող համայնքներից բոլորը գյուղական համայնքներ են, քաղաքային համայնքներում դրանք առկա են¹³:

2014-ին համայնքների ղեկավարների և ավագանու անդամների մոտ քաղաքացիների ընդունելության վիճակագրությունն ունի հետևյալ պատկերը. 2014-ին ՀՀ մարզերում համայնքի ղեկավարների մոտ ընդունելության են մասնակցել 119030 քաղաքացիներ, իսկ ավագանու անդամների մոտ՝ 24466 քաղաքացիներ (հավելված 2): Համայնքի ղեկավարների մոտ ընդունելության են մասնակցել ընդունելության դիմած քաղաքացիների 98,2%-ը, իսկ ավագանու անդամների մոտ՝ 90,7%-ը: 2014թ. ընդունելություն կազմակերպած համայնքների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է՝ տարբեր եռամսյակներում տատանվելով 802-ից մինչև 830-ի սահմաններում: Ինչպես և նախորդ տարի, 2014-ին ընդունելություն կազմակերպած համայնքների թիվը ամենացածրն է եղել Սյունիքի մարզում՝ տարբեր եռամսյակ-

¹² Աղյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2014 թվականի գործունեության հաշվետվություն (նախկին ՀՀ տարածքային կառավարման նախարարության գործունեության բնագավառի վերաբերյալ), Երևան 2015:

¹³ Աղբյուրը՝ www.mta.gov.am, Ամփոփ տեղեկանքներ 2014թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում ՀՀ համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության վերաբերյալ:

ներում կազմելով մարզի համայնքների թվի 16.5%-ից 41.3%-ը:

2014-ին, ինչպես և նախորդ տարիներին, Հայաստանում տեղական հանրաքվե չի անցկացվել: Տեղական հանրաքվե չանցկացնելու պատճառներից մեկը եղել է գործնականում տեղական հանրաքվեի համար օրենսդրական կարգավորումների ոչ լիարժեքությունը: ՀՀ Սահմանադրության 110-րդ հոդվածում նշվում է, որ համայնքների միավորման կամ բաժանման գործընթաց իրականացնելու համար համայնքներում պետք է անցկացվեն տեղական հանրաքվեներ: Սահմանադրական դրույթն իրականացնելու և առկա բացերը լրացնելու համար 2014թ. դեկտեմբերի 17-ին ընդունվել է «Տեղական հանրաքվեի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը՝ ապահովելով տեղական հանրաքվե անցկացնելու համար անհրաժեշտ օրենսդրական հիմքերը: Մասնավորապես, վերաշարադրվել են տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունքը, ընտրատարածքային հանձնաժողովների, տեղամասային հանձնաժողովների լիազորությունները, տեղական հանրաքվեի հանձնաժողովների աշխատանքներում հրապարակայնությունը սահմանող հոդվածներ, տեղական հանրաքվեի հանձնաժողովների համակարգում ավելացվել է կենտրոնական հանձնաժողովը, վերջինիս համար սահմանվել են լիազորություններ և այլն:

2014թ. ՀՀ մարզերում վարչական հսկողություն է իրականացվել 232 համայնքներում: Արձանագրված խախտումները հիմնականում վերաբերել են «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Քաղաքաշինության մասին» և ՀՀ այլ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի պահանջների չկատարմանը¹⁴:

Տեղական ինքնակառավարման ոլորտում դեռևս մամուլում նշվում են կոռուպցիայի դեպքեր՝ կապված հողատարածքներ վաճառելու դիմաց ապօրինի գումար պահանջելու, հարկերը, տուրքերը և վճարները անհիմն կերպով զիջելու և պաշտոնական դիրքի այլ չարաշահումների հետ¹⁵:

3.2 Քաղաքացիական հասարակության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը

ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 2015թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված են եղել քաղաքացիական հասարակության սուբյեկտներ հանդիսացող 4129 հասարակական կազմակերպություն (նախորդ տարվա համեմատ ավելացել է 7.6 %-ով), 917 հիմնադրամ (նախորդ տարվա համեմատ ավելացել է 9.8 %-ով), 741 արհեստակցա-

¹⁴ Այդուրդ՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2014 թվականի գործունեության հաշվետվություն (նախկին ՀՀ տարածքային կառավարման նախարարության գործունեության բնագավառի վերաբերյալ), Երևան 2015:

¹⁵ <http://www.yerkirmedia.am/?act=news&lan=hy&id=25714>,

<http://www.a1plus.am/1352514.html>:

<http://www.azatutyun.am/archive/news/20141119/2031/2031.html?id=26699381>:

կան կազմակերպություն (նախորդ տարվա համեմատ ավելացել է 2.9 %-ով) և 77 կուսակցություն (նախորդ տարվա համեմատ ավելացել է 4.1 %-ով)¹⁶:

Տեղական ինքնակառավարման ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների թվի և տարածքային տեղաբաշխվածության վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն չկա: 2014թ. ոլորտում շարունակել են գործել նախորդ տարիների զեկույցներում նշված կազմակերպությունները:

Երևանի մամուլի ակումբի պաշտոնական կայքում տեղադրված տվյալների համաձայն՝ Հայաստանի ՁԼՄ-ները, ինչպես և նախորդ տարի, հիմնականում տեղաբաշխված են Երևանում: Տարածականորեն համեմատաբար ընդգրկուն աշխարհագրություն ունեն դարձյալ հեռուստաընկերությունները: Հայաստանում օտարերկրյա ՁԼՄ-ների թղթակիցները և գրասենյակաները, ինչպես նաև լրատվական գործակալություններն ու ինտերնետային հրատարակությունները գտնվում են միայն Երևանում (աղյուսակ 7):

Աղյուսակ 7. Հայաստանի ՁԼՄ-ները և նրանց տարածքային բաշխվածությունը¹⁷ (2015 թ. օգոստոսի 1-ի դրությամբ)

Հ/հ	Մարզ	Մամուլ	Հեռուստաընկերություններ	Ռ-ալիքնայինություններ	Օտարերկրյա ՁԼՄ-ների թղթակիցները և գրասենյակաները Հայաստանում	Լրատվական գործակալություններ և ինտերնետային հրատարակություններ	Լրագրողական միավորումներ
	Երևան	59	23	13	14	26	14
1	Արագածոտն	1	1	-	-	-	-
2	Արարատ	-	1	-	-	-	-
3	Արմավիր	-	3	-	-	-	-
4	Գեղարքունիք	1	5	-	-	-	-
5	Կոտայք	1	4	-	-	-	-
6	Լոռի	2	6	1	-	-	1
7	Շիրակ	5	4	2	-	-	1
8	Սյունիք	2	6	2	-	-	1
9	Վայոց Ձոր	-	-	1	-	-	-
10	Տավուշ	-	4	-	-	-	-
Ընդամենը		71	57	19	14	26	17

¹⁶ Աղբյուրը՝ ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն:

¹⁷ Աղբյուրը՝ www.ypc.am:

«Ֆրիդոմ Հաուս» իրավապաշտպան կազմակերպության զեկույցի համաձայն, Հայաստանի ժողովրդավարության առաջընթացի գնահատականը նախորդ տարվա համեմատ մնացել է անփոփոխ՝ 2014թ. նույնպես կազմելով 5.36 միավոր (գնահատականները տրված են 7 բալանոց սանդղակով, որտեղ ամենալավ ցուցանիշը 1-ն է, իսկ ամենավատը՝ 7-ը): 2014թ. անփոփոխ են մնացել նաև «Տեղական ժողովրդավարական կառավարում» և «քաղաքացիական հասարակություն» բաժինների գնահատականները՝ կազմելով համապատասխանաբար 5.75 և 3.75 միավոր¹⁸:

«Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության կողմից իրականացվող քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի միջոցով 2014թ. կազմակերպության գործընկեր 43 համայնքներում անց են կացվել հաշվետու ժողովներ՝ շուրջ 3000 բնակիչների մասնակից դարձնելով նախորդ տարվա գործունեության և իրականացված ծրագրերի և ընթացիկ տարվա պլանների քննարկմանը և որոշումների կայացմանը: Ծրագրի շրջանակներում ձևավորվել է մշակույթ, որը թե՛ ՏԻՄ-երին և թե՛ համայնքի բնակչությանը դարձնում է ավելի պատասխանատու միմյանց նկատմամբ¹⁹:

«Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի կողմից 2015թ. հրապարակվել է «Ինչպես մասնակցել տեղական ինքնակառավարմանը» գրքույկը, որը ներառում է ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեի իրավունքները, քվերակության և բողոքարկման կարգերը, պատասխանատվությունը հանրաքվեի և ընտրական իրավունքների խախտման համար, համայնքի ղեկավարի և ավագանու իրավասությունները և մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը՝ արտացոլելով 2014թ. տարեվերջի դրությամբ գործող օրենսդրական պահանջները²⁰:

Վերջին 5 տարիների ընթացքում նկատվում են ՔՀԿ-ների մասնակցության ընդլայնում և համայնքային որոշումների կայացման գործընթացում ազդեցության աճ: Մի շարք քաղաքացիական հասարակության կազմակերպություններ գործընկերային հարաբերություններ են ձևավորել ՏԻՄ-երի հետ, նրանց հետ խորհրդակցում են առանձին հարցերի շուրջ՝ որոշումների ընդունման ժամանակ, մասնակցում են ռազմավարական պլանավորման գործընթացին և այլն: Ընդհանուր առմամբ, իշխանությունները գնահատում են ծառայություն մատուցող ՔՀԿ-ների աշխատանքը և ավելի շատ են հակված նրանց հետ համագործակցելու՝ ի տարբերություն իրավապաշտպան խմբերի: Տեղական իշխանությունների կողմից կազմակերպվող ձևական բնույթ կրող քննարկումներից և անձնական կապերի միջոցով լուծվող հարցերից անցում է կատարվում դեպի մասնակցության ավելի ինստիտուցիոնալ և արդյունավետ մեխանիզմների կիրառում, թեև այս ուղղությամբ դեռևս երկար ճանապարհ կա անցնելու: Այս փոփոխությունը կատարվում է մեծ մասամբ միջազգային կազմակերպությունների կամ նրանց կողմից ֆինանսավորվող

¹⁸ Աղբյուրը՝ www.freedomhouse.org, Nations in Transit 2014:

¹⁹ Աղբյուրը՝ www.program.counterpart.org, Քաունթերփարթի գործընկեր համայնքների ավելի քան 3000 բնակիչներ համայնքային հաշվետու ժողովների շրջանակներում մասնակցեցին ՏԻՄ որոշումների կայացման գործընթացին:

²⁰ Աղբյուրը՝ www.transparency.am:

դրամաշնորհային ծրագրերի շնորհիվ, միևնույն ժամանակ այն աստիճանաբար նպաստում է տեղական ինքնակառավարման ոլորտում գործելակերպի և մշակույթի փոփոխությանը²¹:

ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ տեղեկատվության մասշտիբությունը

2014թ. ընթացքում զգալիորեն ավելացել է համացանցային պաշտոնական կայքեր ունեցող համայնքների թիվը: 2015թ. ապրիլի 1-ի դրությամբ նման համայնքների թիվը կազմել է 247 (2013թ. տարեվերջի դրությամբ՝ 150)²²:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության և Հայաստանի համայնքների միության կողմից համատեղ անցկացված «Լավագույն համայնք-2014» մրցանակաբաշխության արդյունքներով 2014թ. «Տարվա լավագույն համայնքային կայք» մրցանակին է արժանացել Շիրակի մարզի Գյումրի քաղաքը²³:

ՀՀ մարզերում համայնքների բյուջեների հրապարակայնության ցուցանիշների դիտարկումը ցույց է տալիս, որ 2014թ. համայնքների բյուջեների ցուցանիշները ցուցատախտակներում և այլ տեսանելի վայրերում տեղադրել են ՀՀ բոլոր համայնքները (հավելված 3): Այդ ցուցանիշները հեռուստատեսությամբ հեռարձակող և թերթերում տպագրող համայնքների թիվը, ինչպես և 2013-ին, շարունակել է մնալ ցածր: 2014 թվականին զգալիորեն ավելացել է ինտերնետային կայք էջերում նյութեր տեղադրող համայնքների թիվը՝ տարվա տարբեր եռամսյակներում կազմելով 568-585 (2013-ին՝ 450-461):

Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի կողմից 2014թ. անց կացված տեղեկատվության ազատության հերթական մրցանակաբաշխության արդյունքներով տեղական ինքնակառավարման մարմիններին բաժին չեն հասել ոչ «ուսկե բանալի» և ոչ էլ «Ժանգոտ կողպեք» մրցանակները²⁴: Նույն ՀԿ-ի կողմից հրապարակված «սև ցուցակում» ՏԻՄ-երի ներկայացուցիչներից ընդգրկվել են Մեծամոր, Նոյեմբերյան, Ջերմուկ, Նոր Հաճն, Էջմիածին, Գյումրի և Արտաշատ համայնքների ղեկավարները²⁵:

2013թ. սեպտեմբերից ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը և ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը համատեղ սկսել են իրականացնել «Համայնքային միկրոհարցում» ծրագիրը, որի շրջանակներում Հայաստանի մի քանի համայնքներում փորձարկվում է կարճ հաղորդագրությունների (SMS) միջոցով համայնքային որոշումների կայացմանը մասնակցելու մեխանիզմը: 2013թ. դեկտեմբերի վերջին Հայաստանում առաջին միկրոհարցումներն են

²¹ Աղբյուրը՝ ՔՀԿ-ների ներգրավվածությունը քաղաքականության մշակման և իրականացման մոնիթորինգի գործում. կարիքներ և կարողություններ, Երևան 2015:

²² Աղբյուրը՝ www.mta.gov.am, Ամփոփ տեղեկատվություն ՀՀ համայնքապետարաններում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության վերաբերյալ (01.04.2015թ. դրությամբ):

²³ Աղբյուրը՝ www.mta.gov.am, Նշվեց Հայաստանում տեղական ինքնակառավարման մարմինների օրը:

²⁴ Աղբյուրը՝ www.foi.am:

²⁵ Աղբյուրը՝ www.foi.am:

անցկացվել Արենի, Գորիս, Թումանյան, Նոր Երզնկա և Ջանֆիղա համայնքներում: SMS հարցումները հնարավորություն են տվել նախապես գրանցված 2656 բնակիչների արտահայտելու իրենց կարծիքը իրենց իսկ համայնքի առաջնային խնդիրների վերաբերյալ (օրինակ՝ քաղաքային տրանսպորտի սակագնի փոփոխում, քաղաքային լուսավորության ընդլայնում, խաղահրապարակների կառուցում, գյուղամիջյան ճանապարհների բարեկարգում, ժամանցի գոտու ստեղծում): Հինգ նշված համայնքներից, ընդհանուր առմամբ, 612 բնակիչ արձագանքել է հարցմանը: Հարցման արդյունքները պետք է հաշվի առնվեին 2014թ. ընթացքում որոշումների ընդունման ժամանակ²⁶:

ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ դիմում-բողոքները

2014թ. բնակչության կողմից մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմում-բողոքների մի մասը վերաբերել է ՏԻՄ-երի գործունեությանը: Վարույթ ընդունած գործերի թիվն ըստ քաղաքապետարանների և գյուղապետարանների կազմում է²⁷.

- ✓ Երևանի քաղաքապետարան՝ 125,
- ✓ Մնացած քաղաքապետարաններ՝ 49,
- ✓ Գյուղապետարաններ՝ 39:

2014թ. ՏԻՄ-երի գործունեության դեմ ուղղված դիմում-բողոքները հիմնականում վերաբերել են համատիրությունների գործունեությանը, հասարակական տրանսպորտի աշխատանքին, ինքնակամ շինությունների օրինականացմանը և այլ հարցերին:

2014թ. ընթացքում Երևանի քաղաքապետարանում և նրա ենթակայության տակ գտնվող մարմիններում համատիրությունների դեմ ստացվել են 2430 բողոքներ, որոնք վերաբերել են բազմաբնակարան շենքերում տանիքների (577) և մուտքերի (306) վերանորոգմանը, վերելակի անսարքության վերացման աշխատանքների կազմակերպմանը (359), ծառերի էտմանը (514), վնասատուների դեմ պայքարի աշխատանքների կազմակերպմանը (417), բակային տարածքներում արտաքին լուսավորության համակարգի տեղադրմանը (257)²⁸:

²⁶ Աղբյուրը՝ www.mta.gov.am, Համայնքային միկրոհարցումներ կարճ հաղորդագրությունների (SMS) միջոցով:

²⁷ Աղբյուրը՝ 2014թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույց:

²⁸ Աղբյուրը՝ 2014 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույց:

4. Համայնքների սեփականությունը, զարգացման ծառայերը և ֆինանսական անկախությունը

2014թ. ընթացքում համայնքների ֆինանսներին և սեփականությանը վերաբերող օրենքներից փոփոխություններ են կատարվել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքում՝ նույն օրն ընդունված երկու օրենքներով (01.12.2014թ.): Դրանցից մեկով սահմանվել է, որ «ա» գործոնով և 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող, ինչպես նաև 300-ից ավելի բնակիչ ունեցող, սակայն «ա» և «բ» գործոններով դրոշագիայի հաշվարկման արդյունքում 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքի համար սահմանված դրոշագիայի գումարից տվյալ տարում պակաս չափով դրոշագիա ստացող համայնքների բյուջեներին նախատեսվող դրոշագիայի ընդհանուր գումարը չպետք է պակաս լինի հաշվարկվող տարվա համար նախատեսվող դրոշագիայի ընդհանուր գումարի 50 տոկոսից, իսկ «բ» գործոնով համայնքների բյուջեներին նախատեսվող դրոշագիայի ընդհանուր գումարը՝ 30 տոկոսից: Մյուս օրենքով փոփոխվել են դրոշագիաների հաշվարկման համար համայնքների բնակչության թիվը հաշվի առնող տարեթվերը:

2014թ. դեկտեմբերի 1-ին ընդունվել է «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է ՀՀ կառավարության հաստատած ցանկում ներառված սահմանամերձ համայնքներին աջակցություն ցուցաբերելու գործընթացը՝ այդ թվում սահմանված է, որ սահմանամերձ համայնքների վարչական տարածքում գտնվող, մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքների համար վճարման ենթակա հողի հարկի և այդ հողերի վրա ունեցած անշարժ գույքի գույքահարկի տարեկան գումարը հարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց անունից նրանց փոխարեն համապատասխան համայնքի բյուջե վճարվում է ՀՀ պետական բյուջեից:

4.1 Համայնքների սեփականությունը

2014թ. նույնպես, ինչպես նախորդ տարիներին, համայնքային սեփականությունը հիմնականում համարվել է համայնքների կատարած կապիտալ կամ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի հաշվին (աղյուսակ 8): Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծավալը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 4381.8 մլն դրամով, կամ 18.9%-ով, կազմելով՝ 27522.5 մլն. դրամ (2013թ.՝ 23140.7 մլն. դրամ): Այդ ծախսերի 99.4%-ը, ինչպես նախորդ տարիներին (2012թ.՝ 99.8%, 2013թ.՝ 99.9%), կազմել են հիմնական միջոցների գծով կատարված ծախսերը, որոնց կազմում շարունակում է բարձր մնալ շենքերի և շինությունների բաժինը՝ 86.9% (2012թ.՝ 90.8%, 2013թ.՝ 84.4%): 2014թ. թե գումարային արտահայտությամբ, թե տեսակարար կշռով ավելացել են շենքերի և շինությունների ձեռքբերման և կա-

ռուցման ծախսերը՝ 8.0% ու 34.1% (2013թ.՝ 5.3% ու 16.1%): Իսկ շենքերի և շինությունների վերանորոգման ծախսերը նվազել են՝ կազմելով 44.8% (2013թ.՝ 63.0%): Նվազել է նաև մեքենաների և սարքավորումների բաժինը՝ կազմելով 10.4%, նախորդ տարվա 12.7%-ի փոխարեն՝ նվազելով նաև գումարային արտահայտությամբ: Չնայած մի փոքր աճին՝ 0.5% (2013թ.՝ 0.1%) դեռևս շատ փոքր են մնում պաշարների և չարտադրված ակտիվների վրա կատարված ծախսերը:

ՀՀ կառավարության մի շարք որոշումներով գույք և դրամական միջոցներ են նվիրաբերվել համայնքներին²⁹:

²⁹ 13.02.2014, 138-Ս որոշմամբ Լոռու մարզի Ալավերդու քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մասնավորեցման արդյունքում Ալավերդու քաղաքային համայնքի ֆոնդային բյուջե մուտքագրված 435.0 հազ. դրամն ուղղվել է Ալավերդու քաղաքային համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատության կարիքների համար գույքի ձեռքբերմանը, 10.04.2014, 376-Ս որոշմամբ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում գտնվող կաթսայատան 44000.0 հազ. դրամ գնահատված արժեքով սարքավորումները և արտաքին ջերմոցանք նվիրաբերվել է Լոռու մարզի Սպիտակի քաղաքային համայնքին՝ ջերմոցային տնտեսություն հիմնելու պայմանով, 10.04.2014, 388-Ս որոշմամբ Շիրակի մարզի Ախուրիկի գյուղական համայնքի տարածքում գտնվող 781.43 քառ. մետր մակերեսով, 4139333.0 դրամ հաշվեկշռային արժեքով շենքը և դրա սպասարկման համար անհրաժեշտ՝ 0.23 հեկտար մակերեսով հողամասը նվիրաբերվել է համայնքին՝ այն որպես մանկապարտեզ օգտագործելու պայմանով, 10.07.2014, 691-Ս որոշմամբ Արագածոտնի մարզի Օրգովի գյուղական համայնքի տարածքում գտնվող՝ 1218200 դրամ սկզբնական արժեքով ու 84.1 քառ. մետր մակերեսով կարսայատունը և դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.1936 հեկտար հողամասը նվիրաբերվել է Արագածոտնի մարզի Օրգովի գյուղական համայնքին՝ գյուղատնտեսության շենք կառուցելու պայմանով, 24.07.2014, 819-Ս որոշմամբ Երևան քաղաքի Ծարավ Աղբյուրի 55ա հասցեում գտնվող՝ 181800000 դրամ սկզբնական արժեքով շենքերն ու շինությունները, դրանցով զբաղեցված և սպասարկման ու օգտագործման համար անհրաժեշտ պետական սեփականություն հանդիսացող 4.2091 հեկտար հողամասը անհատույց սեփականության իրավունքով հանձնվել է Երևանի քաղաքային համայնքին, 07.08.2014, 1008-Ս որոշմամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Դազանշի կաթնահամալիրի լուծարումից հետո մնացած 8002778 դրամ սկզբնական արժեքով հիմնական և տրանսպորտային միջոցները նվիրաբերվել է Շիրակի մարզի Դազանշի գյուղական համայնքին՝ գյուղական համայնքի բնակչության սոցիալական խնդիրները լուծելու նպատակով, 14.08.2014, 0846-Ս որոշմամբ թույլատրվել է Գեղարքունիքի մարզի «Դոմաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ՓԲԸ սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ 5210391.0 դրամ արժողությամբ, 638.59 քառ. մետր մակերեսով չահագործվող նախկին շենքը և դրա օգտագործման ու սպասարկման համար առանձնացված 1510.3 քառ. մետր մակերեսով հողամասն անհատույց, սեփականության իրավունքով նվիրաբերել Դոմաշենի գյուղական համայնքին՝ շենքը որպես հանդիսությունների արահ ծառայեցնելու պայմանով, 14.08.2014, 850-Ս որոշմամբ համաձայնություն է տրվել Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի, իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության մասնավորեցումից՝ Երևանի քաղաքապետարանի անվամբ բացված հատուկ հաշվում կուտակված միջոցների մնացորդից 229275.0 հազ. դրամը Երևան քաղաքի Վիլյուսի փողոցի շարունակության հատվածի կառուցման աշխատանքների իրականացմանն ուղղված, 21.08.2014, 869-Ս որոշմամբ համաձայնություն է տրվել Տավուշի մարզի Գլխիջանի քաղաքային համայնքի տարածքում գտնվող՝ 922.9 քառ. մետր մակերեսով պետական սեփականություն համարվող անշարժ գույքի և դրա օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի օտարման արդյունքում Գլխիջանի քաղաքային համայնքի ֆոնդային բյուջե մուտքագրված 3180.0 հազ. դրամն ուղղել Գլխիջանի «Հովի. Շարսնբեյանի անվան գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դասիլիճի վերանորոգման աշխատանքների իրականացմանը, 28.08.2014, 928-Ս որոշմամբ Լոռու մարզի Գարպասի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող՝ ՀՀ էլեոնոմիկայի նախարարության «Գուգարք» կարի ԱՄ՝ 2197.45 քառ. մետր մակերեսով անշարժ գույքի՝ ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցման արդյունքում համայնքի ֆոնդային բյուջե մուտքագրված 4500.0 հազ. դրամն ուղղվել է համայնքի հեղեղատարի կառուցմանը, 18.09.2014, 983-Ս որոշմամբ Գեղարքունիքի մարզի Նորատուսի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող՝ պետական սեփականություն համարվող «Ռալիտ» ՓԲԸ բաժնետոմսերի ուղղակի վաճառքի արդյունքում Նորատուսի ֆոնդային բյուջե մուտքագրված 30849.3 հազ. դրամն ուղղվել է համայնքի Վարդան Մամիկոնյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների իրականացմանը, 16.10.2014, 1131-Ս որոշմամբ Շիրակի մարզի Գեղարքունի գյուղական համայնքի 1-ին փողոցի թիվ 6/1 հասցեում գտնվող՝ 1598400.0 դրամ կադաստրային արժեքով, 0.72 հեկտար մակերեսով առանձնացված հողատարածքը նվիրաբերվել է համայնքին՝ մանկապարտեզ և մարզադասիլիճ կառուցելու պայմանով, 27.11.2014, 1330-Ս որոշմամբ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացում», «Արտադրական ենթակառուցվածքների վերակազմում» և «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրերի հիմնադրամի հետ 2009թ. սեպտեմբերի 15-ին և 2010թ. օգոստոսի 20-ին կնքված համագործակցության համաձայնագրերի հիման վրա իրականացված աշխատանքների, ինչպես նաև Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի միջև 2010թ. նոյեմբերի 30-ին ստորագրված N 817-AM, ՀՀ և Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի միջև 2011թ. հունիսի 8-ին ստորագրված N 1390Փ փոխառության համաձայնագրերով իրականացված «Գյուղական կարողությունների ստեղծում» ծրագրերի շրջանակներում ձեռք բերված՝ պետական սեփականություն հանդիսացող գույքի կազմից ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ 4920545095 դրամ և 303049278 դրամ արժողությամբ գույքը նպատակային նշանակությամբ օգտագործելու համար նվիրաբերվել է Լոռու, Արագածոտնի, Սևունիքի ու Տավուշի մարզերի համայնքներին:

**Աղյուսակ 8. ՀՀ համայնքների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը³⁰
2012-2014թթ. (մլն. դրամ)**

Տող	Բովանդակություն	2012թ.		2013թ.		2014թ.	
		Գու- մարդ	Տես. կշիռը (%)	Գու- մարդ	Տես. կշիռը (%)	Գու- մարդ	Տես. կշիռը (%)
1	2	3	4	5	6	7	8
5000	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱՆՍԵՐ	24573.4	100	23140.7	100	27522.5	100
5100	այդ թվում՝ 1.Հիմնական միջոցներ	24520.3	99.8	23112.7	99.9	27370.9	99.4
5110	այդ թվում՝ Շենքեր և շինություններ	22301.8	90.8	19540.4	84.4	23916.5	86.9
5111	որից՝ -Շենքերի և շինությունների դեմոնտաժի և ձեռքբերում	147.5	0.6	1230.2	5.3	2210.9	8.0
5112	-Շենքերի և շինությունների կառուցում	4556.4	18.5	3730.9	16.1	9376.8	34.1
5113	-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	17597.9	71.7	14579.2	63.0	12328.8	44.8
5120	Սեբեմաներ և սարքավորումներ	1647.2	6.7	2933.0	12.7	2862.6	10.4
5121	որից՝ -Տրանսպորտային սարքավորումներ	586.0	2.4	734.4	3.2	853.4	3.0
5122	-Վարչական սարքավորումներ	678.3	2.8	758.2	3.3	633.1	2.3
5123	-Այլ մեքենաներ և սարքավորումներ	382.9	1.6	1440.4	6.2	1394.1	5.1
5130	Այլ հիմնական միջոցներ	571.3	2.3	639.3	2.8	591.8	2.2
5200	1.2.Պաշարներ	45.2	0.2	26.8	0.1	140.9	0.5
5300	1.3.Բարձրարժեք ակտիվներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
5400	1.4.Չարտադրված ակտիվներ	7.9	0.0	1.3	0.0	10.7	0.0
5411	Այդ թվում՝ հող	7.9	0.0	1.3	0.0	10.7	0.0

³⁰Աղբյուրը՝ www.minfin.am:

Կայացվել են համայնքային սեփականության վերաբերյալ նորմատիվներ սահմանելու, հողի հարկից և գույքահարկից ազատվող շինությունների ցանկերը հաստատելու և այլ որոշումներ:

Համայնքները հաճախ իրենց սեփականությունը հանդիսացող գույքի իրացումից ստացված միջոցներով համալրում են ֆոնդային բյուջեն (աղյուսակ 9), որն արտացոլվում է բյուջեի ելքային մասում՝ բացասական նշանով: 2014թ. համայնքների ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը նախորդ տարվա համեմատ ավելացել են 3272.6 հազ. դրամով, կամ 27.1%-ով: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2014թ. ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը ամբողջությամբ ստացվել են հիմնական միջոցների (7.7%) և հողի (92.3%) իրացումից: Նախորդ տարիների համեմատ նվազել են հիմնական միջոցների իրացումից մուտքերը, իսկ հողի իրացումից մուտքերը ավելացել են, ավելացնելով նաև նրանց տեսակարար կշիռը ընդհանուր մուտքերի մեջ:

2015թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) թիվը կազմել է 1311, որը 110-ով ավելի է նախորդ տարվա համեմատությամբ: 100% համայնքային սեփականությամբ բաժնետոմսերով առևտրային իրավաբանական անձանց թիվը ավելացել է 1-ով և կազմել է՝ 426, իսկ պետություն-համայնք մասնակցությամբ առևտրային իրավաբանական անձանց թիվը նվազել է 1-ով և կազմել է՝ 218:

Աղյուսակ 9. ՀՀ համայնքների ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը 2012 – 2014թթ. (մլն դրամ)³¹

Տող	Բովանդակություն	2012թ.	2013թ.	2014թ.
1	2	3	4	5
6000	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ Ց ՍՈՒՏՔԵՐ	12621.3	12081.7	15354.3
6100	այդ թվում՝ Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	2407.0	1838.1	1177.6
6110	այդ թվում՝ Անշարժ գույքի իրացումից մուտքեր	2167.4	1581.8	936.0
6120	Շարժական գույքի իրացումից մուտքեր	2.3	19.0	1.0
6130	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր	237.3	237.3	240.6
6200	Պաշարների իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0
6300	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր	5.0	0.1	0.0
6400	Զարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	10209.3	10242.7	14176.7
6410	այդ թվում՝ Հողի իրացումից մուտքեր	10209.3	10242.4	14176.7

³¹ Աղբյուրը՝ minfin.am:

Ինչպես արդեն բազմիցս նշվել է, համայնքային սեփականության հիմնական մասը կառուցվել, կամ ձեռք է բերվել տասնամյակներ առաջ և անցած տարիների ընթացքում ենթարկվել է ֆիզիկական և բարոյական մաշվածության: Վիճակը 2014թ. առանձնապես չի փոխվել և գույքի հիմնական մասը վերանորոգման խիստ կարիք ունի, իսկ համայնքների մեծ մասը դեռևս անհրաժեշտ միջոցներ չունի վերանորոգման համար: ՏԻՄ-երի մեծ մասն իրենց լիազորություններն իրականացնելու համար գույքի/հատկապես տեխնիկայի/ խիստ կարիք ունի:

4.2 Համայնքների զարգացման ծրագիրը և բյուջեսավարմը

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը համայնքների զարգացման քառամյա ծրագրերի մշակման և կառավարման վերաբերյալ որոշ դրույթներ է պարունակում: Ըստ այդ օրենքի, համայնքի ղեկավարը մշակում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի զարգացման քառամյա ծրագիրը (ՀԶԲԾ): Ծրագիրը պետք է ներառի համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման մասին դրույթներ, համայնքի սեփականություն համարվող շենքերի, շինությունների (հոդված 37) ու հողամասերի (հոդված 38) օտարման քառամյա ծրագրերը՝ տարեկան կտրվածքով: Այլ պահանջներ ՀԶԲԾ-ի մշակման վերաբերյալ օրենքը չի ներառում:

Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգում երկարաժամկետ պլանավորումը լայնորեն չի օգտագործվում, ինչը պայմանավորված է՝ տեղական ինքնակառավարման ոլորտում տիրող իրավիճակով, համայնքների ֆինանսական ռեսուրսների խիստ սահմանափակվածությամբ, մեծ թվով համայնքներում որակյալ կադրերի բացակայությամբ, անտեղյակությամբ, ծրագրերի կազմման միասնական մեթոդաբանություն չլինելու և այլ պատճառներով: Ի տարբերություն երկարաժամկետ պլանավորման, միջնաժամկետ զարգացման ծրագրեր կազմվում են բոլոր համայնքներում, քանի որ դա օրենքի պահանջ է: Հարկ է նշել, որ դեռևս շատ համայնքներում այդ ծրագրերի կազմմանը լուրջ ուշադրություն չի դարձվում և դրանք հիմնականում ձևական բնույթ են կրում:

2014թ. Համայնքների ֆինանսիստների միավորում և Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունների փորձագետները համատեղ ստեղծել են մի փաստաթուղթ՝ «Համայնքի զարգացման քառամյա ծրագրերի մշակման և կառավարման մեթոդաբանություն», որը սահմանում է համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման հիմնական սկզբունքները, մեթոդները, կառուցակարգերն ու ընթացակարգերը, նպատակաուղղված է համայնքում առկա կարիքների գնահատմանը, հիմնախնդիրների բացահայտմանը, միջնաժամկետ ծրագրերի պլանավորման ու իրականացման միջոցով դրանց լուծմանը և համայնքի զարգացման ապահովմանը: Այն հնարավորություն կտա համայնքների զարգացման ծրագրերի ճիշտ մշակմանը և կառավարմանը:

Չնայած այդ ուղղությամբ կատարված որոշ աշխատանքների, 2014թ. նույնպես, նախորդ տարիների նման համայնքների մեծ մասի համար քառամյա ծրագրերը մնում են որպես ձևական փաստաթղթեր, որոնք էական դերակատարում չունեն համայնքների բյուջեների կազմման ժամանակ:

2014թ. նույնպես բյուջետային գործընթացներին վերաբերող էական փոփոխություններ չեն եղել: Համայնքների մի մասը (հատկապես փոքր գյուղական համայնքները) բյուջետային գործընթացը շարունակում է իրականացնել իմիջիայլոց, թերութուններով, ժամկետների ու նախատեսված հերթականությունների խախտումներով: Նման դեպքերում չեն ապահովվում այդ գործընթացի հրապարակայնությունն ու թափանցիկությունը, անտեսվում է բնակիչների մասնակցության նշանակությունը:

2014թ. ընթացքում շարունակվել են աշխատանքները գանձապետական հաշիվների կառավարման էլեկտրոնային համակարգում մարզային և համայնքային հիմնարկների ընդգրկման ուղղությամբ: Մեծ թվով համայնքներ արդեն հնարավորություն ունեն հրապարակելու իրենց ամսական և եռամսյակային հաշվետվությունները:

Դեռևս շատ են այն համայնքների թիվը, որոնց բյուջետային միջոցները բավարարում են միայն աշխատակազմի պահպանման ծախսերին: Սովորաբար այդ համայնքներում չկան համապատասխան մասնագետներ, իսկ բյուջեները կազմում են որպես եկամուտների և ծախսերի նախահաշիվ, առանց լուրջ վերլուծությունների և զարգացման ծրագրերի: Վերջին տարիներին համայնքների մի մասը (հիմնականում քաղաքային) համալրվել է բարձրորակ մասնագետներով, որոնք էլ իրականացնում են բյուջետավարման նոր ժամանակակից մեթոդներ՝ օգտագործելով ինչպես ծրագրային, այնպես էլ ըստ աշխատանքների կատարման բյուջետավարման ձևաչափերը:

4.3 Համայնքի բյուջեի եկամուսները

2014թ. Հայաստանի համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտները կազմել են 114359.1 մլն. դրամ (2012թ.՝ 95515.8 մլն. դրամ, 2013թ.՝ 105502.4 մլն. դրամ), ինչը նախորդ տարվա համեմատ ավելացել է 8856.7 մլն. դրամով կամ 8.4%-ով (աղյուսակ 10): 5578.5 մլն. դրամով ավելացել են այլ եկամուտները, ինչը հիմնականում պայմանավորված է պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներով, ավելացել է նաև նրա տեսակարար կշիռը՝ 31% (2013թ՝ 28.2%):

Աղյուսակ 10. ՀՀ համայնքների բյուջեների եկամուտները և նրանց տեսակարար կշիռը 2012-2014թթ. (մլն ՀՀ դրամ)³²

Տող	Եկամտատեսակները	2012թ.		2013թ.		2014թ.	
		Գումարը	Կշիռը ընդհ. մեջ(%)	Գումարը	Կշիռը ընդհ. մեջ(%)	Գումարը	Կշիռը ընդհ. մեջ(%)
1	2	3	4	5	6	7	8
1000	ԸՆԴԱՍԵՆԸ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	95515.8	100	105802.4	100	114359.1	100
1100	այդ թվում՝ 1.Հարկեր և տուրքեր	20034.5	21,0	21121.5	20.0	23260.1	20.3
1110	այդ թվում՝ 1.1.Գույքային հարկեր անշարժ գույքից /այդ թվում հողի հարկ/	9536.4	10,0	9463.9	8.9	9488.4	8.3
1121	1.2.Գույքային հարկեր փոխադրամիջոցներից	6761.7	7,1	7462.6	7.1	9122.0	8.0
1131	1.3.Տեղական տուրքեր	3020.9	3,2	3492.8	3.3	3892.7	3.4
1151	1.4.Պետական տուրքեր	715.1	0,7	702.1	0.7	756.4	0.7
1160	1.5.Այլ հարկային եկամուտներ	0.4	0.0	0.1	0.0	0.5	0.0
1200	2.ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԱՇՆՈՐՀՆԵՐ	48799.7	51,1	54799.5	51.8	55639.1	48.7
1300	3.ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	26681.6	27,9	29881.4	28.2	35459.9	31.0
1342	Այդ թվում՝ պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	17823.5	18,7	20644.4	19.5	25301.8	22.1
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	5132.3	5,4	8478.2	8.0	7220.4	6.3

³² www.Աղբյուրը՝ minfin.am:

Աղյուսակ 11. Երևանի բյուջեի եկամուտների տեսակարար կշիռները ՀՀ համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտների կազմում 2014թ. (մլն դրամ)³³

	Եկամտատեսակները	Ընդամենը ՀՀ համայնքների բյուջեների եկամուտները	Այդ թվում՝ Երևանի բյուջեի եկամուտները	Երևանի բյուջեի եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ (%)
1	2	3	4	5
1000	ԸՆԴԱՍԵՆԸ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	114359.1	68013.1	59.5
1100	այդ թվում՝ 1.Հարկեր և տուրքեր	23260.1	13354.9	57.4
1110	այդ թվում՝ 1.1.Գույքային հարկեր անշարժ գույքից	9488.4	4629.8	48.8
1111	Այդ թվում՝ Գույքահարկ շենքերի և շինությունների համար	5380.5	4043.0	75.1
1112	Հողի հարկ	4107.9	586.8	14.3
1120	1.2.Գույքային հարկեր այլ գույքից	9122.0	5133.7	56.3
1121	Այդ թվում փոխադրամիջոցներից	9122.0	5133.7	56.3
1131	1.3.Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ այդ թվում՝ տեղական տուրքեր	3892.7	3185.6	81.8
1151	1.4.Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ այդ թվում՝ պետական տուրքեր	756.4	405.7	53.6
1160	1.5.Այլ հարկային եկամուտներ	0.5	0.0	0.0
1200	2.ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՍԱՇՆՈՐՀՆԵՐ	55639.1	24207.8	43.5
1300	3.ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	35459.9	30450.4	85.9
1342	Այդ թվում՝ պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	25301.8	25006.2	98.8
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	7220.4	6014.2	83.3

³³ Աղբյուրը՝ www.minfin.am, www.yerevan.am:

Նախորդ տարվա համեմատ որոշակի աճ է գրանցվել հարկեր և տուրքեր բաժնի բոլոր հոդվածների գծով, որոնց մեջ զգալի են գույքային հարկերը փոխադրամիջոցներից և տեղական տուրքերը: Նվազել են վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերը, նվազել է նաև նրա տեսակարար կշիռը:

Համայնքների բյուջեների սեփական եկամուտները 2014թ. կազմել են 33418.2 մլն դրամ կամ ամբողջ եկամուտների 29.2%-ը (2013թ. 30358.5 մլն. դրամի կամ 28.7%-ի փոխարեն): Չնայած սեփական եկամուտների և նրա տեսակարար կշռի նախորդ տարվա համեմատ որոշակի աճին (3059.7 մլն դրամ, կամ 0.5%), դեռևս մեծ է մնում համայնքների կախվածությունը պաշտոնական դրամաշնորհներից:

ՀՀ համայնքների բյուջեների հանրագումարի մեջ զգալի է մնում Երևան համայնքի բյուջեի եկամուտների տեսակարար կշիռը՝ 2014թ. կազմելով՝ 59.2% (2013թ.՝ 60.2%), այդ թվում՝ շենքերի և շինությունների գույքահարկ՝ 75.1%, գույքային հարկեր փոխադրամիջոցներից՝ 56.3%, տեղական տուրքեր՝ 81.8%, պաշտոնական դրամաշնորհներ՝ 43.5%, իսկ պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները՝ 98.8% (աղյուսակ 11):

2014թ. նախորդ տարվա համեմատությամբ 1445.1 մլն. դրամով նվազել են ֆոնդային բյուջեի եկամուտները, նվազել է նաև նրա տեսակարար կշիռը՝ 6.7% (2013թ.՝ 8.6%): Ֆոնդային բյուջեի եկամուտների հիմնական մասը՝ 94.0%-ը, ինչպես նախորդ տարիներին բաժին է ընկնում վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերին: Ֆոնդային բյուջեի 78.3%-ը (2013թ.՝ 81.2%-ը) բաժին է ընկնում Երևան համայնքին (աղյուսակ 12):

Աղյուսակ 12. ՀՀ Համայնքների ֆոնդային բյուջեի եկամուտները և Երևանի տեսակարար կշիռը 2014թ. (մլն դրամ)³⁴

Տող	Եկամուտները	Ընդամենը համայնքների	Այդ թվում՝ Երևանի	Երևանի տեսակարար կշիռը (%)
1	2	3	4	5
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	7682.3	6016.2	78.3
1200	2.ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	409.4	0.0	0.0
1300	3.ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	7272.9	6016.2	82.7
1380	3.8 Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	49.8	0.0	0.0
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	7220.5	6014.2	83.3

³⁴Աղբյուրը՝ www.minfin.am, www.yerevan.am:

2014 թվականին նախորդ տարիների համեմատ ավելացել են պաշտոնական դրամաշնորհները, որոնց հիմնական մասը՝ 99,3%-ը, ինչպես նախորդ տարիներին (2012թ.՝ 95,6%-ը, 2013թ.՝ 98,9%-ը) կազմել են ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհները (աղյուսակ 13):

Աղյուսակ 13. Համայնքների բյուջեի եկամուտների պաշտոնական դրամաշնորհները 2012-2014թթ. (մլն. դրամ)³⁵

	Եկամտատեսակները	2012թ.		2013թ.		2014թ.	
		Գումարը	Կշիռը ընդհ. մեջ(%)	Գումարը	Կշիռը ընդհ. մեջ(%)	Գումարը	Կշիռը ընդհ. մեջ(%)
1	2	3	4	5	6	7	8
1200	2.ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	48799.7	100	54799,5	100	55639.1	100
1210	Այդ թվում՝ 2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից	4.2	0	0	0	826.6	1.5
1220	2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից	0	0	0	0	0	0
1230	2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	1,7	0	0	0	4964.0	8.9
1240	2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	0	0	0	0	1842.0	3.3
1250	2.5. Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	46641,1	95,6	54176,7	98,9	55224.0	99.3
1251	Որից՝ Ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դրուտացիաներ	32435.5	66,5	36191,0	66,0	38957.7	70.0
1254	Բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դրուտացիաներ	7287,1	14,9	9256,0	16,9	8029.7	14.4
1257	Գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	6918.4	14,2	8729,6	15,9	8236.5	14.8

³⁵ Աղբյուրը՝ www.minfin.am:

1260	2.6.Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	2152,7	4,4	622,8	1,1	407.5	0.7
1261	Այդ թվում՝ Ա)Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	2148,2	4,4	622,8	1,1	407.5	0.7
1262	Բ)ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ	4,5	0	0	0	0	0

Ավելացել են պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները, ավելացել է նաև նրա տեսակարար կշիռը պաշտոնական դրամաշնորհներում, կազմելով՝ 70% (2013թ.՝ 66%, 2012թ.՝ 66,5%): Նվազել են պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաները՝ 8029.7 մլն. դրամ (2013թ.՝ 9256,1 մլն. դրամ), սուբվենցիաները՝ 8236.5 մլն. դրամ (2013թ.՝ 8729,6 մլն. դրամ) և պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները (սուբվենցիաները)՝ 407.5 մլն. դրամ (2013թ՝ 622.8 մլն. դրամ), նվազել է նաև դրանց տեսակարար կշիռները:

Հաշվի առնելով, որ 2013թ. ընթացքում այլ պետություններից և միջազգային կազմակերպություններից ընթացիկ և կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ չեն ստացվել, իսկ 2012թ. այդ թվերը շատ փոքր են եղել, ապա 2014թ. զգալի կարելի է համարել այդ հոդվածների գծով եկամուտները (աղյուսակ 13): ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով պաշտոնական դրամաշնորհներ չեն ստացվել:

2014թ. համայնքների բյուջեների եկամուտների հանրագումարի կառուցվածքը էական փոփոխությունների չի ենթարկվել:

Ինչպես նախորդ տարիներին, 2014թ. ևս պետական բյուջեին ամրագրվող եկամտահարկից և շահութահարկից համայնքներին մասհանումներ չեն կատարվել:

2014թ. համայնքների բյուջեների միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 8381.6 մլն. դրամ, այդ թվում՝ վարչական բյուջե՝ 241.4 մլն. դրամ և ֆոնդային բյուջե՝ 8140.2 մլն. դրամ: Այն հիմնականում ուղղվել է բյուջեների նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված առկա պարտավորությունների կատարմանը: 2014թ. համայնքների բյուջեների հանրագումարի դեֆիցիտը (պակասորդը) կազմել է 278.2 մլն. դրամ, որից վարչական բյուջեի հավելուրդը կազմել է 4211.3 մլն. դրամ, իսկ ֆոնդային բյուջեի դեֆիցիտը (պակասորդը)՝ 4889.5 մլն. դրամ: Այդ պակասորդը ֆինանսավորվել է հիմնականում ի հաշիվ համայնքների բյուջեների տարեսկզբի ազատ մնացորդների:

Անցած տարիների փորձը ցույց է տալիս, որ համայնքների գերակշիռ մասում ավագանիների ինստիտուտը դեռևս թույլ է և լուրջ հակակշիռ չի հանդիսանում համայն-

քի ղեկավարին: Նրանց դերը հաճախ սահմանափակվում է բյուջեի ընդունումով և բյուջեում կատարվող փոփոխությունների հաստատումով: Դեռևս կան առանձին ղեպքեր, երբ որոշ համայնքներում բյուջեների կազմման ժամանակ որոշ հողվածներում չհիմնավորված ուժճացումներ և նվազեցումներ են կատարվում: Երբեմն բյուջեի եկամտային մասում ներառում են այնպիսի եկամուտներ, որոնք ի սկզբանե պարզ է, որ չեն կատարվելու: Այդ անիրատեսական մուտքերի դիմաց նախատեսվում են նաև չհիմնավորված ծախսեր, որոնք կոռուպցիոն ռիսկեր են պարունակում:

4.4 Պարսփի կառավարումը

2014թ. ընթացքում համայնքները արտաքին աղբյուրներից վարկեր և այլ համայնքներից փոխատվություններ չեն ստացել:

Տարվա ընթացքում ՀՀ կառավարության մի քանի որոշումներով մի քանի համայնքների թույլատրվել է ֆոնդային բյուջեի ժամանակավոր ազատ միջոցներն ուղղել վարչական բյուջեի ղեֆիցիտի ֆինանսավորման նպատակով նույն տարում ֆոնդային բյուջե վերադարձնելու պայմանով: Այսպես, 07.08.2014թ. 804-Ա որոշմամբ թույլատրվել է Արմավիրի մարզի Հուշակերտի գյուղական համայնքի վարչական բյուջեի ղեֆիցիտի ֆինանսավորման նպատակով՝ ֆոնդային բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների 1450.0 հազ. դրամը փոխանցել վարչական բյուջե՝ մինչև 01.11.2014թ. ֆոնդային բյուջե վերադարձնելու պայմանով, 18.09.2014թ. 988-Ա որոշմամբ թույլատրվել է Արմավիրի մարզի Նորապատի համայնքի վարչական բյուջեի ղեֆիցիտի ֆինանսավորման նպատակով՝ ֆոնդային բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների 3500.0 հազ. դրամը փոխանցել վարչական բյուջե՝ մինչև 11.12.2014թ. ֆոնդային բյուջե վերադարձնելու պայմանով, 02.11.2014թ. 1078-Ա որոշմամբ թույլատրվել է Արմավիրի մարզի Արմավիրի համայնքի վարչական բյուջեի ղեֆիցիտի ֆինանսավորման նպատակով՝ ֆոնդային բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների 4000.0 հազ. դրամը փոխանցել վարչական բյուջե՝ մինչև 24.12.2014թ. ֆոնդային բյուջե վերադարձնելու պայմանով: Արդյունքում, համայնքների բյուջեների ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մասին փաստացի տրամադրվել է 8950.0 հազ. դրամ, որն ամբողջությամբ հետ է վերադարձվել:

2014թ. ևս համայնքների կողմից պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու կարգ չի սահմանվել և համայնքները այդ ընթացքում պարտատոմսեր չեն թողարկել:

4.5 Ֆինանսական հաշվետվողականությունը

2014թ. համայնքների հաշվետվությունները սահմանված ձևով և հիմնականում նշված ժամկետներում (եղել են առանձին ուշացման ղեպքեր) ներկայացվել են համապատասխան մարմիններին (համայնքի ավագանուն, մարզպետին, գանձապետարանին և այլն):

2014թ. 4-րդ եռամսյակում, համայնքների բյուջեների հրապարակայնությունն ու քափանցիկությունը ապահովելու նպատակով, համայնքային բյուջեի եռամսյակային և տարեկան հաշվետվությունները, հաստատված բյուջեն և նրանում կատարված փոփոխությունները 915 համայնքներից 914-ը տեղադրել է ցուցատախտակներին և տեսանելի վայրերում, 57-ը հեռարձակվել է հեռուստատեսությամբ, 99-ը տպագրվել է թերթերում, իսկ 580-ը տեղադրվել է ինտերնետային կայք էջում: Չնայած այս ոլորտում առկա առաջընթացին, դեռևս կան փոքր գյուղական համայնքներ, որոնք չեն հրապարակում ոչ միայն իրեց հաշվետվությունները, այլև հաստատված բյուջեները:

2014թ. ընթացքում, 49 քաղաքային համայնքներից 45-ում արդեն գործում են ներքին աուդիտի ստորաբաժանումներ, իսկ մնացած 4 քաղաքային համայնքները (Ալբալա, Թումանյան, Շամլոխ, Դաստակերտ) իրենց ներքին աուդիտը իրականացնում են մարզպետարանների միջոցով, որոնց տարածքում գտնվում է տվյալ քաղաքային համայնքը: Ինչ վերաբերվում է գյուղական համայնքներին, ապա նրանց մի մասը (հատկապես փոքր համայնքները) 2014թ. նույնպես չեն անցել ներքին աուդիտ և շարունակում են աուդիտորի հաստիք չունենալ: Բացատրությունը նույնն է՝ մասնագետներ չկան, միջոցներ նույնպես: Շարունակվել են ներքին աուդիտի աշխատանքների ավտոմատացման, միասնական տեղեկատվական բազա ստեղծելու և ներդնելու ուղղությամբ աշխատանքները:

Դեռևս շատ քիչ են արտաքին աուդիտ անցկացնող համայնքները:

5. ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքի ֆինանսական միջոցների համադասախաձուրթունքը

ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքի ֆինանսական միջոցների համապատասխանության գնահատման ֆինանսական ցուցանիշները 2014թ. համար բերված են ստորև:

Տեղական բյուջեների ծախսերի տեսակարար կշիռները տվյալ երկրի հանրային ծախսերում և համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ-ում) բնութագրում են այդ երկրում իշխանության ապակենտրոնացման աստիճանը³⁶: Եվրամիության երկրներում, 2011թ. տվյալներով, տեղական ինքնակառավարման բոլոր մակարդակների՝ տեղական և տարածաշրջանային, բյուջեների ծախսերի տեսակարար կշիռների միջինը հանրային ծախսերում կազմել է 34.0%, իսկ ՀՆԱ-ում՝ 16.7%, միայն տեղական բյուջեների ծախսերի տեսակարար կշիռների միջինը հանրային ծախսերում կազմել է 24.3%, իսկ ՀՆԱ-ում՝ 11.9% (տե՛ս 2012թ. զեկույցի աղյուսակ 15): Նոր տվյալներ այս ֆինանսական ցուցանիշների գնահատման արդյունքների վերաբերյալ առայժմ հրապարակված չեն:

³⁶ Հայաստանում հանրային ծախսերի տակ դիտարկվում են ՀՀ համախառն բյուջեի ծախսերը, իսկ ՀՆԱ-ի տակ դիտարկվում է անվանական ՀՆԱ-ն:

ՀՀ համայնքների բյուջեների հանրագումարի տեսակարար կշիռը ՀՀ 2014թ. համախմբված բյուջեում եկամուտների գծով կազմել է 9.7%, իսկ ծախսերի գծով՝ 9.0% (հավելված 4): Նախորդ տարվա համեմատ, 2014-ին այս ցուցանիշը եկամուտների գծով աճել է մոտ 0.1%-ով, իսկ ծախսերի գծով՝ մոտ 0.2%-ով: Հայաստանն այդ ցուցանիշներով դեռևս էականորեն զիջում է Եվրամիության երկրներին՝ մոտ 3.8 անգամ փոքր լինելով այդ երկրների միջին ցուցանիշից, և գերազանցում է միայն Հունաստանին, Կիպրոսին ու Մալթային:

Համայնքների բյուջեների ծախսերի հանրագումարի տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում 2010-2013թթ. տատանվել է 2.3-2.45%-ի սահմաններում, իսկ 2014-ին այն աճել է՝ կազմելով 2.53%³⁷: Սակայն, վերջին ցուցանիշը մոտ 6.6 անգամ փոքր է Եվրամիության երկրների միջին ցուցանիշից և գերազանցում է միայն Կիպրոսի ու Մալթայի նույն ցուցանիշին:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Հայաստանում իշխանության ապակենտրոնացման աստիճանը շարունակում է էականորեն ցածր մնալ Եվրամիության երկրներից:

ՀՀ համայնքների 2014թ. բյուջեների ամփոփ եկամուտների և ծախսերի փաստացի կատարողականները տարեկան հաստատված պլանի նկատմամբ ավելի բարձր են, քան տարեկան ճշտված պլանի նկատմամբ (աղյուսակ 14): Այսպես, եկամուտների գծով, ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևան քաղաքի) 2014թ. բյուջեների կատարումը տարեկան հաստատված պլանի նկատմամբ կազմել է 99.8%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 99.1%: Ծախսերի գծով, ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևան քաղաքի) 2014թ. բյուջեների կատարումը տարեկան հաստատված պլանի նկատմամբ կազմել է 95.4%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 92.7%: Սա նշանակում է, որ ՀՀ համայնքներում դեռևս կան որոշակի խնդիրներ՝ կապված բյուջեների եկամուտների և ծախսերի ճշգրիտ կանխատեսումների, պլանավորման և, հետագայում նաև, դրանց ճշտման և պատշաճ կատարման հետ:

Համեմատելով ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևան քաղաքի) 2014թ. բյուջեների եկամուտների և ծախսերի փաստացի կատարողականները 2013թ. նույն ցուցանիշների հետ, կարելի է նկատել, որ, եթե ՀՀ բոլոր համայնքների 2014թ. բյուջեների եկամտային մասերի կատարման տոկոսները (99.8% և 99.1%) որոշ չափով բարձր են (համապատասխանաբար 0.1%-ով և 0.7%-ով) համայնքների 2013թ. բյուջեների եկամտային մասերի կատարման տոկոսներից (99.7% և 98.4%), ապա ՀՀ բոլոր համայնքների 2014թ. բյուջեների ծախսային մասերի կատարման տոկոսները (95.4% և 92.7%) համայնքների 2013թ. բյուջեների ծախսային մասերի կատարման տոկոսներից (93.3% և 91.1%) ավելի բարձր են (համապատասխանաբար 2.1%-ով և 1.6%-ով): Սա նշանակում է, որ, նախորդ տարիների համեմատ, 2014-ին նկատելիորեն բարելավվել է համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի կատարողական կարգապահությունը, ընդ որում այդ բարելավումը տպավորիչ է հատկապես ծախսերի մասով:

³⁷ Հայաստանի 2014թ. տարեկան անվանական ՀՆԱ-ն ընթացիկ գներով կազմել է 4,524.5 մլրդ դրամ, աղբյուրը՝ www.armstat.am:

Աղյուսակ 14. ՀՀ համայնքների 2014թ. բյուջեների ընդհանուր եկամուտների, ծախսերի և հավելուրդի /պակասուրդի տարեկան հաստատված, ճշտված պլանները և փաստացի կատարումը (հազար դրամ)³⁸

Հ/հ	Հոդվածի անվանումը	2014թ.				
		Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման տոկոսը հաստատված պլանի նկատմամբ, %	Կատարման տոկոսը ճշտված պլանի նկատմամբ, %
	ՀՀ բոլոր համայնքների բյուջեների					
1	Եկամուտներ, ընդամենը	114,562,780.3	115,351,765.2	114,359,115.1	99.8	99.1
2	Ծախսեր, ընդամենը	120,196,964.3	123,727,488.1	114,637,363.0	95.4	92.7
3	Հավելուրդ (+) կամ պակասուրդ (-)	-5,634,184.1	-8,375,722.9	-278,247.9	x	x
	այդ թվում՝ Երևան քաղաքի բյուջեի					
1	Եկամուտներ, ընդամենը	69,091,815.9	68,980,812.8	68,013,073.5	98.4	98.6
2	Ծախսեր, ընդամենը	69,491,815.9	71,003,506.1	69,094,291.2	99.4	97.3
3	Հավելուրդ (+) կամ պակասուրդ (-)	-400,000.0	-2,022,693.3	-1,081,217.7	x	x
	այդ թվում՝ ՀՀ բոլոր համայնքների՝ առանց Երևան քաղաքի, բյուջեների					
1	Եկամուտներ, ընդամենը	45,470,964.4	46,370,952.4	46,346,041.6	101.9	99.9
2	Ծախսեր, ընդամենը	50,705,148.4	52,723,982.0	45,543,071.8	89.8	86.4
3	Հավելուրդ (+) կամ պակասուրդ (-)	-5,234,184.1	-6,353,029.6	+802,969.8	x	x

Երևան քաղաքի 2014թ. բյուջեի եկամուտների գծով հաստատված և ճշտված պլանները կատարվել են համապատասխանաբար 98.4%-ով և 98.6%-ով, իսկ ծախսերի գծով՝ համապատասխանաբար 99.4%-ով և 97.3%-ով (աղյուսակ 14): Փաստորեն, Երևան քաղաքի 2014թ. հաստատված և ճշտված բյուջեների եկամուտների կատարման մակարդակները համապատասխանաբար մոտ 0.4%-ով և 1.8%-ով ավելի ցածր են, քան ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2014թ. հաստատված և ճշտված բյուջեների եկամուտների կատարման մակարդակները: Իսկ Երևան քաղաքի 2014թ. հաստատված և ճշտված բյուջեների ծախսերի կատարման մա-

³⁸ Աղբյուրները՝ www.minfin.am և www.yerevan.am:

կարդակներն, ընդհակառակը, համապատասխանաբար մոտ 4.0%-ով և 4.6%-ով ավելի բարձր են, քան ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2014թ. հաստատված և ճշտված բյուջեների ծախսերի կատարման մակարդակները:

Համեմատելով Երևանի 2014թ. հաստատված և ճշտված բյուջեների եկամուտների և ծախսերի փաստացի կատարողականները 2013թ. նույն ցուցանիշների հետ, կարելի է նկատել, որ Երևանի 2014թ. հաստատված և ճշտված բյուջեների և՛ եկամտային (98.4% և 98.6%), և՛ ծախսային (99.4% և 97.3%) մասերի կատարման տոկոսները համապատասխանաբար մոտ 1.4%-ով և 0.5%-ով, 5.3%-ով և 2.3%-ով աճել են՝ Երևանի 2013թ. հաստատված և ճշտված բյուջեների եկամտային (97.0% և 98.1%) և ծախսային (94.1% և 95.0%) մասերի կատարման տոկոսների համեմատ: Ինչպես երևում է, Երևանի 2014թ. բյուջեի կատարողական բարելավումը տպավորիչ է հատկապես ծախսերի մասով:

Համայնքների ֆինանսական ապահովվածության կարևոր հարաբերական ցուցանիշներից են բնակչության մեկ շնչին ընկնող՝ համայնքների բյուջեների եկամուտը և ծախսը: ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2010-2014թթ. բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (աղյուսակ 15, գծապատկեր 1) բացարձակ արժեքով տարեցտարի զգալիորեն աճել է՝ 2010թ. 26,033 ՀՀ դրամից (մոտ 69.6 ԱՄՆ դոլարից) 2014-ին հասնելով 37,985 դրամի (մոտ 91.3 դոլարի): Համապատասխանաբար, ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2010-2014թթ. բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (աղյուսակ 15, գծապատկեր 2)

Աղյուսակ 15. ՀՀ համայնքների 2010-2014թթ. բյուջեների՝ բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտը և ծախսը (ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով)³⁹

Ցուցանիշի անվանումը	2010	2011	2012	2013	2014
ՀՀ (ներառյալ՝ Երևանի) բնակչության ընդհանուր թիվը տվյալ տարվա տարեվերջի դրությամբ (հազ. մարդ)	3,262.6	3,021.4	3,026.9	3,017.1	3,010.6
Երևանի բնակչության ընդհանուր թիվը տվյալ տարվա տարեվերջի դրությամբ (հազ. մարդ)	1,060.1	1,061.1	1,066.3	1,068.3	1,071.5
ՀՀ (առանց Երևանի) բնակչության ընդհանուր թիվը տվյալ տարվա տարեվերջի դրությամբ (հազ. մարդ)	2,202.5	1,960.3	1,960.6	1,948.8	1,939.1
Մեկ ԱՄՆ դոլարի տարվա միջին փոխարժեքը (ՀՀ դրամ)	374	373	402	410	416
Տարեկան միջին գնաճը (%)	108.2	107.7	102.6	105.8	103.0
ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ)	26,033	28,908	31,556	35,068	37,985
Երևանի բյուջեի փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ)	46,019	48,203	53,688	59,597	63,475


³⁹ Աղբյուրները՝ www.armstat.am և www.minfin.am:

ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ)	16,413	18,464	19,519	21,621	23,901
ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	69.6	77.5	78.5	85.5	91.3
Երևանի բյուջեի փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	123.0	129.2	133.6	145.4	152.6
ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	43.9	49.5	48.6	52.7	57.5
ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ)	25,325	29,494	32,196	34,182	38,078
Երևանի բյուջեի փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ)	45,175	49,472	55,412	58,187	64,484
ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ)	15,770	18,680	19,570	21,022	23,487
ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	67.7	79.1	80.1	83.4	91.5
Երևանի բյուջեի փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	120.8	132.6	137.8	141.9	155.0
ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	42.2	50.1	48.9	51.3	56.5


2010թ. 25,325 դրամից (մոտ 67.7 դոլարից) 2014-ին հասել է 38,078 դրամի (մոտ 91.5 դոլարի):

Երևանի 2010-2014թթ. բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (աղ-յուսակ 15) բացարձակ արժեքով տարեցտարի զգալիորեն աճել է՝ 2010թ. 46,019 դրամից (մոտ 123.0 դոլարից) 2014-ին հասնելով 63,475 դրամի (մոտ 152.6 դոլարի): Համապատասխանաբար, Երևանի 2010-2014թթ. բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով 2010թ. 45,175 դրամից (մոտ 120.8 դոլարից) 2014-ին հասել է 64,484 դրամի (մոտ 155.0 դոլարի):

Գծապատկեր 1. ՀՀ համայնքների 2010-2014թթ. բյուջեների՝ բնակչության մեկ շնչին ընկնող փաստացի եկամուտը (ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով)



Գծապատկեր 2. ՀՀ համայնքների 2010-2014թթ. բյուջեների՝ բնակչության մեկ շնչին ընկնող փաստացի ծախսը (ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով)



ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2010-2014թթ. բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (աղյուսակ 15) բացարձակ արժեքով՝ արտահայտված ՀՀ դրամով (ԱՄՆ դոլարով), տարեցտարի նկատելիորոն աճել է՝ 2010թ. 16,413 դրամից (մոտ 43.9 դոլարից) 2014-ին հասնելով 23,901 դրամի (մոտ 57.5 դոլարի): Համապատասխանաբար, ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2010-2014թթ.

բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով 2010թ. 15,770 դրամից (մոտ 42.2 դոլարից) 2014-ին հասել է 23,487 դրամի (մոտ 56.5 դոլարի):

Մակայն դրա հետ մեկտեղ, եթե հաշվի առնենք նաև Հայաստանում տարեցուտարի տեղի ունեցած զգալի գնաճը, ապա բնակչության մեկ շնչին մատուցվող համայնքային ծառայությունների ընդհանուր ծախսերի չափը տարիների ընթացքում զգալի փոփոխության չի ենթարկվել և նկատելի դրական ազդեցություն չի ունեցել բնակչության ընդհանուր կենսամակարդակի վրա, իսկ գյուղական և փոքր ու միջին քաղաքային համայնքների բնակչության կենսամակարդակի վրա, ընդհակառակը, այն նույնիսկ բացասական ազդեցություն է ունեցել:

Ցուցանիշների առանձին խումբ են կազմում ՏԻՄ-երին օրենքով տրված լիազորությունների ֆինանսական ապահովումն ըստ նրանց գործունեության բնագավառների կամ **համայնքների բյուջեների ծախսերն ըստ գործառական դասակարգման** (աղյուսակ 16):

2014-ին ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը **ՀՀ համայնքների (ներառյալ Երևան քաղաքի) բյուջեների** ընդհանուր ծախսերում (զծապատկեր 3) կազմել է 22.7%, որը 1.1%-ով ցածր է 2013-ի նույն ցուցանիշից (23.8%):

Համայնքների 2014թ. բյուջեների ընդհանուր ծախսերում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն կրթության ոլորտի ծախսերը՝ 30.2% (2013-ին՝ 30.4%), այդ թվում՝ նախադպրոցական կրթություն՝ 12.2%, տարրական ընդհանուր կրթություն՝ 5.5%, միջնակարգ ընդհանուր կրթություն՝ 6.2%, արտադպրոցական դաստիարակություն՝ 5.7% և այլ դասերին չպատկանող կրթություն՝ 0.6%:

2013-ի համեմատ մոտ 0.5%-ով աճել է հանգիստ, մշակույթ և կրոնի ոլորտին հատկացված ծախսերի տեսակարար կշիռը ՀՀ համայնքների (ներառյալ Երևան քաղաքի) 2014թ. բյուջեների ընդհանուր ծախսերում՝ 7.0% (2013-ին՝ 6.5%): Սոցիալական ուղղվածություն ունեցող մյուս ոլորտներին ՀՀ համայնքների 2014թ. բյուջեներից հատկացված ծախսերի տեսակարար կշիռներն առանձնապես մեծ տեսակարար կշիռ չունեն ընդհանուր ծախսերում և կազմում են համապատասխանաբար՝ սոցիալական պաշտպանություն՝ 3.5% (2013-ին՝ 3.4%), առողջապահություն՝ 0.1% (2013-ին՝ 0.2%):

ՀՀ համայնքների (ներառյալ Երևան քաղաքի) 2014թ. բյուջեների ընդհանուր ծախսերում տնտեսական ուղղվածություն ունեցող հանրային ծառայությունների մատուցման ծախսերի տեսակարար կշիռները, 2013-ի համեմատ, զգալիորեն փոխվել են: Այսպես, այդ ցուցանիշը նկատելիորեն նվազել է տրանսպորտի ոլորտում՝ կազմելով 21.1% (2013-ին՝ 23.6%), որը պայմանավորված է Երևանի բյուջեում նույն ցուցանիշի զգալի նվազմամբ՝ 30.8% (2013-ին՝ 34.8%), ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում (աղբահանում, կեղտաջրերի հեռացում և այլն)՝ կազմելով 9.6% (2013-ին՝ 10.5%): Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների ոլորտում (ջրամատակարարում, փողոցների լուսավորում, համայնքային զարգացում և այլն) այդ ցուցանիշն, ընդհակառակը, զգալիորեն աճել է՝ կազմելով 12.6% (2013-ին՝ 9.7%):

Երևան քաղաքի 2014թ. բյուջեում ըստ գործառական դասակարգման ծախսերի տեսակարար կշիռները զգալիորեն տարբերվում են ՀՀ բոլոր համայնքների բյուջեների ծախսերի տեսակարար կշիռներից (աղյուսակ 16): Այսպես, Երևանի 2014թ. բյուջեում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը 2 անգամից ավելի ցածր է ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների նույն ցուցանիշից՝ կազմելով 10.1% (2013-ին՝ 10.6%), իսկ ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների նույն ցուցանիշից (41.7%) այն ցածր է ավելի քան 4 անգամ:

Կրթության ոլորտի ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում, ընդհակառակը, ավելի բարձր է Երևանի 2014թ. բյուջեում, քան ՀՀ բոլոր համայնքների բյուջեներում՝ կազմելով 33.6% (2013-ին՝ 34.0%), այդ թվում՝ նախադպրոցական կրթություն՝ 9.7%, տարրական ընդհանուր կրթություն՝ 9.0%, միջնակարգ ընդհանուր կրթություն՝ 10.1%, արտադպրոցական դաստիարակություն՝ 4.1% և այլ դասերին չպատկանող կրթություն՝ 0.7%: Սա հիմնականում պայմանավորված է Երևանում հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության ոլորտում պետության կողմից համապատասխան պատվիրակված լիազորությունների իրականացմամբ և դրանց համար ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորմամբ:

Սոցիալական ուղղվածություն ունեցող մյուս ոլորտներին Երևանի 2014թ. բյուջեից հատկացված ծախսերի տեսակարար կշիռները, նախորդ տարվա համեմատ, աննշան չափով փոփոխվել են՝ հանգիստ, մշակույթ և կրոն՝ 5.0% (2013-ին՝ 4.4%)՝ սոցիալական պաշտպանություն՝ 3.2% (2013-ին՝ 3.1%), առողջապահություն՝ 0.2% (2013-ին՝ 0.2%):

Երևան քաղաքի 2014թ. բյուջեի ընդհանուր ծախսերում տնտեսական ուղղվածություն ունեցող հանրային ծառայությունների մատուցման ծախսերի տեսակարար կշիռները, նախորդ տարվա համեմատ, զգալի չափով փոփոխվել են և համապատասխանաբար կազմել են՝ տրանսպորտի ոլորտում՝ 30.8% (2013-ին՝ 34.8%), բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների ոլորտում (ջրամատակարարում, փողոցների լուսավորում, համայնքային զարգացում և այլն)՝ 14.9% (2013-ին՝ 11.0%), շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում (աղբահանում, կանաչապատում և այլն)՝ 10.5% (2013-ին՝ 11.5%) և այլն:

ՀՀ համայնքների (առանց Երևան քաղաքի) 2014թ. բյուջեների ըստ գործառական դասակարգման ծախսերի տեսակարար կշիռներն էականորեն տարբերվում են ինչպես ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2014թ. բյուջեների, այնպես էլ Երևանի 2014թ. բյուջեի ծախսերի տեսակարար կշիռներից ընդհանուր ծախսերում (աղյուսակ 16): Այսպես, ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2014թ. բյուջեներում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը դեռևս ամենաբարձրն է և կազմում է ընդհանուր ծախսերի մոտ 41.7% (2013-ին՝ 43.7%):

Ընդհանուր ծախսերում երկրորդ բարձր տեսակարար կշիռն ունեն կրթության ոլորտի ծախսերը՝ կազմելով 25.1% (2013-ին՝ 24.9%), այդ թվում՝ նախադպրոցական կրթություն՝ 15.9% (2013-ին 15.6%), տարրական ընդհանուր կրթություն՝ 0.2%,

միջնակարգ ընդհանուր կրթություն՝ 0.2%, արտադպրոցական դաստիարակություն՝ 8.2% և այլ դասերին չպատկանող կրթություն՝ 0.6%:

Սոցիալական ուղղվածություն ունեցող մյուս ոլորտներին ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2014թ. բյուջեներից հատկացված ծախսերի տեսակարար կշիռները, նախորդ տարվա համեմատ, մնացել են մոտավորապես նույն մակարդակի վրա՝ հանգիստ, մշակույթ և կրոն՝ 10.1% (2013-ին՝ 9.7%), սոցիալական պաշտպանություն՝ 4.0% (2013-ին՝ 4.0%), առողջապահություն՝ 0.1% (2013-ին՝ 0.2%):

ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2014թ. բյուջեների ընդհանուր ծախսերում տնտեսական ուղղվածություն ունեցող հանրային ծառայությունների մատուցման ծախսերի տեսակարար կշիռները համապատասխանաբար կազմել են՝ բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների ոլորտում (փողոցների լուսավորում, ջրամատակարարում, համայնքային զարգացում և այլն)՝ 9.2% (2013-ին՝ 7.8%), շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում (աղբահանում, կեղտաջրերի հեռացում և այլն)՝ 8.3% (2013-ին՝ 8.9%), տրանսպորտի ոլորտում՝ 6.4% (2013-ին՝ 6.6%), և այլն:

ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքների ֆինանսական միջոցների համապատասխանության ցուցանիշներից է նաև «**Ֆինանսավորվող կամ թերի ֆինանսավորվող լիազորությունների**» առկայությունը: Կան ՏԻՄ-երի գործունեության՝ ըստ բնագավառների (ոլորտների), օրենքով սահմանված բազմաթիվ լիազորություններ (այդ թվում՝ հանրային ծառայությունների մատուցման), որոնք ՀՀ շատ համայնքներում (հատկապես գյուղական ու փոքր քաղաքային) ընդհանրապես չեն իրականացվում կամ իրականացվում են մասնակիորեն (հիմնականում՝ ֆինանսական միջոցների սղության, բայց նաև՝ այլ պատճառներով): Այդպիսի լիազորությունների թվին են դասվում կենսական նշանակություն ունեցող այնպիսի հանրային ծառայությունների մատուցումը, ինչպիսիք են, մասնավորապես, աղբահանությունը, կանաչապատումը, ջրամատակարարումը և ջրահեռացումը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, բնակարանային շինարարությունը և կոմունալ ծառայությունները, համայնքային զարգացումը և այլն:

Համայնքների բյուջեների ծախսերի տեսակների (ընթացիկ և կապիտալ/ոչ ֆինանսական ակտիվների գծով) հարաբերակցությունների մասին կարելի է պատկերացում կազմել՝ **դիտարկելով բյուջետային ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման**: ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևանի) 2014թ. բյուջեների կապիտալ / ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է 10.6%, սակայն, եթե հաշվի առնենք նաև ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի (15,354,293.2 հազ. դրամ կամ 13.4%) հաշվին կատարված կապիտալ ծախսերը, ապա կապիտալ ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է 24.0% (աղյուսակ 17):

Աղյուսակ 16. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի և առանց Երևանի) և Երևանի 2014թ. բյուջեների փաստացի ծախսերն՝ ըստ գործառական դասակարգման

Հ/հ	Ծախսի անվանումը	2014թ.					
		ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների փաստացի ծախսերը, հազ. դրամ	Տեսակարար կշիռը, %	Երևանի բյուջեի փաստացի ծախսերը, հազ. դրամ	Տեսակարար կշիռը, %	ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի ծախսերը, հազ. դրամ	Տեսակարար կշիռը, %
	Ընդամենը ծախսեր*, այդ թվում՝	114,637,363.0	100	69,094,291.2	100	45,543,071.8	100
	Վարչական բյուջե	109,685,976.2	95.7	67,096,294.4	97.1	42,589,681.8	93.5
	Ֆոնդային բյուջե	12,171,839.6	10.6	8,012,196.9	11.6	4,159,642.7	9.1
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	25,976,680.9	22.7	6,978,607.5	10.1	18,998,073.4	41.7
2	Պաշտպանություն	43,594.6	0.0	41,600.0	0.1	1,994.6	0.0
3	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	2,670.0	0.0	0.0	0.0	2,670.0	0.0
4	Տնտեսական հարաբերություններ, այդ թվում՝	10,988,004.3	9.6	10,589,647.2	15.3	398,357.1	0.9
4.1	Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ	19,197.4	0.0	0.0	0.0	19,197.4	0.0
4.2	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն	811,281.8	0.7	190,468.4	0.3	620,813.4	1.4
4.3	Վառելիք և էներգետիկա	135,803.3	0.1	0.0	0.0	135,803.3	0.3
4.4	Լեռնաարդյունահանում, արդյունաբերություն և շինարարություն	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
4.5	Տրանսպորտ	24,239,336.0	21.1	21,314,923.8	30.8	2,924,412.2	6.4


4.6	Կապ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
4.7	Այլ բնագավառներ	14,826.7	0.0	6,000.0	0.0	8,826.7	0.0
4.8	Տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	20,186.0	0.0	0.0	0.0	20,186.0	0.0
4.9	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-14,252,626.9	-12.4	-10,921,745.1	-15.8	-3,330,881.8	-7.3
5	Շրջակա միջավայրի պաշտպանություն, այդ թվում՝	11,043,866.9	9.6	7,248,431.3	10.5	3,795,435.6	8.3
5.1	Աղբահանում	8,290,227.8	7.2	5,098,745.7	7.4	3,191,482.1	7.0
5.2	Կեղտաջրերի հեռացում	138,013.9	0.1	0.0	0.0	138,013.9	0.3
5.3	Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար	36,225.6	0.0	20,560.9	0.0	15,664.7	0.0
5.4	Կենսաբազմազանության և բնության պաշտպանություն	59,171.8	0.1	0.0	0.0	59,171.8	0.1
5.5	Շրջակա միջավայրի պաշտպանության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	7,649.5	0.0	0.0	0.0	7,649.5	0.0
5.6	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	2,512,578.3	2.2	2,129,124.7	3.1	383,453.6	0.8
6	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն, այդ թվում՝	14,475,909.1	12.6	10,263,409.3	14.9	4,212,499.8	9.2
6.1	Բնակարանային շինարարություն	2,571,947.4	2.2	2,145,689.5	3.1	426,257.9	0.9
6.2	Համայնքային զարգացում	463,040.4	0.4	0.0	0.0	463,040.4	1.0
6.3	Ջրամատակարարում	3,623,987.6	3.2	2,875,169.1	4.2	748,818.5	1.6
6.4	Փողոցների լուսավորում	3,666,697.7	3.2	2,221,948.2	3.2	1,444,749.5	3.2
6.5	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	28,800.8	0.0	9,958.6	0.0	18,842.2	0.0
6.6	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	4,121,435.1	3.6	3,010,643.8	4.4	1,110,791.3	2.4

7	Առողջապահություն	158,530.2	0.1	121,999.3	0.2	36,530.9	0.1
8	Հանգիստ, մշակույթ և կրոն	8,030,628.5	7.0	3,436,443.8	5.0	4,594,184.7	10.1
9	Կրթություն	34,636,593.1	30.2	23,219,482.0	33.6	11,417,111.1	25.1
9.1	Նախադպրոցական կրթություն	13,948,463.0	12.2	6,709,671.8	9.7	7,238,791.2	15.9
9.2	Տարրական ընդհանուր կրթություն	6,305,009.2	5.5	6,221,314.8	9.0	83,694.4	0.2
9.3	Միջնակարգ ընդհանուր կրթություն	7,076,925.7	6.2	6,983,152.0	10.1	93,773.7	0.2
9.4	Արտադպրոցական դաստիարակություն	6,577,499.8	5.7	2,828,435.7	4.1	3,749,064.1	8.2
9.5	Կրթություն (այլ դասերին չպատկանող)	728,695.4	0.6	476,907.7	0.7	251,787.7	0.6
10	Սոցիալական պաշտպանություն	4,021,334.6	3.5	2,198,899.5	3.2	1,822,435.1	4.0
11	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր*	5,259,550.9	4.6	4,995,771.4	7.2	263,779.5	0.6

*) Առանց վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարված հատկացումների.

ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեներում՝ 7,220,452.8 հազ. դրամ, Երևանի բյուջեում՝ 6,014,200.1 հազ. դրամ, ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեներում՝ 1,206,252.7 հազ. դրամ:

Գծապատկեր 3. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2014թ. բյուջեների փաստացի ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում (ըստ գործառնական դասակարգման)



Գիտարկելով ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի հարաբերակցություններն ընդհանուր ծախսերում վերջին 5 տարիների՝ 2010-2014թթ. համար (զժապատկեր 4), տեսնում ենք, որ եթե 2010-2011թթ. ժամանակահատվածում կապիտալ ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում 24.3%-ից աճել է՝ հասնելով մինչև 28.9%-ի, ապա 2012-2013թթ. ընթացքում այն դրսևորել է նվազման միտում՝ իջնելով մինչև 22.4%-ի, իսկ 2014-ին այն նորից դրսևորել է աճի միտում՝ հասնելով մինչև 24%-ի:

Ընթացիկ և կապիտալ ծախսերի հարաբերակցությունների պատկերն այլ է Երևան քաղաքի 2010-2014թթ. բյուջեներում: Այդ բյուջեների ընդհանուր ծախսերում կապիտալ ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է համապատասխանաբար 8.7%, 7.6%, 12.6%, 11.4% և 11.6%: Սակայն, եթե հաշվի առնենք նաև ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի հաշվին կատարված կապիտալ ծախսերը, ապա կապիտալ ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է համապատասխանաբար 26.1%, 32.8%, 28.0%, 26.8% և 29% (աղյուսակ 17, զժապատկեր 5), որոնք զգալիորեն ավելի բարձր են ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների նույն ցուցանիշներից և էականորեն բարձր են ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևանի) բյուջեների նույն ցուցանիշներից:

ՏԻՄ-երի գոծունեության արդյունավետ կազմակերպման տեսանկյունից, կարևոր ֆինանսական ցուցանիշներից է նաև համայնքային աշխատողների աշխատանքի վարձատրության՝ **աշխատավարձերի և հավելավճարների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր ծախսերում**: 2014-ին ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևանի) ՏԻՄ-երի, դրանց ենթակա բյուջետային և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերի ու հավելավճարների փաստացի ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է 17.7% (աղյուսակ 17): Համեմատելով վերջին ցուցանիշը 2012-2013թթ.-ի նույն ցուցանիշների հետ (համապատասխանաբար 2012թ.՝ 18.8%, և 2013թ.՝ 19.0%), պետք է արձանագրել 2014-ին դրա նվազման դրական միտումը:

Երևան քաղաքի 2014թ. բյուջեում այդ ցուցանիշը կազմել է 7.2% (աղյուսակ 17), որը 2012-2013թթ.-ի համեմատ (համապատասխանաբար 7.8% և 7.6%) նորից դրսևորել է նվազման դրական միտում:

2014-ին ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևանի) ՏԻՄ-երի, դրանց ենթակա բյուջետային և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերի ու հավելավճարների փաստացի ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է 33.7% (աղյուսակ 17): Համեմատելով վերջին ցուցանիշը 2012-2013թթ.-ի նույն ցուցանիշների հետ (համապատասխանաբար 35.8% և 36.2%)՝ պետք է նորից արձանագրել 2014-ին դրա նվազման դրական միտումը:

Պետք է նաև նկատել, որ ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևանի) համար հաշվարկված վերջին ցուցանիշն էականորեն բարձր է Երևան քաղաքի համար հաշվարկված նույն ցուցանիշից: Դա պայմանավորված է հիմնականում երկու հանգամանքներով՝ համայնքների (առանց Երևանի) աշխատակազմերի ու ենթա-

կա կազմակերպությունների աստիճանական ուռճացումով և համայնքների բյուջեների եկամուտների անբավարարությամբ: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ օպտիմալացնելու համայնքային աշխատողների թվաքանակը և դրա հաշվին նաև բարձրացնելու նրանց աշխատավարձերի չափերը:


Աղյուսակ 17. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի և առանց Երևանի) և Երևանի 2014թ. բյուջեների փաստացի ծախսերն՝ ըստ տնտեսագիտական դասակարգման

Հ/հ	Ծախսի անվանումը	2014թ.					
		ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների փաստացի ծախսերը, հազ. դրամ	Տեսակարար կշիռը, %	Երևանի բյուջեի փաստացի ծախսերը, հազ. դրամ	Տեսակարար կշիռը, %	ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի ծախսերը, հազ. դրամ	Տեսակարար կշիռը, %
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ* (Ա+Բ+Գ)	114,637,363.0	100	69,094,291.2	100	45,543,071.8	100
Ա	ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ*	102,469,164.8	89.4	61,082,094.4	88.4	41,387,070.4	90.9
1	Աշխատանքի վարձատրություն, այդ թվում՝	20,338,681.3	17.7	4,990,604.0	7.2	15,348,077.3	33.7
	<i>Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ</i>	20,337,578.1	17.7	4,990,604.0	7.2	15,346,974.1	33.7
	<i>Փաստացի սոցիալական ապահովության վճարներ</i>	1,103.2	0.0	0.0	0.0	1,103.2	0.0
2	Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	38,073,376.5	33.2	27,289,351.5	39.5	10,784,025.0	23.7
3	Տոկոսավճարներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
4	Սուբսիդիաներ	23,118,526.1	20.2	13,304,390.3	19.3	9,814,135.8	21.5
5	Դրամաշնորհներ	4,838,550.0	4.2	1,798,257.6	2.6	3,040,292.4	6.7
6	Մոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	3,022,209.6	2.6	1,235,026.4	1.9	1,787,183.2	3.9
7	Այլ ծախսեր*, այդ թվում՝	13,077,821.4	11.4	12,464,464.5	18.0	613,356.9	1.3
	<i>Պահուստային միջոցներ*</i>	5,259,550.9	4.9	4,995,771.4	7.2	263,779.5	0.6


	Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ	7,220,452.8	6.3	6,014,200.0	8.7	1,206,252.8	2.6
Բ	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱՆՍԵՐ	27,522,491.4	24.0	20,029,666.7	29.0	7,492,824.7	16.5
1	Հիմնական միջոցներ	27,370,885.2	23.9	19,900,119.7	28.8	7,470,765.5	16.4
2	Պաշարներ	140,904.7	0.1	129,547.0	0.2	11,357.7	0.0
3	Բարձրարժեք ակտիվներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
4	Չարտադրված ակտիվներ	10,701.5	0.0	0.0	0.0	10,701.5	0.0
Գ	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	-15,354,293.2	-13.4	-12,017,469.8	-17.4	-3,336,823.4	-7.3
1	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	-1,177,565.4	-1.0	-902,088.8	-1.3	-275,476.6	-0.6
2	Պաշարների իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
3	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
4	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	-14,176,727.8	-12.4	-11,115,381.0	-16.1	-3,061,346.8	-6.7

*) Առանց վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարված հատկացումների

Պժապատկեր 4. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2010-2014թթ. բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում, %



Պժապատկեր 5. Երևանի քաղաքի 2010-2014թթ. բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում, %



Ընդհանրապես, անհրաժեշտ է հետևողական աշխատանքներ տանել՝ ընդլայնելու համայնքների բյուջեների եկամուտների աղբյուրները և բարձրացնելու սեփական եկամուտների հավաքագրման մակարդակներն ու բյուջետային ծախսերի կատարման արդյունավետությունը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 7¹ գլխում սահմանված վարչական հսկողության դրույթների, ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող մարմինները մարզպետներն են, իսկ Երևան քաղաքի ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման նկատմամբ՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը: ՏԻՄ-երի նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ իրավական հսկողություն իրականացնող բարձրագույն մարմինը ՀՀ արդարադատության նախարարությունն է, իսկ օրենքով սահմանված դեպքերում մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինն այն պետական մարմինն է, որի իրավասության շրջանակներում է տվյալ լիազորությունը:

Մասնավորապես, համայնքային աշխատողների աշխատավարձերի գծով ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ, բացի մարզպետներից, վարչական հսկողություն կարող են իրականացնել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը՝ իր լիազորությունների սահմաններում, ինչպես նաև ՀՀ վերահսկիչ պալատը՝ համայնքներում պարբերական ստուգումներ անցկացնելու ընթացքում: ՀՀ աշխատանքի պետական տեսչությունն օրենքով սահմանված կարգով իրականացնում է պետական վերահսկողություն ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ: Համաձայն «Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի, համայնքների աշխատակազմերը և համայնքային այլ կազմակերպությունները, որպես գործատուներ, պարտավոր են ՀՀ աշխատանքի պետական տեսչություն ներկայացնել եռամսյակային և տարեկան հաշվետվություններ՝ իրենց աշխատողների թվի, աշխատավարձի (ըստ մասնագիտությունների), աշխատավայրում տեղի ունեցած դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների մասին:

6. Համայնքի խնդիրներին վարչական կառուցվածքների, մարդկային և տեղեկատվական ռեսուրսների համառոտասաս-խանությունը, միջազգային աջակցությունը

6.1 ՏԻՄ-երի և համայնքների աշխատակազմերի ընդհանուր կարողությունները

ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների պատշաճ կատարումը մեծապես պայմանավորված է ՏԻՄ-երի և համայնքի աշխատակազմի կադրային ներուժով, ինչը անհնար է ապահովել հատկապես փոքր բնակչություն ունեցող համայնքներում: Նման համայնքներում ոչ միայն համայնքների աշխատակազմերն են փոքրաթիվ, այլև, սովորաբար, դրանք դժվար են համալրվում անհրաժեշտ կրթական ու մասնագիտական կարողությունների տեր կադրերով:

Չնայած ՏԻՄ-երի կարողությունների բարձրացմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր են իրականացվում սակայն 2014-ին էլ այդ կարողությունները բավարար մակարդակի չբերվեցին:

Համայնքների աշխատակազմերում գերակշռող է համայնքային ծառայողների տեսակարար կշիռը: Համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցվում են մրցույթով, որը ենթադրում է ավելի որակյալ կադրերով համալրում: Սակայն դա այդպես է համեմատաբար մեծաթիվ բնակչություն ունեցող համայնքներում, իսկ փոքրաթիվ բնակչություն ունեցող շատ համայնքներում մույնիսկ մրցույթները չեն կայանում:

2014-ին թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել են 1308 մրցույթներ, որոնցից կայացել է 1023-ը կամ շուրջ 78%-ը: Հրապարակայնությունն ապահովելու նպատակով մրցույթների մասին հայտարարությունները տեղադրվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարության հայտարարությունների վահանակում և ինտերնետային կայքում: Մրցույթների մասին տեղեկությունները տրամադրվել են նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությանը⁴⁰:

2014 թվականի ընթացքում համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցվել է 5 անձ: Համայնքների ղեկավարների և աշխատակազմերի քարտուղարների կողմից կադրերի ռեզերվ 388 հարցում է կատարվել շուրջ 800 ժամանակավոր թափուր պաշտոններ ժամկետային աշխատանքային պայմանագրերով համալրելու համար, որոնց մասին կազմված հայտարարությունները տեղադրվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարության հայտարարությունների վահանակում և ինտերնետային կայքում: Հարցում արված պաշտոններից 2-ի համար կադրերի ռեզերվից ներկայացվել են համապատասխան թեկնածուներ, որի արդյունքում նշված անձինք օրենքով սահմանված կարգով հանվել են կադրերի ռեզերվից՝ նրանց հետ համայնքային ծառայության պաշտոններում ժամկետային

⁴⁰ www.mta.gov.am:

աշխատանքային պայմանագրեր կնքելու հիմքով⁴¹:

Որպեսզի համայնքների աշխատակազմերը մշտապես հնարավորություն ունենան բարձրացնելու իրենց աշխատանքային կարողությունները, երեք տարին մեկ անգամ համայնքային ծառայողների համար անցկացվում է ատեստավորում: 2014 թվականի ընթացքում ատեստավորվել են 1529 համայնքային ծառայողներ: Ատեստավորման արդյունքներով 13 համայնքային ծառայողներ ազատվել են զբաղեցրած պաշտոններից՝ այդ պաշտոններին չհամապատասխանելու հիմքով:

Համայնքների ղեկավարների մեծ մասն ունի բարձրագույն կրթություն: Ի տարբերություն 2013 թվականի, 2014 թվականին մարզային կտրվածքով համայնքների ղեկավարների կրթության վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալներ չկան: Վիճակագրական տվյալներ չկան նաև համայնքների ավագանիների կրթության վերաբերյալ:

Թեև «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը կոչված է համայնքային ծառայողներին պաշտպանելու իրավիճակային փոփոխություններից, գործնական կյանքում նրանք շարունակում են մեծապես կախված մնալ համայնքի ղեկավարների կամայական որոշումներից:

Համայնքի աշխատակազմի ֆունկցիոնալ կառուցվածքը

Համայնքի աշխատակազմի ֆունկցիոնալ կառուցվածքը մեծապես կախված է համայնքի մեծությունից: Փոքրաթիվ բնակչություն ունեցող համայնքների աշխատակազմերը փոքր են, իսկ կառուցվածքը շատ պարզագույն:

2014 թվականին համայնքի աշխատակազմի ֆունկցիոնալ կառուցվածքի առումով փոփոխություններ չեն եղել:

Գործակալության, փաստաթղթաշրջանառության և ռեզիսրների համակարգ

Տարվա ընթացքում 150 ՏԻՄ-երում աշխատանքներ են տարվել էլեկտրոնային փաստաթղթաշարժի ներդրման ուղղությամբ, որոնց արդյունքում բոլոր 48 քաղաքապետարաններում և շուրջ 455 գյուղապետարաններում (ընդհանուր թվով ավելի քան 503 համայնքներում) շահագործվող համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերն (ՀԿՏՀ) իրենց փաստաթղթաշարժի բաղադրիչի միջոցով հնարավորություն ունեն էլեկտրոնային փաստաթղթեր փոխանակելու պետական կառավարման մարմիններում շահագործվող փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգի հետ: Տարվա ընթացքում 90 համայնքներում գործարկվել են համացանցային պաշտոնական կայքեր, իսկ նման կայքեր շահագործող համայնքների թիվը 240-ն է:

ՀՀ բոլոր համայնքները ներառվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից շահագործվող պաշտոնական էլեկտրոնային փոստի ծառա-

⁴¹ www.mta.gov.am:

յության՝ @mta.gov.am դոմենային տիրույթում, ինչի արդյունքում բոլոր քաղաքապետարանները և գյուղապետարաններն ունեն էլեկտրոնային փոստի միասնական սկզբունքների վրա ձևավորված հասցեներ⁴²:

Պայմանավորված «Հողի հարկի և գույքահարկի գծով առաջացած ապառքների մասին», «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների փաթեթի ընդունմամբ՝ անհրաժեշտություն էր առաջացել համապատասխան փոփոխություններ իրականացնելու ՀՀ համայնքների կողմից վարվող հողի հարկի և գույքահարկի շտեմարաններում (բազաներում), ինչպես նաև միասնական տեղեկատվական համակարգում:

«Վեկտոր Պլյուս» կազմակերպության կողմից մշակվել էին վերը նշված օրենքների փոփոխությունների հետ կապված ծրագրային փոփոխությունների 1-ին փուլը և այդ փոփոխությունները 2014 թվականին տեղայնացվեցին թվով 570 հաշվառող մարմիններում:

Որպես հետևանք՝ համապատասխան փոփոխությունների անհրաժեշտություն առաջացավ նաև մարզային և կենտրոնական տեղեկատվական միասնական շտեմարաններում: Այդ փոփոխությունները «Վեկտոր Պլյուս» կազմակերպության կողմից նույնպես կատարվել են և տեղայնացվել մարզկենտրոններում և ՏԿԱԻՆ –ում:

Ծրագրային փոփոխությունների 2-րդ փուլը «Վեկտոր Պլյուս» կազմակերպության կողմից նույնպես մշակվել է, սակայն տեղայնացումը չի կատարվել, քանի որ «Անշարժ գույքի հարկի մասին» և «Փոխադրամիջոցների գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքների ընդունումը, որը նախատեսված էր 2014 թվականին, ՀՀ Ազգային Ժողովի կողմից տեղի չի ունեցել⁴³:

Համայնքի կառավարման տեղեկատվական համակարգերի զարգացումը

2014 թվականի ընթացքում շարունակվել է ՀԿՏՀ-ի ներդնումը համայնքներում (աղյուսակ 18): Ընդհանուր առմամբ տեղեկատվական համակարգը ներկայումս շահագործվում է ՀՀ 586 համայնքներում:

Գնահատելով համայնքների վերաբերյալ տեղեկատվական բազայի կարևորությունը՝ հաշվետու ժամանակահատվածում ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 54-Ա հրամանի համաձայն՝ ՀՀ մարզպետարանների միջոցով հավաքագրվել են համայնքների վերաբերյալ տեղեկատվությունները, ամփոփվել և նախարարության միջոցով մուտքագրվել են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից սպասարկվող Armdevinfo էլեկտրոնային ծրագիր: Իրականացված աշխատանքների արդյունքում յուրաքանչյուր համայնքի վերաբերյալ էլեկտրոնային բազան տեղադրվել է

⁴² www.mta.gov.am:

⁴³ www.mta.gov.am:

<http://www.armdevinfo.am/> կայքում⁴⁴:

2014 թ. դեկտեմբերին թողարկվել է «**Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը**» (ՀԱՄԱՏԵՂ) ծրագրի ֆեյսբուքյան էջը, որը հնարավորություն է տալիս համացանցում լուսաբանել կոնսուրցիումի կողմից իրականացվող «Հանրային մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը» ծրագրի ընթացքն ու արդյունքները, ինչպես նաև ապահովել հանրային մասնակցության առցանց հնարավորություններ տեղական ինքնակառավարման ոլորտում իրականացվող բարեփոխումներին:

Համայնների սեխնիկական և սեղեկասվական միջոցներով արտահովածության զնահատում

Ի տարբերություն 2012 թվականի, 2014 թվականին համայնքապետարաններում առկա համակարգիչների, տպող սարքերի, պատկերամուտների և անխափան սնուցման սարքերի քանակի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն չկա:

Աղյուսակ 18. Համայնքները, որտեղ 2014 թ. ընթացքում տեղադրվել և գործարկվել է համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ (ՀԿՏՀ) ըստ մարզերի⁴⁵

Հ/Հ	ՄԱՐԶԸ	Համայնքները	Ընդամենը
1.	Արագածոտն	Օշական, Կաքավաձոր, Երնջատափ, Հարթավան, Լուսագյուղ (Արագածոտն), Վարդաբլուր (Արագածոտն), Ափնագյուղ, Նիգավան, Թաթուլ, Դավթաշեն, Վարդենուտ, Արա, Օրգով, Նոր Ամանոս, Իրինդ, Չարինջա, Քուչակ	17
2.	Արարատ	Չանգակատուն, Մասիս, Բարձրաշեն, Երասխ, Վարդաշեն, Նարեկ, Բերդիկ, Բյուրավան, Արաքսավան	9
3.	Արմավիր	Բաղրամյան (Բաղրամյանի), Շենավան(Արարատի), Դաշտ, Մայիսյան (Արմավիրի), Լուսագյուղ(Արմավիրի), Արգինա, Երվանդաշատ, Չարթոնք, Շահումյան (Թոշ. ֆաբ.), Արտաշար, Նոր Արմավիր, Ծիածան, Այգևան, Ամասիա (Արմավիրի), Ծաղկալանջ, Եղեգնուտ, Լեռնագոգ, Տանձուտ, Վանանդ, Այգեձատ (Էջմիածնի)	20
4.	Գեղարքունիք	Այգուտ, Հայրավանք, Շատջրեք, Փոքր Մասրիկ, Արտանիշ	5

⁴⁴ www.mta.gov.am/:

⁴⁵ Աղբյուրը՝ «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ:

5.	Լոռի	Դարպաս (Լոռի), Կաթնաջուր, Դերետ, Թեղուտ(Լոռի), Լեռնանցք, Միխայելովկա, Մեղվահովիտ, Սվերդլով, Մեծ Պարնի, Նոր Խաչակապ, Հարթագյուղ, Լեռնավան, Գեղասար, Սարամեջ, Արջուտ, Բագում	16
6.	Կոտայք	Թեղենիք, Ջրառատ (Կոտայք), Սևաբերդ, Գեղարդ	4
7.	Շիրակ	Քեթի, Ջրափի, Կապս, Ախուրիկ, Մեծ Սեպասար, Արեգնադեն, Հայկաձոր, Հայրենյաց, Շիրակական, Հովիտ, Այգաբաց, Շիրակ, Վահրամաբերդ, Գեղանիստ (Շիրակ), Լեռնակերտ, Առափի, Հացիկ (Շիրակ), Գետափ (Շիրակ), Գոգհովիտ	19
8.	Սյունիք	Լեհվազ, Վարդանիձոր, Լեռնաձոր, Սյունիք	4
9.	Վայոց Ձոր	Կարմրաշեն, Հերիեր, Արտաբույնք, Շատին, Ջառիթափ, Ագատեկ, Չիվա, Գնդեվազ	8
10.	Տավուշ	Ոսկեվան, Ներքին Ծաղկավան, Կիրանց, Բերքաբեր, Թեղուտ(Տավուշ), Գոշ, Նավուր, Վերին Կարմիրաղբյուր	9
ԸՆԴԱՍԵՆԸ			118

Բջջային կապ առկա է բոլոր համայնքներում: Տեղեկատվական ցուցատախտակներ ունեն գրեթե բոլոր համայնքները: Սակայն, հանրային իրազեկման այլ միջոցներով (թերթ, տեղական հեռուստահաղորդում) ապահովվածության տեսակետից, վիճակը հեռու է բավարար լինելուց:

Համայնքները տեխնիկական ապահովվածության տեսանկյունից դեռևս բավարար մակարդակի վրա չեն գտնվում: Նորագույն տեխնոլոգիաները բացակայում են համայնքների մեծ մասում: Հատկապես լրջագույն հարց է սերվերների բացակայությունը: Շատ համայնքներում հնացած են սարքավորումները և այլ տեխնիկական միջոցները:

6.2 Համայնֆային ծառայություն

ՀՀ համայնֆային ծառայության օրենսդրական հիմքերը

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով ամրագրվում են համայնքային ծառայության հիմնական սկզբունքները, կարգավորվում են համայնքային ծառայության պաշտոնների և դասային աստիճանների դասակարգման, համայնքային ծառայության պաշտոնի նշանակման, վերապատրաստման, համայնքային ծառայության կադրերի ռեզերվի, համայնքային ծառայողների իրավական վիճակի, համայնքային ծառայության կազմակերպման և ղեկավարման, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ:

2014 թվականի ընթացքում «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել: Ընդհանուր առմամբ, տարվա կտրվածքով, համայնքային ծառայության ինստիտուտի զարգացման առումով էական առաջընթաց չի գրանցվել:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից վարվում է համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների միասնական գրանցամատյան, որում, կարգով սահմանված ձևերին համապատասխան, ներառված են համայնքներից 6156 անձանց վերաբերյալ ստացված տվյալները:

Գրանցամատյանի տվյալների համաձայն՝ 2014թ.-ի դեկտեմբերի 16-ի դրությամբ համայնքային ծառայության պաշտոնները 6664-ն են, որոնցից զբաղեցված է 6156-ը կամ 92 %-ը: Համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանցից կանայք կազմում են 52.7%-ը, տղամարդիկ՝ 47.3%-ը (համայնքային ծառայողների վերաբերյալ առավել մանրամասն տվյալները ներկայացված են հավելված 5-ում):

2014թ. ընթացքում, օրենքով նախարարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում, մինչև 1000 բնակչություն ունեցող համայնքներում աշխատակազմերի քարտուղարների պաշտոնները անձնագրերում բարձրագույն կրթության և (կամ) աշխատանքային ստաժի չափանիշները չներառելու մասին համաձայնություն է տրվել միայն 6 համայնքների: Ընդհանուր առմամբ, մինչև 1000 բնակչություն ունեցող 441 համայնքներից համաձայնություն է տրվել 285 համայնքներին⁴⁶:

2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ համայնքային ծառայության պաշտոնները 6658-ն են, որոնցից զբաղեցված է 6156-ը, կամ 92,5 %-ը (աղյուսակ 19):

⁴⁶ www.mta.gov.am:

Համայնքային ծառայողների թվաքանակի հարաբերակցությունը համայնքի բնակչությանը

Համայնքային ծառայողների թվի բացարձակ մեծությունը դեռևս ոչինչ չի վկայում համայնքի մեծ կամ փոքր լինելու մասին: Աղյուսակ 20-ը բավարար պատկերացում է տալիս ըստ բնակչության թվի համայնքային ծառայողների պաշտոնների տեսակարար կշիռների վերաբերյալ: 2014-ին, նախորդ տարվա համեմատությամբ, փոփոխություն չի գրանցվել համայնքային ծառայողների փաստացի թվաքանակի և բնակչության թվի հարաբերակցության գործակցում:

2014 թ. ընթացքում համայնքների աշխատակազմերում հաճախակի և չհիմնավորված հաստիքային փոփոխությունների դեպքերի վերաբերյալ տեղեկատվություն չկա:

Աղյուսակ 19. Համայնքային ծառայության պաշտոնների թիվը 2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ⁴⁷

N	Անվանումը	Գլխավոր		Առաջատար		Կրտսեր		Ընդամենը	
		հաստատված	զբաղեցված	հաստատված	զբաղեցված	հաստատված	զբաղեցված	հաստատված	զբաղեցված
1.	Երևան	90	89	628	610	909	789	1627	1578
2.	Արագածոտն	118	112	44	40	302	280	467	432
3.	Արարատ	102	92	125	112	328	294	555	498
4.	Արմավիր	99	85	76	69	455	416	630	574
5.	Գեղարքունիք	97	87	116	102	347	294	560	483
6.	Լոռի	119	98	135	128	429	402	683	628
7.	Կոտայք	71	65	138	124	377	356	586	545
8.	Շիրակ	127	112	188	170	296	264	611	546
9.	Սյունիք	114	97	74	65	202	191	390	353
10.	Վայոց Ձոր	48	47	53	51	86	86	187	184
11.	Տավուշ	66	61	70	67	226	207	362	335
	Ընդամենը	1051	949	1647	1538	3960	3669	6658	6156

Ծանոթություն. Աղյուսակով ներկայացված զբաղեցված պաշտոնների թվերը ներառում են ժամկետային աշխատանքային պայմանագրերով զբաղեցված համայնքային ծառայության պաշտոնների թիվը:

⁴⁷ www.mta.gov.am:

Աղյուսակ 20. 2014թ. ՀՀ համայնքների աշխատակազմերում համայնքային ծառայության պաշտոնների թվի տեսակարար կշիռը բնակչության թվի կազմում ըստ Երևան քաղաքի և մարզերի⁴⁸

N	Անվանումը	Համայնքային ծառայության պաշտոնների թիվը (հաստատված)	Փաստացի զբաղեցված համայնքային ծառայողների ընդհանուր թիվը (ՓԾԹ)	Բնակչության թիվը, հազար մարդ, տարեսկզբի դրությամբ ⁴⁹ (ԲԹ)	ՀՊԹ/ ԲԹ, %	ՓԾԹ/ ԲԹ, %
1	Երևան	1627	1578	1 068.3	0,152	0,148
2	Արագածոտն	467	432	132.3	0,352	0,326
3	Արարատ	555	498	260.8	0,212	0,190
4	Արմավիր	630	574	267.2	0,236	0,215
5	Գեղարքունիք	560	483	234.1	0,239	0,206
6	Լոռու	683	628	230.8	0,296	0,272
7	Կոտայք	586	545	255.0	0,220	0,214
8	Շիրակ	611	546	248.3	0,246	0,220
9	Սյունիք	390	353	141.0	0,277	0,250
10	Վայոց Ձոր	187	184	51.7	0,361	0,356
11	Տավուշ	362	335	127.6	0,287	0,263
	Ընդամենը	6658	6156	3 017.1	0,221	0,204

6.3. Համայնքային ծառայողների վերադասարանում

Համայնքային ծառայողների վերադասարանում համակարգի զնահատում

Յուրաքանչյուր համայնքային ծառայող առնվազն երեք տարին մեկ ենթակա է պարտադիր վերապատրաստման: Վերապատրաստումն անցկացվում է նաև համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով համայնքային ծառայողի իրավունքների ու պարտականությունների, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման կոնկրետ պահանջների կատարելագործման կամ այդ պահանջների փոփոխության դեպքում՝ համայնքային ծառայողի կամ համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ: Համայնքային ծառա-

⁴⁸ www.mta.gov.am:

⁴⁹ ՀՀ ԱՎԾ, Հրապարակումներ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2014թ.:

յողների վերապատրաստման կարգը և ծրագրերը հաստատում է ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

Համայնքային ծառայողների վերապատրաստումներն իրականացվում են մրցութային կարգով ընտրված կազմակերպությունների միջոցով: Սկսած 2010 թվականից, վերապատրաստումներն անցկացվել են առանձին մրցույթներով՝ ՏԻՄ-երի համար (համայնքների ղեկավարներ, ավագանիների անդամներ) և համայնքային ծառայողների համար:

2014 թվականի ընթացքում հերթական վերապատրաստումն անցել է 2364 համայնքային ծառայող, որից 1976-ը՝ պետական բյուջեի, 388-ը՝ համայնքի բյուջեի (Երևանի քաղաքապետարանի թվով 388 համայնքային ծառայող) միջոցներով: Պետական բյուջեի միջոցներով վերապատրաստված 1976 համայնքային ծառայողներից 1240-ը վերապատրաստվել է ընդհանուր ծրագրով (72 ժամ), իսկ 736-ը՝ գնումների գործընթացների կազմակերպման աշխատանքներով զբաղվող համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագրով (24 ժամ): 2010 թվականից ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը նախաձեռնել է տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև տարածքային կառավարման մարմինների աշխատակիցների վերապատրաստումը, որը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009–2012 թթ. միջոցառումների ծրագրի մի շարք կետերի կատարման արդյունավետության բարձրացմամբ:

2014 թ. ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններից վերապատրաստվել են ընդհանուր առմամբ 763 համայնքի ղեկավարներ և ավագանիների անդամներ⁵⁰:

2014 թվականին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների վերապատրաստումն իրականացրել է Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտը, համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների վերապատրաստումը՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիան, իսկ մարզերի համայնքների համայնքային ծառայողներին՝ Հայաստանի համայնքների միությունը:

6.4 Միջազգային աջակցությունը

Տեղական ինքնակառավարման ոլորտի կայացմանն ու զարգացմանը նպաստող գործոնների թվում շարունակում են մեծ դեր խաղալ Հայաստանում տարբեր առաքելություններ իրականացնող միջազգային կազմակերպությունները և նրանց հայաստանյան մասնաճյուղերը:

2014 թվականի ընթացքում շարունակվել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ, մասնավորապես՝

1) ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը «Քաունթերփարթ ինթե-

⁵⁰ www.mta.gov.am:

րնեշնլ» կազմակերպության միջոցով շարունակեց իրականացնել ու 2014թ. հոկտեմբերին բարեհաջող ավարտին հասցրեց «Քաղաքացիական հասարակության ու տեղական ինքնակառավարման աջակցության» քառամյա ծրագիրը, որը տեխնիկական աջակցություն ցուցաբերեց ու բազմաթիվ զարգացման ծրագրեր իրականացրեց 43 գործընկեր համայնքներում, նպաստեց քաղաքացիական հասարակության հետագա կայացմանը, խթանեց երիտասարդական կամավորական ու քաղաքացիական ակտիվ խմբերի գործունեությանը համայնքներում՝ ի նպաստ տեղական ժողովրդավարության հետագա զարգացման: Ծրագիրը կարևոր աջակցություն է ցուցաբերել ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը երկրում վարչատարածքային բարեփոխումները նախապատրաստելու ու մեկնարկելու գործում: Միաժամանակ գյուղի զարգացման արդի նախաձեռնության (իրականացնող՝ Ֆուլլեր տնաշինական կենտրոն) և Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման ծրագրի (իրականացնող՝ ՓՄՉ զարգացման ազգային կենտրոն) միջոցով շարունակվում էին իրականացվել համայնքային ենթակառուցվածքի արդիականացման, գյուղերի տնտեսական զարգացման, համայնքներում աշխատատեղերի ստեղծման աշխատանքներ:

2) GIZ (Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն) «Համայնքների զարգացում Հարավային Կովկասում ծրագրի ամփոփ հաշվետվություն» ծրագիր: Ծրագրի նպատակն է հզորացնել տեղական ինքնակառավարման համակարգը և պատշաճ տեղական ինքնակառավարումը Հարավային Կովկասում:

Ծրագրի բաղադրիչներն են՝

- ա) տարածքային բարեփոխումներ,
- բ) էլ. կառավարման համակարգ,
- գ) համայնքային բյուջետավարում,
- դ) տարածքային կառավարում:

3) Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն «Տեղական ինքնակառավարման համակարգի բարելավում» ծրագրի վերաբերյալ համաձայնագիրը կնքվել է 2014 թվականի հունիսի 27-ին: Ծրագրի ընդհանուր նպատակն է նպաստել Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի հաշվետվողականության, արդյունավետության և աշխատունակության ուժեղացմանը:

4) UNDP (Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր) «Հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների խթանումը Հայաստանում. Կանայք տեղական ժողովրդավարական գործընթացներում»: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետությունում կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարության ամրապնդմանը, իրավահավասար ժողովրդավարության կառուցմանն ու հասարակության համախմբվածության խթանմանը՝ նպաստելով տեղական մակարդակում մարդու իրավունքների իրականացմանը և ժողովրդավարական կառավարման զարգացմանը: Ծրագիրը նաև նպատակ ունի բարենպաստ միջավայր ստեղծելու հանրային կառավարման և

քաղաքականության մշակման գործընթացներում կանանց ավելի ակտիվ և նպատակային ներգրավման համար՝ լիովին գործադրելով նրանց կարողությունները և ներուժը:

5) Դանիայի կառավարության աջակցությամբ 2014 թվականի փետրվարին մեկնարկել է Եվրոպայի խորհրդի «Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը. աջակցություն տեղական ինքնակառավարման բարեփոխումներին, տեղական իշխանությունների կարողությունների զարգացում, տեղերում ընտրված ներկայացուցիչների առաջնորդության հզորացում» ծրագիրը: Ծրագիրը նպատակ է հետապնդում Եվրոպայի խորհրդի իրավական փորձագիտական կարծիքը, քաղաքական խորհրդատվությունը և աջակցությունը տրամադրելու տեղական ինքնակառավարման բարեփոխումների գործընթացին՝ այդ թվում՝ վարչատարածքային բարեփոխումների նախապատրաստմանը, ինչպես նաև զարգացնելու տեղական իշխանությունների կարողությունները: Առաջին բաղադրիչը (աջակցություն տեղական ինքնակառավարման բարեփոխումներին) նպատակ ունի տեղական ինքնակառավարման ոլորտի հայաստանյան օրենսդրությունը ներդաշնակեցնելու եվրոպական ստանդարտներին: Երկրորդ բաղադրիչը (տեղական իշխանությունների կարողությունների զարգացում) ուղղված է տեղական իշխանությունների ինստիտուցիոնալ կարողություններին և ծառայությունների մատուցման հնարավորություններին: Երրորդ բաղադրիչը (տեղերում ընտրված ներկայացուցիչների առաջնորդության հզորացում) նպատակ ունի բարելավելու տեղական ընտրված ներկայացուցիչների առաջնորդության և կառավարման կարողությունները և համագործակցության ոգի ձևավորելու ՏԻՄ-երի միջև:

6) UNICEF (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ) ՀՀ Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, և Շիրակի մարզերում համայնքային ենթածրագրերի ֆինանսավորման և իրականացման մասին փոխընթացման հուշագիր: Հուշագրի նպատակն է սահմանել կողմերի դերերը և պարտականությունները համայնքային ենթածրագրերի իրականացման ընթացքում, որոնք կազմում են Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, և Շիրակի մարզերում մշակված տարածքային սոցիալական ծրագրերի մի մասը:

7) KfW (Գերմանական զարգացման բանկ) «Վանաձոր քաղաքի կոշտ կենցաղային թափոնների համակողմանի կառավարման համակարգի մշակման իրագործելիության հետազոտություն» ծրագիր: Պայմանագրով ամրագրված է, որ խորհրդատուի կողմից մատուցված ծառայությունների արդյունքում նրան KfW պետք է վճարի 399.00.00 Եվրո:

10.01.2014թ ստացվել է «Տարբերակների գնահատման հաշվետվությունը», որում ներառված են ամբողջ Լոռու մարզը և ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքը և այն 20.01.2014թ. ՀՀ ՏԿԸ գրությամբ ներկայացվել է շահագրգիռ գերատեսչությունների համաձայնեցմանը:

8) ADB (Ասիական զարգացման բանկ) կոշտ կենցաղային թափոնների կառավարման (ԿԿԹԿ) ոլորտում ներդրումային դրամաշնորհային ծրագիր: Համաձայն ՀՀ կառավարության և ԱԶԲ-ի եզրակացության՝ նախապատրաստական տեխնիկական օժանդակության գործող ծրագիրը բաժանվել է երկու փուլերի.

ա. առաջին փուլով մշակվում է ոլորտի ռազմավարական զարգացման ծրագիրը, իրականացման ճանապարհային քարտեզը և երկարաժամկետ ներդրումային ծրագիրը,

բ. երկրորդ փուլի շրջանակներում կիրականացվի նախատեսվող ներդրումային փաթեթի իրագործելիության «դասական» ուսումնասիրություն (Գյումրի քաղաքը և հարակից տարածքները սպասարկող տարածաշրջանային աղբավայրի համար իրագործելիության ուսումնասիրություն):

9) ՀՀ կառավարության խնդրանքով Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) Հայաստանին տրամադրում է քաղաքականության մշակման և խորհրդատվական տեխնիկական աջակցություն (ՏԱ)՝ մշակելու քաղաքային զարգացման/ներդրումային պլաններ (ԲԶՆՊ) չորս (երկրորդային/secondary) քաղաքներում՝ Գյումրիում, Վանաձորում, Դիլիջանում և Ջերմուկում: Բանկը ՀՀ կառավարության քննարկմանն արդեն ներկայացրել է Դիլիջանի և Գյումրու քաղաքային զարգացման պլանները:

10) EBRD (Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ) Կոտայքի կոշտ քափոնների ծրագիր: Ծրագրի նպատակն է՝ կառուցել ԵՄ չափանիշներին համապատասխան տարածաշրջանային աղբավայր Հրազդանում՝ ՀՀ Կոտայքի 7 և ՀՀ Գեղարքունիքի Սևանի քաղաքային համայնքների վարչական տարածքների համար: ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը նշանակվել է վարկային ծրագրի 2-րդ փուլի միջոցառումների կազմակերպման նպատակով ծրագրի պատասխանատու:

Բացի վերը նշվածներից, 2014 թվականին սկսվել կամ իրականացվել են նաև հետևյալ ծրագրերը.

2014 թվականի հոկտեմբերին Հայաստանում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) աջակցությամբ մեկնարկեց «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀաՄաՏեղ) հնգամյա ծրագիրը, որի պաշտոնական մեկնարկի շնորհանդեսը տեղի ունեցավ 2014թ. դեկտեմբերի 2-ին «Արմենիա Մարիոք» հյուրանոցում⁵¹:

Ծրագիրն իրականացնում է Համայնքների ֆինանսիստների միավորումը (ՀՖՄ)՝ Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնի (ՏՀԶՎԿ), Երևանի մամուլի ակումբի (ԵՄԱ), Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի (ԺԱԱ), Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի (ՀՌԿԿ) հետ միասին:

ՀաՄաՏեղ ծրագիրը, տեղական ինքնակառավարման ոլորտում նախատեսված բարեփոխումներին զուգընթաց, հանրային լայնածավալ և էֆեկտիվ ներգրավման գործիք է, որի միջոցով քաղաքացիները գիտելիք, հմտություններ և հնարավորություն կստանան ակտիվորեն մասնակցելու իրենց համայնքների կառավարման պլանավորման, իրականացման և վերահսկման գործընթացներին:

Բովանդակային առումով ծրագիրը կարելի է բաժանել չորս հիմնական բաղադրիչի՝ ա) կայունացնել և հզորացնել տեղական ինքնակառավարման համակա-

⁵¹ <http://cfoa.am/archives/4636>:

րզի և ապակենտրոնացման բարեփոխումների իրականացման ընթացքում քաղաքացիների մասնակցությանը և շահերի ներկայացմանն ուղղված քաղաքացիական հասարակության կարողությունները, բ) ուժեղացնել քաղաքացիական հասարակության կարողությունները՝ կենտրոնական և տեղական իշխանությունների աշխատանքը և ապակենտրոնացման բարեփոխումների ընթացքը դիտարկելու նպատակով գ) բարձրացնել քաղաքացիների համար ապակենտրոնացման բարեփոխումների մասին անկախ և վստահելի տեղեկատվության հասանելիության մակարդակը, դ) բարելավել քաղաքացիական հասարակության գործունեության միջավայրը՝ ապակենտրոնացման բարեփոխումներին մասնակցության համատեքստում:

Աշխարհագրորեն և տիպաբանորեն ծրագրիչը նույնպես միատարր չէ և ներառում է համայնքների երկու խումբ: Առաջին խումբն իր մեջ ընդգրկում է 35 քաղաքային և խոշոր գյուղական համայնքներ, իսկ երկրորդը՝ 40 համայնքներ, որոնք ներառված են համայնքների խոշորացման պիլոտային ծրագրի մեջ: Ընտրված բոլոր համայնքներում նախատեսվում են բազմատեսակ գործողություններ, ներառյալ դասընթացներ համայնքների աշխատակիցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար, մշտադիտարկման և հանրային մասնակցության փոքր ծրագրեր, քառամյա զարգացման ծրագրերի և համայնքային բյուջեների մասնակցային մշակումներ և քննարկումներ, աջակցություն տեղական քաղաքացիական նախաձեռնություններին և այլն:

Ծրագիրը մեծ ուշադրություն է դարձնելու նաև տեղական ինքնակառավարման ոլորտում տեղեկատվական համակարգի զարգացմանը: Այս նպատակով բարելավվելու է առկա տեղեկատվական համակարգը, իրականացվելու են էլեկտրոնային կառավարմանը վերաբերող մի շարք նախաձեռնություններ, ինչպես նաև ուսումնասիրվելու է միջազգային փորձը և ադապտացվելու են առավել արդյունավետ գործող տեղեկատվական գործիքները:

Շվեյցարիայի կառավարության աջակցությամբ 2014 թվականի նոյեմբերին մեկնարկել է Եվրոպայի խորհրդի «Ինստիտուցիոնալ աջակցություն Հայաստանի համայնքների միությանը» ծրագիրը⁵².

Տևողությունը՝ 30 ամիս,

Բյուջեն՝ 824,625 եվրո,

Դոնորը՝ Շվեյցարիայի կառավարություն,

Գործընկերները՝ Հայաստանի համայնքների միություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, տեղական ինքնակառավարման մարմիններ:

Ծրագրի նպատակն է Հայաստանի համայնքների միության (ՀՀՄ) կարողությունների ամրապնդումը, որի արդյունքում այն կդառնա Հայաստանի կառավարման համակարգում ակտիվ մասնակից՝ արդյունավետ օգտագործելով սեփական ռեսուրսներն ու կարողությունները:

Մի շարք գործողությունների, տեխնիկական և փորձագիտական աջակցության շնորհիվ ՀՀՄ-ն հնարավորություն կունենա բարելավելու իր ներքին կառավարումը,

⁵² http://www.coe.am/index.php?cat_id=59:

առաջարկելու կատարելագործված ծառայություններ իր անդամներին՝ նրանց շահագրգռելով միավորված ձայնով մասնակցել ապակենտրոնացման վերաբերյալ ներպետական քաղաքականության մշակման գործընթացին, ինչպես նաև ձևավորել կառավարման պետական մարմինների հետ խորհրդակցության մեխանիզմ:

Միջազգային կազմակերպությունների գործունեության համակարգվածության և միասնականության գնահատում

ՀՀ-ում ծրագրեր իրականացնող տարբեր միջազգային կազմակերպությունների դերը շարունակում է զգալի մնալ ՀՀ համայնքներում իրականացվող տարատեսակ ծրագրերի առումով: Նրանք հիմնականում իրենց գործունեությամբ ձգտում են անշրջելի դարձնել ժողովրդավարության և ազատական տնտեսության սկզբունքներն անցումային շրջանում գտնվող մեր երկրում: Իրենց առաքելություններն իրականացնելիս, նրանք համագործակցում են ՀՀ կառավարության, ՏԻՄ-երի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, հաճախ նաև՝ միմյանց հետ: Սակայն, դեռևս նրանց գործունեության արդյունավետությունը հաճախ տուժում է իրականացվող ծրագրերի և համայնքային առաջնահերթ կարիքների չհամընկնելու պատճառով: Իրականացվող ծրագրերը հաճախ կրկնում են միմյանց:

7. Համայնքային ծառայությունների մասուցումը

7.1 Համայնքների կողմից մասուցվող հանրային ծառայությունները

2014 թվականի ընթացքում համայնքների կողմից մատուցվող ծառայությունների ոլորտում տեղի են ունեցել փոփոխություններ, կատարվել են մի շարք աշխատանքներ, որոնք առավել մանրամասն ներկայացված են ըստ առանձին ոլորտների:

Կանաչադաշտում և բարեկարգում

Առկա հիմնախնդիրները լուծելու նպատակով Երևան քաղաքում արդեն ստեղծվել է 12.0 հա նոր սիզամարգ, նախորդ տարվա համեմատ սիզամարգերի տարածքն ավելացել է 1.0 հա-ով:

Կանաչ տարածքներ են վերականգնվել, բարելավվել և նորերն են ստեղծվել ներքոհիշյալ վարչական շրջաններում.

- Արաբկիր վարչական շրջան՝ Ամերիկյան համալսարանին կից զբոսայգի, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան՝ Իսակով-Լենինգրադյան խճուղի, Մալաթիայի զբոսայգի,

- Ավան վարչական շրջան՝ Դուրյան թաղամասի պուրակ, Ավան–Առինջ պուրակ, Սայաթ–Նովա թաղամասի պուրակ,
- Շենգավիթ վարչական շրջան՝ Ե. Թադևոսյան փողոց, Բագրատունյաց պող. (լճին հարող լանջեր),
- Նոր Նորք վարչական շրջան՝ 5-րդ զանգվածի զբոսայգի:

Մայրաքաղաքում տնկվել է շուրջ 60000 հատ ծառ և թուփ, 2200000 ծաղկասածիլ, 700000 վարդակակաչ: Տեղադրվել է գեղարվեստական 110 կոմպոզիցիա, որոնք ձևավորվել են տարբեր տիպի ծաղկասածիլներով⁵³:

2014 թվականին Երևան քաղաքում բարեկարգվել են 236 բակային տարածքներ, կառուցվել և կահավորվել են 289 խաղահրապարակներ, ինչպես նաև կառուցվել են մինի ֆուտբոլի արհեստական խոտածածկով 15 խաղադաշտեր, վերանորոգվել են նախորդ տարիներին կառուցված մինի ֆուտբոլի 60 խաղադաշտեր⁵⁴: Երևան քաղաքում կենսապայմանների հարմարավետության և մատչելիության ապահովման ծրագրերի շրջանակներում Երևանի բյուջեի միջոցներով կառուցվել է 330 թեքահարթակ, ինչպես նաև մասնավոր կառույցների սեփականատերերի համագործակցությամբ՝ 300 թեքահարթակ: 2014 թվականի չլուսավորվող 24 փողոցներ ապահովվել են արտաքին լուսավորությամբ⁵⁵:

2014 թվականի ապրիլ ամսին Ստեփանավան համայնքում մեծ ծավալի ծառատունկ է իրականացվել: Չեռք է բերվել տարբեր տեսակի շուրջ 9600 դեկորատիվ ծառ և թուփ, որոնք տնկվել են համայնքի պուրակներում, փողոցներում, կենտրոնական հրապարակում: Ծառատնկման աշխատանքներ են իրականացվում նաև մի շարք կազմակերպությունների կողմից: «Էյ-Թի-Փի» կազմակերպությունն անտառատնկման աշխատանքներ է իրականացնում Ստեփանավանը գոտեվորող հարավ-արևմտյան բլրալանջին: Ստեփանավանի «Օրիոս» բնապահպանական կենտրոնի կամավորներն էլ ծառատունկ են իրականացրել Ստեփանավանի գյուղատնտեսական քոլեջի շրջակայքում՝ տնկելով 160 սոճի⁵⁶:

«Մաքուր համայնք» անվանակարգում մրցանակը շնորհվել է Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքին⁵⁷: «Լավագույն կանաչապատ համայնք 2014» է ճանաչվել Էջմիածինը: Էջմիածին քաղաքում, Տերյանի եւ Արամ Մանուկյանի այգիներում, 1 տարվա ընթացքում տեղադրվել է 12 տեսակի ավելի քան 150000 ծաղկասածիլ⁵⁸:

2014թ. ընթացքում «ՀՀ Շիրակի մարզի անտառների վերականգնման համալիր ծրագրերի» շրջանակներում Գյումրու անտառտնտեսության Վարդաբլրյորի տեղամասում 10 հա տարածքի վրա ստեղծվել է նոր անտառազանգված: Կանաչ տարածքների ընդլայնման և համայնքային անտառների ստեղծման ուղղությամբ համագործակցելով «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի հետ, Բասեն,

⁵³ <https://www.yerevan.am/am/nature-protection/> :

⁵⁴ Երևանի քաղաքապետարանի 2014 թվականի հաշվետվությունը; <https://www.yerevan.am/am/report/annual-report-2014/>:

⁵⁵ Նույն տեղում:

⁵⁶ <http://www.stepanavan.am/xorhrdakutyun2014.html>:

⁵⁷ <http://www.aravot.am/2014/11/10/514384/>:

⁵⁸ <http://ejmiatsin.am/maiin/1812—.html>:

Սարատակ, Սարալանջ և Գետափ համայնքներում հիմնվել է ընդհանուր հաշվով 7.6 հա համայնքային անտառ⁵⁹:

Աղբահանություն

Երևանում աղբահանության գործընթացը կանոնակարգելու նպատակով քաղաքապետարանի կողմից հայտարարված միջազգային մրցույթում հաղթած լիբանանյան «Sanitek s.a.r.l» ընկերությունը մայրաքաղաքում տվել է պայմանագրով պահանջվող համապատասխան ծառայությունների մատուցման մեկնարկը: Նոր մեքենասարքավորումները Շահումյան հրապարկում նախ ներկայացվել են Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին: Դեռևս 2012թ.-ին հայտարարված միջազգային մրցույթին աշխարհի 8 երկրներից հայտ ներկայացրած մասնագիտացած ընկերություններից 2013-ին ընտրվեցին երկուսը՝ Արևմտյան հատվածով (Աջափնյակ, Դավթաշեն, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ վարչական շրջաններ)՝ լիբանանյան «Sanitek s.a.r.l» ընկերությունը և Արևելյան հատվածով (Արաբկիր, Ավան, Էրեբունի, Քանաքեռ-Զեյթուն, Նորք-Մարաշ, Նոր Նորք և Նուբարաշեն վարչական շրջաններ)՝ հայ-շվեդական «Էկոգրուպ» և «ԼԼ Միլյոբոնսուլտ» ընկերությունների կոնսորցիումը⁶⁰:

Դիլիջան քաղաքը 2014 թվականին ձեռք է բերել աղբի տեղափոխման 4 մեքենա: Աղբահանության վերահսկողությունը կատարվում է քաղաքապետարանից էլեկտրոնային ցանցի միջոցով⁶¹:

Վանաձոր համայնքի համար լրջագույն խնդիր է աղբահանությունը: Կոմունալ և աղբահանության ծառայություններ մատուցող ընկերությունների տեխնիկան բարոյապես և ֆիզիկապես մաշված է և այդ պարագայում հնարավոր չէ արդյունավետ աղբահանություն իրականացնել: 2014 թվականի Վանաձոր քաղաքի ծրագրային նպատակների քննարկումների ընթացքում քաղաքապետն առաջարկեց համապատասխան խնդրանքով կրկին դիմել ՀՀ կառավարությանը, որպեսզի պետական աջակցությամբ և միջնորդությամբ հնարավոր լինի ցածր տոկոսադրույքով վարկավորում ստանալ, ինչի շնորհիվ քաղաքապետարանը կարող է նոր տեխնիկա զնել արդյունավետ աղբահանություն իրականացնելու նպատակով⁶²:

Ջրվեժ համայնքի ավագանին ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով Ջրվեժ համայնքում 2014 թվականի դեկտեմբերի 20-ին կայացած ավագանու վերջին նիստի ընթացքում որոշում կայացրեց ընդունել Ջրվեժ համայնքում աղբահանության իրականացման կարգը և

⁵⁹ <http://shirak.mtaes.am/files/docs/13611.pdf>, ՀՀ Շիրակի մարզի 2014 թվականի սոցիալ-տնտեսական իրավիճակի և մարզպետի գործունեության մասին տարեկան հաշվետվություն:

⁶⁰ <https://www.yerevan.am/am/news/trvel-e-aghbahanowt-yan-ew-sanmak-rman-mijazgayin-operatori-ashkhatankneri-meknarke/>:

⁶¹ <http://hetq.am/arm/news/55165/verapokhvox-qaxaqy-dilijan.html>:

⁶² <http://vanadzor.am/vanadzori-kaghakapetarani-2014-tvakani-tsragrayin-npataknery/>:

սանիտարական մաքրման սխեման, որը պետք է գործի 2015 թվականի հունվարի 1-ից⁶³:

2014 թվականի ընթացքում աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգը հաստատելու մասին նմանատիպ որոշումներ կայացրեցին Սպիտակ համայնքի⁶⁴, Առինջ համայնքի⁶⁵, Մեղրի համայնքի⁶⁶ և այլ քաղաքային ու գյուղական համայնքների ավագանիները:

Բյուրեղավան համայնքում համանքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 2-ի N 117-Ա որոշման համաձայն որոշվեց աղբահանությունը կազմակերպել «Բյուրեղավան» համատիրության միջոցով և ուժը կորցրած ճանաչվեց 2014 թվականի ապրիլի 11-ի «Բյուրեղավան քաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների մասին» N 32-Ա որոշումը⁶⁷:

Բնակելի և ոչ բնակելի սարածիների դաշտայնում

Վիվասել ՄՏՍ-ի կողմից հատկացված 4.5 մլն դրամ միջոցներով Երվանդաշատ համայնքում ավարտվում է 4 կիսակառույց բնակելի տների և 6 բնակելի տների տանիքների վերանորոգումը:

Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ համատեղ 2014 թվականին իրականացվել են Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի ավելի քան 700 շենքերի հարթ տանիքների 75028 քմ, ինչպես նաև 776 թեք տանիքներով շենքերի 49947 քմ վերանորոգման և մասնակի նորոգման աշխատանքներ: Դրանցից 19 շենքերի տանիքները վերանորոգվել են ամբողջությամբ⁶⁸: 2014 թվականին Երևան քաղաքում ամբողջությամբ վերանորոգվել է 815 շքամուտք, ինչպես նաև իրականացվել են 35 շենքերի ճակատային մասերի նորոգման և մաքրման աշխատանքներ: 4 շենքերի համար իրականացվել են թափվող սալերից պաշտպանիչ միջոցառումներ⁶⁹:

Համայնք-պետություն համագործակցության շրջանակներում սկսվել են 4 բազմաբնակարան շենքերի կառուցման աշխատանքները, որոնց ավարտը նախատեսվում է 2015 թվականին: Նշված ծրագրի շրջանակներում նախատեսվում է բնակարաններով ապահովել Երևան քաղաքում 01.01.2014 թվականի դրությամբ հաշվառված 4-րդ աստիճանի վթարայնություն ունեցող բոլոր բազմաբնակարան շենքերի և հանրակացարանների բնակիչներին⁷⁰: Ծրագրի առանձնահատկությունն այն է, որ բոլոր շենքերը՝ Շինարարների 6, Շինարարների 15, Մարգարյան 45,

⁶³ <http://www.jrvezh.am/am/seniors/protocol/41>:

⁶⁴ <http://spitak.am/CMIS/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=724f7a7a-52ec-4471-a2b0-5d85d8e4578a>:

⁶⁵ <http://arinj.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=2bafdaff-9ba8-4322-a690-16ba83650bf6>:

⁶⁶ <http://meghri.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=e0a75380-1bec-459e-a820-710da6bb7248>:

⁶⁷ <http://byureghavan-kotayk.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=cf9eaa0d-70c7-4bde-ac06-bba7b12b2752>:

⁶⁸ <https://www.yerevan.am/am/report/annual-report-2014/>, Երևանի քաղաքապետարանի 2014 թվականի հաշվետվությունը:

⁶⁹ Նույն տեղում:

⁷⁰ <https://www.yerevan.am/am/report/annual-report-2014/>, Երևանի քաղաքապետարանի 2014 թվականի հաշվետվությունը:

Սիսակյան 16 հասցեներում կառուցվում են նախկին վթարային շենքերի տեղում⁷¹:

Ագարակ քաղաքում 2014 թվականին շարունակվել է բնակելի շենքերի կառուցումը: Տարվա ընթացքում իրականացվել են 100.3 մլն դրամի աշխատանքներ: Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից հատկացված 85 մլն. դրամով վերակառուցվել է Ագարակի արվեստի դպրոցը, կառուցվել է ջեռուցման համակարգ⁷²:

«Լեռնահայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից հատկացված 15.3 մլն. դրամով վերանորոգվել են «Կապանի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի սանհանգույցները, մասնակի վերանորոգվել է Հալիձորի համայնքի մշակույթի տունը: «Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ֆինասավորմամբ 2014 թվականին վերանորոգման աշխատանքներ են կատարվել Անտառաշատ գյուղական համայնքի հանդիսությունների սրահում⁷³:

«Դանդի փրիշս մետալս Կապան» ՓԲԸ-ի կողմի 7.3 մլն. դրամ հատկացվել է Գեղանուշ գյուղական համայնքի ակումբի շենքի վերանորոգման աշխատանքների համար⁷⁴:

Աղյուսակ 21. 2014 թվականի դրությամբ բնակ-կոմունալ տնտեսության ամփոփ տվյալները⁷⁵

	Բազմանակարան շենքերի բնակարանային ֆոնդի բնակարանների քանակը (առանց չսեփականաշնորհված համրակացարանների)	Ընդհանուր մակերեսը մ ²	Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի բնակարանների քանակը	Համատիրության, հավատարմագրային և լիազորագրային կառավարիչների կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի բնակարանների քանակը
Տող 1	Տող 2	Տող 3	Տող 4	Տող 5
Ընդամենը	435 348	95 023 632	105 397	329 309
Քաղաքային	410 227	51 380 114	82 201	328 026
Գյուղական	24 479	43 643 518	23 196	1 283

ՀՀ-ում բազմաբնակարան շենքերի բնակարանների միջին քանակը 2014 թվականի ընթացքում եղել է 435 348, որից 24.2%-ը (105 397) կազմել են համայնքի կողմից կառավարվող բնակարանները, իսկ մնացած 75.8%-ը՝ համատիրության,

⁷¹ Նույն տեղում:

⁷² <http://syunik.mtaes.am/files/docs/13186.pdf>, ՀՀ Սյունիքի մարզպետի 2014 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվություն:

⁷³ Նույն տեղում:

⁷⁴ Նույն տեղում:

⁷⁵ http://armstat.am/file/article/sv_06_15a_5270.pdf, Բնակարանային ֆոնդը 2014 թվականին:

հավատարմագրային և լիազորագրային կառավարիչների կողմից կառավարվող բնակարաններն են (աղյուսակ 21): Պետք է նշել, որ համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի բնակարանների բաշխվածությունը ըստ քաղաքային և գյուղական համայնքների կազմում է համապատասխանաբար 77.9% և 22.1%, որը մեծամասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ գյուղական համայնքներում քիչ են բազմաբնակարան շենքերը: Հատկանշական է, որ գյուղական համայնքների բազմաբնակարան շենքերի բնակարանների 94.7%-ը (տող 4/տող 2) կառավարվում է համայնքի կողմից, մինչդեռ քաղաքային համայնքներում բազմաբնակարան շենքերի բնակարանների 20%-ը (տող 4/տող 2) կառավարվում է համայնքի կողմից, իսկ մնացած մասը համատիրության, հավատարմագրային և լիազորագրային կառավարիչների կողմից: Ընդհանուր առմամբ համատիրության, հավատարմագրային և լիազորագրային կառավարիչների կողմից կառավարվում է ՀՀ համայնքների բնակարանների 75.6 %-ը:

Ջրամատակարարում և ջրահեռացում

2014 թվականին Երևան քաղաքում իրականացվել են 34883 գծամետր ջրամատակարարման և կոյուղատար համակարգերի վերանորոգման աշխատանքներ: Ֆրանսիական կառավարության աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում սկսվել են շուրջ 18 կմ ջրամատակարարման, ջրահեռացման ցանցի հիմնանորոգումը, շուրջ 10000 կետերում ջրամիացումների առանձնացման և 15 կմ մայր ջրատարների վերակառուցման աշխատանքները⁷⁶:

Ռինդ գյուղում վերանորոգվել է ջրամատակարարման ողջ համակարգը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 123 մլն 139 հազար 180 ՀՀ դրամ, համայնքի ներդրումը՝ 12 մլն 622 հազար 168 ՀՀ դրամ, որից 6 մլն 422 հազար 168 ՀՀ դրամին համարժեք ներդրում է կատարել AGBU (Սարաֆյաններ) կազմակերպությունը⁷⁷: Ռինդ համայնքի ջրի համակարգի վերակառուցման արդյունքում գյուղի բոլոր տնտեսություններն ապահովվել են շուրջօրյա ջրամատակարարմամբ: Ռինդ գյուղի ջրամատակարարման ցանցը կառուցվել էր 1960-ական թվականներին և ամբողջ երկարությամբ՝ շուրջ 9 կմ, գտնվում էր քայքայված վիճակում: ՀՄՆՀ ծրագրով վերակառուցման աշխատանքներն իրականացվել են «Մոնիկասար» կոչվող տարածքում: Կառուցվել է նաև մոտ 1 կմ երկարությամբ ներքին ցանց, որն ապահովում է գյուղի նորակառույց թաղամասի 46 տնային տնտեսությունների ջրամատակարարումը: Վերացվել է ջրի կորուստը՝ շուրջ 50 %-ով ավելացել է ջրի քանակը, բարելավվել է ջրի որակը⁷⁸:

Ասիական զարգացման բանկի կողմից տրամադրված վարկային ծրագրով 192 մլն դրամի աշխատանքներ են կատարվել Գորիս քաղաքի և Բոնակոթ գյուղի ջրամատակարարման համակարգերի բարելավման նպատակով: Կապան քաղա-

⁷⁶ <https://www.yerevan.am/am/report/annual-report-2014/>, Երևանի քաղաքապետարանի 2014 թվականի հաշվետվությունը:

⁷⁷ <http://www.aravot.am/2014/05/27/464495/>:

⁷⁸ Նույն տեղում:

քի, Սյունիք ու Աճանան գյուղերի ջրամատակարարման բարելավման համար ծախսվել է 383 մլն դրամ⁷⁹:

Ձեռուցում

Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC) և հիմնադրամի գլխավոր գործընկեր ՎիվաՍել-ՄՏՄ-ն ամփոփել և ներկայացրել են «Այլընտրանքային էներգիա» ծրագրի շրջանակում համատեղ իրականացվող հերթական նախագծի արդյունքները: Նախագծի շրջանակում Պարույր Սևակ գյուղի նախակրթարանում տեղադրվել է արևային ջրատաքացուցիչ և էլեկտրական ջեռուցման համակարգ: Շնորհանդեսը կայացավ գյուղի նախակրթարանում, որն ունի 2 սենյակ և սպասարկում է 16 երեխայի: Նախակրթարանում տեղադրված արևային ջրատաքացուցիչը ջեռուցման էներգաարդյունավետ և բնապահպանական տեսանկյունից արդարացված միջոց է: Այս համակարգը ձմռանը 50-60%-ով նվազեցնում է ջեռուցման ծախսը, իսկ ամռանը՝ 100%-ով տաք ջրի ծախսը: Ծրագրի շնորհիվ սպասվում է նաև նախակրթարան հաճախող երեխաների քանակի աճ⁸⁰:

«Վորլդ Վիժն Հայաստան» Թալինի ՏՁԾ-ի կոմից ֆինանսավորվել են Թաթուլ համայնքի նախակրթարանի ջեռուցման համակարգի տեղադրման աշխատանքները: Աշխատանքներն իրականացվել են 2014 թվականի մայիս-հունիս ամիսներին, իսկ աշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է 1,217,150 դրամ⁸¹:

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից 2014 թվականին հատկացված ֆինանսավորման միջոցներով իրականացվել են Նորաշենի մանկապարտեզի վերակառուցման, ջեռուցման համակարգի տեղադրման աշխատանքները՝ 71,673,903 դրամ արժեքով, Թալինի մանկական գեղարվեստի դպրոցի վերակառուցման, ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքները՝ 102,635,383 դրամ արժեքով, Արարատ գյուղի մանկապարտեզի 2 մասնաշենքերի վերակառուցման, ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքները՝ 78,708,700 դրամ արժեքով, Գեղամավանի մանկապարտեզի երկու մասնաշենքերի և տաք անցումների հիմնանորոգման, ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքները՝ 98,545,150 դրամ արժեքով, Գլաձորի մանկապարտեզի վերակառուցման և ջեռուցման աշխատանքները՝ 109,724,254 դրամ արժեքով, Մալիշկայի թիվ 2 մանկապարտեզի տանիքների և 2 մասնաշենքերի վերակառուցման, ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքները 111,914,922 դրամ արժեքով⁸²:

⁷⁹ <http://syunik.mtaes.am/files/docs/13186.pdf> , ՀՀ Սյունիքի մարզպետի 2014 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվություն:

⁸⁰ <http://www.aysor.am/am/news/2014/12/23/%D5%BE%D5%AB%D5%BE%D5%A1-%D5%BD%D5%A5%D5%AC-%D5%B4%D5%BF%D5%BD-%D5%BE%D5%A1%D5%B5%D6%80%D5%AB-%D5%A2%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%AB%D5%B4%D5%B6%D5%A1%D5%A4%D6%80%D5%A1%D5%B4/888940>:

⁸² <http://aragatsotn.mtaes.am/news//docs/10073.xls>:

⁸² <http://www.armeniasif.am/index.php> , Հաշվետվություն Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամի 2014 թվականի գործունեության մասին:

Հասարակական տրանսպորտի և ճանապարհաշինություն

2014 թվականին Գյումրու ներքաղաքային ավտոբուսային երթուղային ցանցը կազմված է ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներից:

Գյումրու ներքաղաքային ավտոբուսային երթուղային ցանցում ներառված են 4 երթուղիներ: Երթուղին սպասարկող մեքենաների պահանջվող միջին քանակը կազմում է 5 մեքենա, երթուղու շրջապատույտի միջին երկարությունը կազմում է 16,75 կմ՝ ընդ որում ամենաերկար շրջապատույտի երկարությունը կազմում է 25 կմ, իսկ ամենակարճը՝ 12 կմ: Երթուղու շրջապատույտի միջին տևողությունը 54 րոպե է՝ ընդ որում ամենաերկար տևողությունը՝ 80 րոպե է: 2 անգամ մեծ է ամենակարճի տևողությունից (40ր): Երթուղու միջին ինտերվալը 10 րոպե է, ամենամեծ ինտերվալը 1,5 անգամ ավելի է ամենափոքր ինտերվալից (համապատասխանաբար 15 և 10ր): Բոլոր երթուղիների աշխատաժամերի սկիզբը 08:00-ն է, իսկ ավարտը՝ 20:00-ն:

Գյումրու ներքաղաքային միկրոավտոբուսային երթուղային ցանցը ներառում է 11 երթուղիներ: Երթուղին սպասարկող մեքենաների պահանջվող միջին քանակը կազմում է 9-10 մեքենա, երթուղու շրջապատույտի միջին երկարությունը կազմում է 23,3 կմ՝ ընդ որում ամենաերկար շրջապատույտի երկարությունը կազմում է 36 կմ, իսկ ամենակարճը՝ 11 կմ: Երթուղու շրջապատույտի միջին տևողությունը 59,3 րոպե է՝ ընդ որում ամենաերկար տևողությունը 88 րոպե է՝ 3,4 անգամ մեծ է ամենակարճ տևողությունից (26 ր): Երթուղու միջին ինտերվալը 8,7 րոպե է, ամենամեծ ինտերվալը 3 անգամ ավելի է ամենափոքր ինտերվալից (համապատասխանաբար 15 և 5ր): Բոլոր երթուղիների աշխատաժամերի սկիզբը 07:30-ն է, իսկ ավարտը՝ հիմնականում՝ 21:00-ն է, բացառությամբ որոշ երթուղիների, օրինակ՝ թիվ 22 երթուղու դեպքում՝ այն 22:00-ն է, իսկ թիվ 12 և թիվ 25 երթուղիների համար այն 21:30-ն է⁸³:

2014 թվականի ընթացքում Երևան քաղաքում իրականացվել են շուրջ 500,000 քմ ասֆալտբետոնե ծածկի, շուրջ 100,000 մայթերի հիմնանորոգման և 50,000 գծամետր եզրաքարերի փոխարինման աշխատանքներ:

Համայնք-մասնավոր հատված համագորակցության արդյունքում ավարտվել է Լենինգրադյան փողոցից մինչև Իսակովի պողոտա ձգվող 5.2կմ երկարությամբ ավտոմայրուղու շինարարությունը: Մայրուղու երթևեկելի մասի լայնությունը կազմում է 15 մ (2 x 3.75 x 2), բաժանարար գոտու լայնությունը՝ 4 մ, իսկ մայթերի լայնությունը՝ 2.25 մ և 2.5 մ: Կառուցվել են տարբեր մակարդակների տրանսպորտային երկու հանգույցներ՝ Ծովակալ Իսակովի պողոտայի և Լենինգրադյան փողոցի հատումներում: Ծովակալ Իսակովի պողոտայի հանգույցն ապահովում է առանց հատումների մեքենաների երթևեկությունն ու ստեղծում տրանսպորտային կապ՝ Ծովակալ Իսակովի պողոտայի և նոր մայրուղու միջև: Լենինգրադյան փողոցում կառուցվել է թունելային անցում՝ համապատասխան թեքանցներով: Թունելի երկարությունը 46 մ է, լայնությունը՝ 16 մ, բարձրությունը՝ 5.1 մ⁸⁴:

Շահագործման է հանձնվել նաև Ուլնեցի-Ռուբինյանց փողոցը իրար կապող ճանապարհը: Նոր ավտոմայրուղին զգալիորեն բեռնաթափում է Դավիթ Անհաղթ-

⁸³ <http://progressgyumri.am/analysis-and-survey/1562>:

⁸⁴ <http://www.1in.am/1329822.html>:

Ռուբինյանց և Ռուբինյանց-Մեակ փողոցների երթևեկությունը⁸⁵: Ծրագրի շրջանակում վերակառուցվել և լայնացվել է երկաթգծի գոյություն ունեցող կամուրջը, որն այժմ ունի 66 մ երկարություն, 7.5 մ լայնությամբ երթևեկելի մաս և 1մ լայնությամբ երկկողմանի հետիոտն մայթեր: Շահագործման է հանձնվել նաև Գլինկայի փողոցը Տիգրան Մեծ պողոտային միացնող ճանապարհային հատվածը, որը հանդիսանում է Մարալանջի փողոցի շարունակությունը:

2014 թվականի դրությամբ Գյումրի, Արթիկ և Մարալիկ քաղաքները ապահովված են Երևան քաղաքի հետ ուղևորափոխադրումներ իրականացնող ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներով: Շիրակի մարզի քաղաքները կապված են նաև Վանաձոր, Սպիտակ, Արմավիր, Վաղարշապատ, Ստեփանավան, Ապարան և Թալին քաղաքների հետ⁸⁶:

Համաշխարհային բանկի միջոցներով իրականացվել է Մ-10 Ներքին Գետաշեն – Վերին Գետաշեն – Մաղինա 3.6կմ երկարությամբ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները⁸⁷:

Կրթություն և մշակույթ

2014 թվականին Փոքր Վեդի համայնքի և Ֆրանսիայի Սեն Մարտեն Դեր քաղաքի, Արտաշատ և Ֆրանսիայի Քլամարի քաղաքների միջև ձեռք են բերվել եղբայրացման և համագործակցության վերաբերյալ համաձայնություններ:

2014 թվականին ավարտին հասցվեց դեռևս 2012 թվականին սկսված Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով իրականացվող Ոսկեվան գյուղի նոր երկհարկանի մանկապարտեզի կառուցումը: Այն նախատեսված է երկու խմբի համար՝ 50 սան, ինչը բավարարում է գյուղի կարիքները: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 117 մլն 929 հազար 627 դրամ, որից համայնքի ներդրումը՝ 6 մլն 285 հազար 289 դրամին համարժեք ներդրումն իրականացրել է АGBU (Մարաֆյաններ) կազմակերպությունը⁸⁸:

«Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթին Կապանի թիվ 6 ՆՈՒՀ-ի տնօրենը ճանաչվել է լավագույնը, նույն նախակրթարանի ինչպես նաև Գորիսի թիվ 2 ՆՈՒՀ-ի մեկական դաստիարակ արժանացել են մրցանակների⁸⁹:

«Տաթևի վերածնունդ», «Հայրենիքի զարգացման նախաձեռնություն» և Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամները մայիսի 3-ին «Տաթևեր» ճոպանուղու «Հալիձոր» կայարանի մոտ Հայաստանում առաջին անգամ «Ոչխարի խուզում 2014» փառատոնն էին կազմակերպել⁹⁰: Փառատոնին

⁸⁵ www.yerevan.am , Երևան քաղաքի 2014 թվականի տարեկան հաշվետվություն:

⁸⁶ <http://shirak.mtaes.am/files/docs/13611.pdf> , ՀՀ Շիրակի մարզի 2014 թվականի սոցիալ-տնտեսական իրավիճակի և մարզպետի գործունեության մասին տարեկան հաշվետվություն:

⁸⁷ <http://gegharkunik.mtaes.am/files/docs/14322.pdf> ՀՀ Գեղարքունիայի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի հաշվետվությունը 2013 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

⁸⁸ <http://www.aravot.am/2014/05/27/464495/>:

⁸⁹ <http://syunik.mtaes.am/files/docs/13186.pdf> , ՀՀ Սյունիքի մարզպետի 2014 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվություն:

⁹⁰ <http://news.am/arm/news/207455.html>:

սեփական տաղավարներով հանդես են եկել Խոտ, Շինուհայր, Հալիձոր, Տաթև, Սվարանց, Տանձատափ, Հարժիս գյուղական համայնքները՝ ցուցադրելով գյուղական սեփական արտադրության ապրանքներ, մթերքներ ու խմիչքներ, ինչպես նաև ապահովելով համայնքի բնակիչների մասնակցությունը ոչխարների խուզման մրցույթին:

Փառատոնի նպատակն էր զարգացնել ներքին տուրիզմը: Ոչխարների խուզը նախատեսված էր 3 փուլով: Երկրորդ փուլից հետո, սակայն, եղանակը բարեհաճ չի գտնվել և ուժեղ քամու և անձրևի պատճառով մարդիկ ստիպված լքել են տարածքը⁹¹:

2014 թվականի օգոստոսի 23-ին, Սյունիքի մարզի Գորիս քաղաքում առաջին անգամ անցկացվել է Գորիսի թփի փառատոնը: Փառատոնի մասնակիցները ներկայացրել են իրենց ձեռքի աշխատանքները, իրենց կողմից մշակված բերք ու բարիքը, և, որ ամենակարևորն է, հանրությանը հայտնի Քարահունջի թփի օղին⁹²: Քաղաքի մանկական զբոսայգում Գորիսի և Սյունիքի մարզի համայնքները ի ցույց են դրել իրենց համայնքներին բնորոշ ավանդական ճաշատեսակները, միրգն ու բանջարեղենը⁹³:

«Հայաստանի 2014 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմկոմիտեի ամփոփիչ բաց նիստի արդյունքում Սիսիան քաղաքը ճանաչվել է 2014 թվականի երիտասարդական մայրաքաղաք: Մրցույթի արդյունքներն ամփոփվել են կազմկոմիտեի կողմից՝ փորձագիտական գնահատման և առցանց քվեարկության արդյունքների համադրմամբ⁹⁴: Մարտի 18-ին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի փոխնախարար Արսեն Քարամյանը Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանին հանդիսավոր պայմաններում հանձնեց տարվա երիտասարդական մայրաքաղաքի խորհրդանշական բանալին⁹⁵:

2014 թվականին վերանորոգման աշխատանքներ են կատարվել Լորի Համո Սահյանի և Գորիսի Ակսել Բակունցի տուն թանգարաններում:

Հունիսի 28-ին Արփենի գյուղում Հայրենիքի զարգացման նախաձեռնություն հիմնադրամի կողմից կազմակերպվել և անց է կացվել «Տարազի փառատոն»-ը: Մեկտեմբերի 5-ին Գյումրու «Հոկտեմբեր» կինոթատրոնում «Ոսկե Ծիրան» միջազգային կինոփառատոնի շրջանակներում կազմակերպվել է «Կինոէքսպրես Հայաստան-Վրաստան» ծրագրի հերթական միջոցառումը⁹⁶:

Ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ կազմակերպված փառատոնին հոգևոր երգի կատարումներով մասնակցել են Գյումրի, Արթիկ, Ախուրյան, Ագատան, Ամասիա համայնքների երաժշտական, արվեստի և հանրակրթական դպրոցների մանկական երգչախմբերը⁹⁷:

⁹¹ <http://www.kentron.tv/index.php/news/item/4714-news-05052014.html>:

⁹² <http://shamshyan.com/hy/article/2014/08/23/24131/>:

⁹³ <http://www.aravot.am/2014/08/23/490892/>:

⁹⁴ <http://gorispres.am/?p=1151>:

⁹⁵ <http://sisian.info/video.html>:

⁹⁶ <http://shirak.mtaes.am/files/docs/13611.pdf> , ՀՀ Շիրակի մարզի 2014 թվականի սոցիալ-տնտեսական իրավիճակի և մարզպետի գործունեության մասին տարեկան հաշվետվություն:

⁹⁷ Նույն տեղում:

«Գյումրու օր» տոնակատարությունը հետաձգվեց հոկտեմբերի 5-ից⁹⁸ 25-ը⁹⁹: Տոնակատարության ընթացում տեղի ունեցավ թիվ 6 երաժշտական դպրոցի Միմֆո-ջազ նվագախմբի համերգը, իսկ բոլոր քաղաքային թանգարաններում իրականացվեցին բաց դռների օրեր:

Աղավաճող գյուղական համայնքի մանկապարտեզի շենքի շինարարությունը ընթացքի մեջ է, այն ամբողջությամբ վերակառուցվում է¹⁰⁰:

2014 թվականին Հրազդանի դրամատիկական և Արովյանի մշակույթի տան թատրոնները ներկայացրել են նոր բեմադրություններ: «Կինոաշուն» ծրագրի շրջանակներում Հրազդան, Չարենցավան և Եղվարդ համայնքներում կազմակերպվել են հայկական հին ու նոր ֆիլմերի դիտումներ¹⁰¹:

Ռ-Գ Կրասնոդարի երկրամասի Նովոռոսիյսկ և ՀՀ Գավառ քաղաքների միջև կնքվել է համագործակցության հուշագիր¹⁰²:

Գավառ քաղաքում Գեղարքունյաց թեմի աջակցությամբ նշվել է «Համբարձման տոնը», իսկ Սևան և Մարտունի քաղաքներում անցկացվել են մասսայական թատերականացված տոնախմբություններ¹⁰³:

Առողջապահություն

Ոչ պետական միջոցներով առողջապահության ոլորտում 2014 թվականին իրականացվել են վերանորոգման աշխատանքներ՝ Համաշխարհային բանկի վարկային ծրագրով ՀՀ առողջապահության նախարարության ծրագրերի իրականացման գրասենյակի համագործակցությամբ և գյուղապետարանների 5% համաֆինանսավորմամբ: Կառուցվել և շահագործման է հանձնվել «Քաղցրաշենի ԱԱՊԿ» ՓԲԸ-ի տիպային շենքը շուրջ 46 մլն. ընդհանուր գումարով: Դուկասավան համայնքի միջոցներով կառուցվել է Դուկասավան գյուղի բուժամանկաբարձական կետը՝ 35 մլն. դրամ արժողությամբ¹⁰⁴:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ֆինանսավորմամբ 2014 թվականին վերանորոգման աշխատանքներ են կատարվել Սիսիանի, Բռնակոթի, Շինուհայրի և Անգեղակոթի առողջապահական հաստատություններում¹⁰⁵:

Փարպի համայնքում համայնքի ղեկավարի 2014 թվականի նոյեմբերի 18-ի N 313 որոշմամբ «Փարպիի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկե-

⁹⁸ <http://galatv.am/hy/news/ys-tarvany-aravel-tpavorich-ncho-w-e-ushanum-yumru-or-y/>:

⁹⁹ <http://www.asparez.am/gyumri-hy/gyumri-da/>:

¹⁰⁰ <http://kotayk.mtaes.am/files/docs/14323.pdf>, ՀՀ Կոտայքի մարզպետի 2014 թվականի հաշվետվությունը մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերաբերյալ:

¹⁰¹ Նույն տեղում:

¹⁰² <http://gegharkunik.mtaes.am/files/docs/14322.pdf> ՀՀ Գեղարքունիաի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի հաշվետվությունը 2013 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

¹⁰³ Նույն տեղում:

¹⁰⁴ <http://ararat.mtaes.am/reports/>, ՀՀ Արարատ մարզի 2014 թվականի սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին հաշվետվություն:

¹⁰⁵ <http://syunik.mtaes.am/files/docs/13186.pdf>, ՀՀ Սյունիքի մարզպետի 2014 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվություն:

րությունը (ՓԲԸ) վերակազմավորվեց որպես «Փարպիի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (ՀՈԱԿ): ՓԲԸ-ի կողմից օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող շենքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվեց ՀՈԱԿ-ին՝ համապատասխան նպատակային նշանակությամբ օգտագործելու պայմանով և հիմք ընդունելով Փարպի համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագիրը: Իսկ «Փարպիի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ-ի կողմից օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ բացառությամբ շենքի, սեփականության իրավունքով հանձնվեց ՀՈԱԿ-ին, որպես իրավահաջորդի՝ համաձայն Փարպի համայնքի ավագանու կողմից 2014թվականի օգոստոսի 15-ին N 77 որոշմամբ հաստատված փոխանցման ակտի¹⁰⁶:

Նմանատիպ սեփականության իրավունքի փոփոխություն էր տեղի ունցել նաև Օշական համայնքում նոյեմբերի 17-ին, որտեղ «Օշականի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմավորվել էր որպես «Օշականի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրական կազմակերպության¹⁰⁷:

2014 թվականին ղեկտեմբերին Օձուն համայնքում «Օձունի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ-ն վերակազմավորվեց որպես «Օձունի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության: Ըստ համայնքի ավագանու համապատասխան որոշման, ընկերության կողմից օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող շենքերն ու շինություններն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվեցին ՀՈԱԿ-ին՝ դրանց նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմանով՝ Օձուն գյուղական համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրի հիման վրա: Իսկ ընկերության կողմից օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ բացառությամբ շենքերի և շինությունների, սեփականության իրավունքով հանձնվեց ՀՈԱԿ-ին՝ որպես իրավահաջորդ¹⁰⁸: Գուգարք համայնքը ՀՀ կառավարության 2014 թվականի ղեկտեմբերի 18-ի N 1434 - Ա որոշման համաձայն որպես նվիրատվություն ստացավ Գուգարք համայնքի ամբուլատորիան¹⁰⁹:

«Ֆրանսիա ՄԳՄ» կազմակերպության կողմից հիմնանորոգվել են Թթուջուր և Արտանիշ համայնքների բուժկետերը: Ավարտվել է նաև Վարդաձորի և Լիճքի ԱԱՊԿ-ների հիմնանորոգման աշխատանքները, իսկ Ծակքարի, Ակունքի և Լճափի ԱԱՊԿ-ները չունեն շենքային հարմարավետ պայմաններ¹¹⁰:

¹⁰⁶ <http://parpi.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=3369e5b0-4592-4750-9b28-452619701661#.VcCT7fmqpBc>:

¹⁰⁷ <http://oshakanhamaynq.am/CMIS/Pages/DocFlow/Default.aspx?nt=1&a=v&g=0566030c-fc2f-4d9e-999e-27a2971e29f6>:

¹⁰⁸ <http://www.odzun.am/Pages/DocFlow/Default.aspx?nt=1&a=v&g=cc97ed30-f15b-479d-92e1-1c38e4600ab7>:

¹⁰⁹ https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2014/12/14_1434.pdf:

¹¹⁰ <http://gegharkunik.mtaes.am/files/docs/14322.pdf> ՀՀ Գեղարքունիայի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի հաշվետվությունը 2013 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

Գերեզմանասների լուսանկարներ

2014 թվականի ընթացքում գերեզմանների կազմակերպման հարցը դեռևս մնում է արդիական: Առավել մտահոգիչ է գերեզմանների և գերեզմանատների կարգավիճակը համեմատաբար խոշոր քաղաքներում:

2014 թվականի սեպտեմբերի 22-ին Երևանի քաղաքապետը կայացրեց N3611-Ն որոշումը, որով սահմանվում է Երևան քաղաքում ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար վճարովի հիմունքներով հատկացվող հողատարածքի արժեքը: Ըստ այդ որոշման Երևան քաղաքում ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար վճարովի հիմունքներով հատկացվող հողատարածքի արժեքը սահմանվում է ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» N 1746-Ն որոշման համապատասխան: Գերեզմանի կազմակերպման համար տրամադրվող վճարովի հողատարածքի հատկացումն իրականացվում է ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշման 1-ին կետի «Է» ենթակետով սահմանված դրույթներով, իսկ հողատարածքի արժեքը վճարվում է Երևան համայնքի բյուջե: Այս որոշումը ուժի մեջ է մտել 2014 թվականի նոյեմբերի 3-ից¹¹¹:

Մակայն պետք է նկատել, որ Երևան քաղաքում վճարովի հիմունքներով հողերի օտարումը և ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար վճարովի հիմունքներով հատկացվող հողատարածքի արժեքը սահմանվում են մույն սկզբունքով՝ համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որոշմամբ սահմանված գների, որն արդարացված չէ¹¹²:

ՏԻՄ-երի կողմից համայնքային ծառայությունների մատուցման վճարներ սահմանելու իրավասությունը

2014 թվականի ընթացքում ՏԻՄ-երի կողմից վճարներ սահմանելու իրավասությունը պայմանավորված է հիմնականում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 2011 թվականին: Բացի վերը նշված իրավասությունից ՏԻՄ-երն իրավասու են վարձավճարներ սահմանել տարբեր ծառայությունների մատուցման համար, բայց նրանք հիմնականում վճարներ են սահմանում մախադպրոցական և արտադպրոցական համայնքապատկան կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց:

Երևան համայնքում 2014թ. ընթացքում համայնքային մանկապարտեզները շարունակել են գործել անվճար Երևան քաղաքի բնակիչների համար, իսկ Երևան համայնքի բնակիչ չհամարվող երեխաների համար՝ վճարովի: Պետք է նշել նաև, որ համայնքային մանկապարտեզներին զուգահեռ Երևան քաղաքում շարունակել են գործել մի շարք մասնավոր մանկապարտեզներ, որոնց վարձի սահմանումը չի

¹¹¹ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93346>:

մտնում ՏԻՄ-երի վճարներ սահմանելու իրավասության մեջ:

Գյումրու մանկապարտեզներում վարձավճարների չափը մինչ այժմ ընդհանուր չէ, այն տատանվում է 6000-8000 դրամի սահմաններում¹¹²:

Ալավերդի համայնքի ավագանին 2013 թվականի օգոստոսի 30-ին կայացրեց N 28-Ն որոշումը, որով 2014թ. Ալավերդի համայնքում ՏԻՄ-երի կողմից աղբահանություներ կազմակերպելու համար կենցաղային աղբի տեղափոխման վճար յուրաքանչյուր անձի հաշվով սահմանվեց ամսական 150 դրամ, իսկ ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա) ըստ ծավալի 1 մ³ աղբի համար 3 000 դրամ կամ

բ) ըստ զանգվածի 1 տոննա աղբի համար 10 000 դրամ:

Մրգաշեն համայնքի մանկապարտեզում 2014թ. համար վճար է սահմանվել 6500 դրամ¹¹³, իսկ Նոր Հաճնի ավագանին 2013 թվականի դեկտեմբերի 17 Ն-40 N որոշման համաձայն «Նոր Հաճնի քաղաքապետարանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում 2014թ. համար ծնողական վճարի դրույքաչափը սահմանեց ամսական 5000 դրամ¹¹⁴: Սպիտակի ավագանին 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N74 որոշմամբ որոշեց, որ «Սպիտակի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության խմբակներ հաճախող երեխաների համար ամսական վճարը մեկ երեխայի համար 2014թ հունվարի 1-ից սահմանել 2000 դրամ¹¹⁵:

Արարատ քաղաքին կից համայնքների բնակիչների մի մասը դիմել էր Արարատի քաղաքապետարան՝ խնդրելով թույլատրել իրենց երեխաներին հաճախելու Արարատ քաղաքի մանկապարտեզներ և արվեստի դպրոց: Ուստի Արարատ քաղաքի ավագանին 2014 թվականի սեպտեմբերի 9-ի N 33 որոշմամբ սահմանեց, որ 2014թ. սեպտեմբերի 1-ից Արարատ քաղաքի թիվ 1, թիվ 2 և թիվ 3 մանկապարտեզ ՀՈԱԿՆ-ներ հաճախող այլ համայնքների երեխաների համար սահմանել ծնողական վճար ամսական 8000 դրամ¹¹⁶, իսկ նույն մանկապարտեզ ՀՈԱԿ-ներ հաճախող Արարատ քաղաքի բնակիչների երեխաների համար համայնքի ավագանու 18.12.2013թ. թիվ 17-Ն որոշմամբ սահմանված ամսական 3500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ վճարը թողնվեց անփոփոխ:

2014թ. սեպտեմբերի 1-ից Արարատ քաղաքի «Գ. Սարյանի անվան միջնակարգ-մասնագիտական արվեստի դպրոց» ՀՈԱԿ հաճախող այլ համայնքների երեխաների համար սահմանվեց ծնողական տարեկան վճարներ հետևյալ չափերով¹¹⁷.

1. Դաշնամուրի և ջութակի բաժին՝ I – VII դասարանների համար - 85000դրամ.
2. Դաշնամուրի և ջութակի բաժին VIII - XI դասարանների համար - 95000դրամ.
3. Ակորդեոնի բաժին I – V դասարանների համար - 50000դրամ.
4. Նկարչական բաժին I — V դասարանների համար - 40000դրամ.
5. Պարի բաժին - 40000դրամ:

¹¹² <http://www.asparez.am/gyumri-hy/gyumri-kindergartens/>:

¹¹³ <http://mrgashen.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=56fe3e71-a00f-4c8a-ad90-83bc23f7780a>:

¹¹⁴ <http://municipality.hachn.am/Pages/DocFlow/default.aspx?nt=1&a=v&g=33910af1-24a7-402e-9655-0ea7fbf12217>:

¹¹⁵ <http://spitak.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=9081cb9d-b01f-4de5-b118-c4c5f0f7c58c>:

¹¹⁶ <http://araratcity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=f4298e7a-d1e2-48da-8b87-f95cb4abc283>:

¹¹⁷ Նույն տեղում:

Ջրվեժ համայնքի ավագանին 2013 թվականի նոյեմբերի 12 N 40-Ա որոշմամբ հաստատեց, որ «Ջրվեժի մանկական երաժշտական դպրոց» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ հաճախող երեխաների համար 2014թ. ընթացքում ուսման վճարը սահմանվում է 1000 դրամ, եթե երեխայի ծնողները (ծնողը) կամ նրա օրինական ներկայացուցիչները (ներկայացուցիչը) հաշվառված են Ջրվեժ համայնքում, իսկ եթե երեխայի ծնողները հաշվառված չեն համայնքում, ապա այդ ՀՈԱԿ հաճախող երեխաների ուսման վճար սահմանվում է 5000 դրամ¹¹⁸:

7.2 Համայնքային ծառայությունների կառավարում

2014 թվականի ընթացքում ՀՀ-ում համայնքների կողմից հանրային ծառայությունների մատուցման համար կատարվող ծախսերն աճել են 9.9 %-ով` 111,444 մլն.-ից հասնելով 122,583 մլն. դրամի, չնայած այն հանգամանքին, որ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը ևս աճել են 2013 թվականի համեմատությամբ (5.9 %-ով): 2014 թվականին ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր համայնքային ծառայությունների գծով ծախսերի հանրագումարի մեջ նվազել է 2013 թվականի նույն ցուցանիշի համեմատ, որը դրական արդյունք է: Այն 2014 թվականին կազմել է 21.2 %, իսկ 2013 թվականին նույն ցուցանիշը եղել է 22%:

2014թ. ընթացքում համայնքների կողմից մատուցվող ծառայություններում ևս շարունակում են մեծ տեսակարար կշիռ կազմել կրթության ծախսերը, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերը և տրանսպորտի ծախսերը (աղյուսակ 22): Վերջինս պայմանավորված է հիմնականում Երևան քաղաքի հանրային տրանսպորտի ծախսերի մեծությամբ: Տրանսպորտային ծախսերի 87.9%-ը բաժին է ընկնում Երևան քաղաքին, մինչդեռ մնացած համայնքների բոլոր տրանսպորտային ծախսերը միասին կազմում են 12.1%: Կրթության ծախսերի մեջ միայն Երևան քաղաքի կրթության ծախսերը կազմում են ամբողջ կրթության ծախսերի 67%-ը, սակայն պետք է նշել, որ այդ ծախսերի մեջ ներառված է նաև Երևան քաղաքում կրթության գծով պատվիրակված լիազորությունների համար հատկացվող միջոցները: 2014 թվականի ընթացքում համայնքների կողմից շրջակա միջավայրի պաշտպանության համար ծախսվել է 11.043 մլն. դրամ, որի ավելի քան 65%-ը կատարվել է Երևան քաղաքում:

Համայնքային հանրային ծառայությունների բոլոր ծախսերի և ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի հարաբերակցությունը բոլոր համայնքների առումով կազմում է 3.72, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը կազմել է 3.54, որը դրական միտում է: Նույն ցուցանիշը միայն Երևան քաղաքի համար կազմում է 9.72, այսինքն կարելի է փաստել, որ Երևան քաղաքում բյուջեի մոտավորապես 1/10-րդ մասն է ծախսվում ապարատի պահպանման համար,

¹¹⁸ <http://www.jrvezh.am/am/seniors/decision/149>:

մինչդեռ մնացած համայնքներում՝ առանց Երևան քաղաքի, այդ ցուցանիշը կազմում է 1.52, որը նշանակում է, որ համայնքի վարչական սպարատի մեկ միավոր կատարված ծախսի դիմաց համայնքի աշխատակազմը մատուցում է 1.52 միավոր համայնքային ծառայություն, որը ցանկալի ցուցանիշ չէ:

Աղյուսակ 22. Համայնքների բյուջեներում ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների ծախսերի հարաբերակցությունը (2014թ.), հազար դրամ

2014 թվական							
	Ծախսերը	Ընդամենը համայնքներ ¹¹⁹		Երևան քաղաք ¹²⁰		Ընդամենը քաղաքային և գյուղական համայնքներ, առանց Երևան քաղաքի	
		Գումար	%	Գումար	%	Գումար	%
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	25,976,680.86	21.2%	6,978,607.5	9.3%	18,998,073.36	39.7%
2	Տրանսպորտ	24,239,336.00	19.8%	21,314,923.8	28.5%	2,924,412.20	6.1%
3	Կապ	0.00	0.0%	0.0	0.0%	0.00	0.0%
4	Շրջակա միջավայրի պաշտպանություն	11,043,866.89	9.0%	7,248,431.3	9.7%	3,795,435.59	7.9%
5	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	14,475,909.05	11.8%	10,263,409.3	13.7%	4,212,499.75	8.8%
6	Առողջապահություն	158,530.16	0.1%	121,999.3	0.2%	36,530.86	0.1%
7	Հանգիստ մշակույթ և կրոն	8,030,628.50	6.6%	3,436,443.8	4.6%	4,594,184.70	9.6%
8	Կրթություն	34,636,593.13	28.3%	23,219,482.0	31.0%	11,417,111.13	23.9%
9	Մոցիալական պաշտպանություն	4,021,334.59	3.3%	2,198,899.5	2.9%	1,822,435.09	3.8%
10	Ընդամենը ծախսեր	122,582,879.18	100.0%	74,782,196.5	100.0%	47,800,682.68	100%
11	Հանրային ծառայությունների ծախսերի և ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի հարաբերակցությունը		3.72		9.72		1.52

¹¹⁹ <http://minfin.am/index.php?cat=78&lang=1>:

¹²⁰ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=96507>, ՀՀ Երևան քաղաքի ավագանի, Որոշում N 301-Ն, Երևան քաղաքի 2014 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:

Եզրակացություններ և առաջարկություններ

Ինչպես նախորդ մի քանի տարիներին, այնպես էլ 2014 թվականին Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգում էական առաջընթաց չի գրանցվել:

2005թ. սահմանադրական փոփոխություններով նախատեսված օրենսդրական փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել: Տարվա ընթացքում այդպես էլ չընդունվեցին համայնքների միացման կամ բաժանման սկզբունքների, կարգի և նոր ձևավորված համայնքներում ՏԻՄ-երի ընտրության ժամկետների սահմանման, միջհամայնքային միավորումների ձևավորման, համայնքային արժեթղթերի թողարկման և հյուրանոցային հարկի վերաբերյալ օրենքներ կամ օրենսդրական դրույթներ:

Առկա բոլոր պետական ծրագրային փաստաթղթերը (ՀՀ կառավարության ծրագիր, ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր) պարունակում են գրեթե նույն դրույթները և հիմնականում արտացոլում են սահմանադրական փոփոխությունների օրենսդրական պահանջների ապահովումը:

2014-ին պահպանվել է ՀՀ օրենսդրությունում առկա թերությունը, այն է՝ տեղական հարկեր համարված գույքահարկի և հողի հարկի դրույքաչափերը շարունակել են սահմանված մնալ օրենքով, դրանց սահմանման իրավունքը, օրենքով նախատեսված շրջանակներում, չի վերապահվել ՏԻՄ-երին՝ ինչպես պահանջում է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան (հոդված 9.3):

2014-ին Հայաստանի վարչատարածքային բաժանման մեջ որևէ փոփոխություն չի կատարվել: Միայն ընտրվել են 14 պիլոտային համայնքների փնջեր, որտեղ կատարվել են ուսումնասիրություններ և նախատեսվում է, որ 2015-ին դրանք կխոշորացվեն:

Տեղական ինքնակառավարման միավորները՝ համայնքները, շարունակում են մնալ խիստ մասնատված և թույլ կարողություններով: Միջհամայնքային համագործակցության զարգացման առումով փոփոխություններ չեն գրանցվել: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2014-ին միջհամայնքային միավորումներ չեն ստեղծվել:

Համայնքների ֆինանսական անկախության մակարդակը շարունակում է մնալ ցածր, իսկ սեփականությունը՝ անբավարար և հնացած: 2014 թվականին ևս, ինչպես նախորդ տարիներին, պետական բյուջեից ամրագրվող հարկատեսակներից և պարտադիր վճարներից համայնքներին մասհանումներ չեն կատարվել:

Ընդհանուր առմամբ, համայնքները դեռևս շատ հեռու են վարկային շուկա մուտք գործելու հնարավորությունից: 2014թ. ևս համայնքները չեն թողարկել պարտատոմսեր:

2014թ. անփոփոխ են մնացել ՏԻՄ-երի ընտրությունների անցկացման ձևը և կարգը: Ինչպես և նախորդ տարիներին, 2014-ին ևս ՏԻՄ-երի ընտրությունները կատարվել են բավականին թույլ մրցակցային միջավայրում, շատ դեպքերում

նույնիսկ վերջինիս բացակայության պայմաններում: Համայնքների ղեկավարների մեծամասնությունը դարձյալ Հայաստանի հանրապետական կուսակցության ներկայացուցիչներ են: Ավելացել են ավագանու անդամի թեկնածուի առաջադրման սահմանափակումները:

2014թ. ՏԻՄ-երին վերապահված իրավասությունները մնացել են անփոփոխ: Փոփոխվել են լիազորությունները գյուղատնտեսության, աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառներում, ինչպես նաև ավելացել են նոր՝ անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառում լիազորությունները: Չեն ընդունվել պարտադիր լիազորությունների իրականացման կարգեր: Համայնքներում դեռևս առկա են խախտումների և պաշտոնական դիրքի չարաշահումների դեպքեր: Դեռևս ոչ բոլոր համայնքներում են ընդունվել ավագանու կանոնակարգեր:

Հայաստանի ՁԼՄ-ները, ինչպես և նախորդ տարիներին, հիմնականում տեղաբաշխված են մայրաքաղաքում: 2014թ. անփոփոխ են մնացել Ֆրիդոմ Հաուսի Տեղական ժողովրդավարական կառավարման գնահատականը: Որոշակի աշխատանքներ են կատարվել տեղական ինքնակառավարմանը բնակչության և քաղաքացիական հասարակության մասնակցությունն ապահովելու և բարձրացնելու ուղղությամբ: 2014-ին համայնքներին բաժին չի հասել գաղտնիության և վատ աշխատանքի խորհրդանիշ համարվող «Ժանգոտ կողպեք» մրցանակը: ՏԻՄ-երի ներկայացուցիչները շարունակել են ընդգրկվել «սև ցուցակներում»: 2014-ին զգալիորեն ավելացել է պաշտոնական ինտերնետային կայքեր ունեցող համայնքների թիվը: Համայնքներում սկսել է կիրառվել կարճ հաղորդագրությունների միջոցով որոշումների կայացման մեխանիզմը:

